

49 NOV 20

13


Լ. ԱՆԴՐԵԵՒ

Dyfol.
Շ. Տ. Վ. 4. 6.

== Ե Ո Ք ==

== ԿԱԽՈՒԱԾՆԵՐԻ ==

== ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ ==




1. 71
57

A PM

3-3304a 17 JUL 2006

3-3304a

Հրատ. Ա. ՄԵԴՅԱՆԻ




804

891.71

ԼԿ-57

ԼԵՈՆԻԴ ԱՆԴՐԷՏԻ



ԵՕԹ ԿԱԽՈՒԱԾՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թարգմանցին

Յ. Բ. Կ Ա. Խ.



21173

Ե Ր Ե Ի Ա Ն

1909 թ.

1. ԺԱՄԸ ՄԷԿԻՆ, ՁԵՐԴ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ.

Որովհետև մինիստրը մի շատ գէր մարդ էր, և երկիւղ էին կրում, որ նա կարող է հեշտութեամբ կաթուած ստանալ, ամենայն զգուշութեամբ հաղորդեցին, որ նրա կեանքի դէմ լուրջ մահափորձ է պատրաստուում: Բայց երբ նկատեցին, որ մինիստրը անվրդով և նոյն իսկ ժպիտը երեսին ընդունեց այդ լուրը, յայտնեցին նաև մանրամասնութիւնները: Մահափորձը պիտի կատարուի հետևեալ օրը, երբ նա դուրս է գալու տանից զեկուցման համար. մի քանի տեռօրիստներ, որոնց արդէն մատնել էր մի պրովոկատոր և որոնք այժմ գտնուում են լրտեսների անխոնջ հսկողութեան տակ, ցերեկուայ ժամը մէկին ումբերով ու ատրճանակներով պիտի հաւաքուին տան մուտքի մօտ և սպասեն նրա դուրս գալուն: Հէնց այստեղ նրանց կըբռնեն:

— Կացէք, — զարմացաւ մինիստրը. — բայց նրանք որտեղից գիտեն, որ ես վաղը ժամը մէկին պիտի գնամ զեկուցում տալու, մինչ ես այդ մասին իմացայ երեք օր առաջ:

Գաղտնի ոստիկանութեան կառավարիչը շուարած ձեռքերը միայն շարժեց:

— Սյո, ճիշտ ժամը մէկին, ձերդ գերազանցութիւն: Մասամբ զարմանք արտայայտելով, մասամբ խրախուսելով այդքան աչալուրջ ոստիկանութեան գործը, մինիստրը գլուխը շարժեց և մռայլ ժպտաց մուգ, հաստ շրթունքներով: Եւ նոյն ժպիտը երեսին, լուռ, չկամենալով խանգարել ոստիկանութեան և ասպագայում, նա վեր կացաւ



39831-63

գնաց գիշերելու մի ինչ որ օտար հիւրընկալ պալատում: Հեռացրին նաև նրա կնոջն ու երկու երեխաներին այդ վտանգաւոր տանից, որի մօտ հաւաքուելու են վաղը ումբաձիգները:

Գանի դեռ օտար պալատում վառ էին կրակները, և ծանօթ, հաճելի դէմքերը սղջունում, ժպտում ու վրդովւում էին, սանոփնիկը մի ինչ որ գրգիւ էր գգում, կարծես նրան տուել էին, կամ շուտով պիտի տային ինչ որ մեծ և անսպասելի պարզև: Բայց մարդիկ ցրուեցան, կրակները մարեցին և հաստ ապակիների միջից ելեկտրական լապտերների աղօտ ու ժանեկաձև շողքը ընկաւ առաստաղի ու պատերի վրայ: Եւ այդ օտար շողքը, որ փողօցից ներս էր ընկել նկարներով ու արձաններով զարդարուն, խաղաղ ցոււնը, ինքն էլ հանգիստ ու անորոշ, զարթեցնում էր մի յուզիչ միտք, թէ գուր են փականքները, հսկողութիւնն ու պատերը: Եւ այն գիշերը օտար ննջարանի մենակութեան ու խաղաղութեան մէջ սանովնիկը մի անտանելի սարսափ գգաց:

Նրա երիկամունքները ինչ-որ փնտտուել էին. և ամեն անգամ երբ նա խիստ յուզւում էր, երեսը, ձեռներն ու ոտները լցւում էին ջրով և ուռչում, այնպէս որ նա աւելի խոշոր, հաստ և մարմնեղ էր դառնում: Եւ այժմ մահճակալի ճնշուած գոպանակների վրայ սարի պէս բարձրանում էին նրա ուռած մտերք. հիւանդին յատուկ վշտով նա գգում էր իր ուռած և կարծես թէ օտար դէմքը և անդադար մտածում էր այն անողորմ փիճակի մասին, որ մարդիկ պատրաստում էին իւր համար: Նա մէկ-մէկ յիշեց մօտիկ անցեալում կատարուած այն բոլոր սարսափելի դէպքերը, երբ իւր դասի և նոյնիսկ աւելի բարձրաստիճան մարդկանց վրայ սուսեր էին նետում և սուսերը կտոր-կտոր էին անում նրանց մարմինը, ցրում էին ուղեղը աղիւսէ կեղտոտ պատերին, գուրս էին թափում ա-

տամները բներից: Եւ այդ յիշողութիւնների ազդեցութեան տակ նրան թւում էր, որ մահճակալի վրայ փռուած իր սեփական, գէր, հիւանդ մարմինը իրենը չէ և արդէն գգում է պայթիւնի դիւային ոյժը: Եւ թւում էր, կարծես ուսերի մօտ ձեռքերը անշատոււմ են մարմնից, ատամները թափւում, ուղեղը կտոր-կտոր լինում, կարծես արդէն ինքը մահացել է, և փայտացած ոտների մասները վեր են ցցուել: Աշխատում էր շարունակ շարժուել, որ վերմակը խշխշայ, և մահճակալի գոպանակները աղմկեն, աշխատում էր ամուր շնչել ու հազալ, որ ոչնչով չնմանուի դիակի: Եւ որպէսզի ցոյց տայ, թէ ինքը դեռ կենդանի է՝ ինչպէս ամենքը, թէ բնաւ չի մեռել, թէ մահը դեռ հեռու է,— ննջարանի մենակութեան ու լուսութեան մէջ իւր հաստ, բարձր ձայնով կրկնում էր.

— Ապրիք, ապրիք, ապրիք:

Այս խօսքերով նա գովում էր լրտեսներին, օստիկաններին ու զինւորներին, այն ամենքին, որոնք նրա կեանքն են պահպանում և իր ժամանակին ու այնքան յաջող կերպով կարողացան սպանութեան առաջն առնել: Բայց որքան էլ շարժոււմ, որքան էլ գովում էր, որքան էլ աշխատում էր բռնազրօսիկ, կեղծ ժպիտով ծաղրել տխմար, անշնորհք տեղորիսաներին,— նա այնուամենայնիւ չէր կարողանում հաւատալ, թէ ինքը փրկուած է, թէ կեանքը այդպէս յանկարծ, միանգամից չի բաժանուի իրենից: Մահը, որ պատրաստել էին նրա համար մարդիկ և որը գոյութիւն ունէր նրանց մտքերի ու դիտաւորութիւնների մէջ միայն, թւում էր, թէ արդէն կանգնած է իւր առաջ, և դեռ պիտի կանգնի, և չի հեռանայ, քանի դեռ չեն բռնել նրանց, չեն խլել ուսմբերը և չեն ձգել ամրակուռ բանտ: Այ, այն անկիւնում կանգնած է նա և չի հեռանում— չի կարող հեռանալ, որպէս մի հլու զինւոր, որ ինչ-որ մէկի ցանկութեամբ և հրամանով պահպան է

կարգուած:

— Ժամը մէկին, ձերդ գերագանցութիւն, — հնչում էին այդ խօսքերը, մերթ ծաղր, մերթ զայրոյթ, մերթ բութ յամառութիւն արտայայտելով: Կարծես թէ ննջաբանում գրուած էին հարիւրաւոր պրամաֆօններ, և նոքա բոլորը մէկը միւսի յետեից մեքենայի անմիտ եռանդով ճշում էին պատուիրուած խօսքերը:

— Ժամը մէկին, ձերդ գերագանցութիւն:

Եւ այդ վաղուան «ժամի մէկը», որ դեռ քիչ առաջ չէր զանազանում միւս ժամերից, և որ ոսկէ ժամացոյցի սլաքի դանդաղ շարժում էր միայն, յանկարծ մի չարագուշակ համոզմունքի ոյժ ստացաւ, դուրս թռաւ ցիֆերբլատից, սկսեց առանձին ապրել, ձգուեց ու մի հսկայական սև սիւն դարձաւ, որ երկու կտոր էր անում նրա կեանքը: Կարծես թէ բացի այդ ժամից ուրիշ ոչ մի ժամ գոյութիւն չունէր, այլ միայն նա՝ գոռոզ և ինքնահաւան՝ մի ինչ որ առանձին գոյութեան իրաւունք ունէր:

— Է՛, ի՛նչ ես ուզում, — բարկացած հարցրեց մի-նիստըրը առամների արանքից:

Գրամոֆօնները գոռում էին:

— Ժամը մէկին, ձերդ գերագանցութիւն. — ու սև սիւնը ժպտում ու ողջունում էր: Կրճատելով առամները՝ մի-նիստըրը գլուխը բարձրացրեց, նստեց անկողնու մէջ ու երեսը ծածկեց ձեռքերով — այդ զգուելի գիշերը նա ուղղակի չէր կարողանում քնել:

Եւ մինչ նա փափուկ, անուշահոտ ձեռքերով երեսը սեղմած նստել էր անկողնու մէջ, զարհուրելի պարզութեամբ սրտակերացաւ նրա առաջ վաղուան օրը, երբ նա առաւօտեան վեր կը կենար ոչինչ չիմանալով, յետոյ կը խմէր սուրճ, ոչինչ չիմանալով, յետոյ կը հագնուէր նախասենեակում: Եւ ոչ նա, ոչ մուշտակ բռնող շվէյցարը, ոչ սուրճ մատուցանող ծառան, չէին իմանայ, որ միան-

գամայն իզուր է սուրճ խմել, մուշտակ հագնել, երբ մի քանի վայրկեանից յետոյ այդ ամենը — և՛ մուշտակը, և՛ նրա մարմինը, և՛ խմած սուրճը կ'ոչնչանայ պայթիւնից, կը խլուի մահուան ձեռքով: Ահա շվէյցարը բաց է անում ապակեայ դուռը... Եւ նա, այդ մեզմ ու բարեսիրտ շվէյցարը — գինւորի կապոյտ աչքերով ու բազմաթիւ շքանշաններով — նա ինքը իր ձեռքով բաց է անում այդ սարսափելի դուռը, բաց է անում, որովհետև ոչինչ չգիտէ: Ամենքը ժպտում են, որովհետև ոչինչ չգիտեն:

— Օհօ, — յանկարծ բացականչեց նա և ձեռքերը կամաց հեռացրեց երեսից: Եւ նայելով իր առաջ դէպի մութ հեռուն մի սևեռուն, սառած հայեացքով, նոյնպէս կամաց ձեռքը երկարացրեց, շօշափելով գտաւ եղջիւրիկը և լուսաւորեց սենեակը: Ապա վեր կացաւ և առանց ասնամանիների, բորիկ սկսեց շրջել գորգի վրայ օտար, անծանօթ ննջարանում. գտաւ պատին կպցրած յապտերի եղջիւրիկն էլ և վառեց: Այժմ արդէն լոյս էր և հաճելի, և միայն ջանգուած անկողինն ու յատակին ընկած վերմակը վկայում էին մի ինչ որ դեռ ոչ բոլորովին անցած սարսափի մասին:

Միայն գիշերուայ սպիտակեղէնը հագին, անհանգիստ շարժումներից խճճուած միրուքով, բարկայկոտ աչքերով մի-նիստըրը նման էր այն բարկացկոտ ծերունուն, որ տանջւում է անքնութիւնից և ծանր շնչարգելութիւնից: Կարծես նրան մերկացրել էր մահը, որ նիւթում էին նրա համար մարդիկ, խլել էր նրան շրջապատող փառքից ու պերճութիւնից — և դժուար էր հաւատալ, որ նա այն ազգեցիկ իշխանաւորն է, որ այդ նրա մարմինը, այդ սովորական, հասարակ մարդկային մարմինը, պիտ ոչնչանար հրէշային պայթիւնի բոցերի և որոտի մէջ: Առանց հագնելու և առանց ցուրտ զգալու, նա նստեց առաջին պատահած բազկաթոռին, խճճուած միրուքը յենեց ձեռքերին և խոր ու անվրդով մտախօհութեան մէջ, աչքերը սևեռեց օտար,

հախշուն առաստաղին:

Ահա թէ բանն ինչումն է: Ահա թէ ինչու նա այնքան բարկացաւ և այնքան յուզուեց: Ահա թէ ինչու մահը կանգնել է անկիւնում և չի հեռանում ու չի կարող հեռանալ:

— Տխմարներ, — ասաց նա ծանրակշիռ ու արհամարհական շեշտով:

— Տխմարներ, — կրկնեց նա աւելի բարձր և փոքր ինչ զլուխը ծոց գէպի դուռը, որպէսզի լսեն նրանք, ում ուղղուած էին այդ խօսքերը: Իսկ այդ խօսքերը ուղղուած էին նրանց, որոնց քիչ առաջ նա գովում էր, որոնք անտեղի ջանասիրութեամբ հաղորդեցին նրան պատրաստող մահափորձի բոլոր մանրամասնութիւնները:

— Ի՛նչ ի հարկէ, — մտածում էր նա այժմ. անսպասելի կերպով մի հաստատուն և սահուն միաք էր ծագել նրա գլխում, — ի հարկէ այժմ, երբ ինձ արդէն պատմել են, ես գիտեմ և սարսափում եմ, թէ չէ ես այն ժամանակ ոչինչ չէի գիտենայ և հանգիստ կը խմէի սուրճս: Իսկ յետոյ ի հարկէ մահը... Բայց մի՞թէ մահն այնքան սարսափելի է ինձ համար: Ահաւասիկ իմ երիկամունքները ցաւում են և ես պիտի մեռնեմ վերջ ի վերջոյ, բայց ինձ այդ չէ սարսափեցնում, որովհետև ոչինչ չգիտեմ: Իսկ այդ յիմարները ասացին՝ ժամը մէկին, ձերդ գերազանցութիւն: Եւ կարծում էին, յիմարներ, որ ես շատ պիտի ուրախանամ, մինչդեռ մահը կանգնեց անկիւնում և չի հեռանում: Չի հեռանում, որովհետև այդ իմ միտքն է: Սարսափելին մահը չէ այլ գալիք մահուան գիտակցութիւնը: Եւ իրօք, ուղղակի անհնարին կլինէր ապրել, եթէ մարդ ճիշտ ու որոշ գիտենար իր մահուան օրն ու ժամը: Իսկ այդ յիմարները նախազգուշացնում են՝ ժամը մէկին՝ ձերդ գերազանցութիւն:

Եւ նա մի հաճելի թեթևութիւն զգաց, կարծես թէ

մէկը նրան յայտնեց որ, բոլորովին անմահ է և երբէք չի մեռնի: Եւ դարձեալ զգալով, որ ինքն աւելի խելօք է և ուժեղ, քան այդ ախմարների հօտը, որ մի անմիտ յանդգնութեամբ աշխատում է թափանցել գալիք գաղտնիքների խորքը, ծեր, հիւանդ ու փորձուած մարդուն յատուկ ծանր մտքերով սկսեց խորհել անգիտութեան երանիւթեան մասին: Ոչ մի կենդանի էակի, ոչ մարդուն, ոչ գազանին չէ վիճակուած. գիտենալ իր մահուան օրն ու ժամը: Այ, վերջերս նա հիւանդ էր, և բժիշկները ասացին, թէ կը մեռնի, թող նա վերջին կարգադրութիւններն անէ, — բայց նա չհաւատաց և ճիշտ որ չմեռաւ: Իսկ երիտասարդ ժամանակ պատահեց, որ նա կեանքում խճճուեց և որոշեց ինքնասպանութիւն գործել: Ստրճանակն էլ պատրաստեց, նամակներն էլ գրեց, նոյն իսկ ժամը որոշեց — բայց ամենավերջին բոպէին յանկարծ փոշմանեց: Եւ միշտ էլ այդպէս է, հէնց ամենավերջին բոպէին կարող է մի բան փոխուել, կարող է մի անսպասելի պատահմունք առաջ գալ, և հէնց այդ պատճառով էլ, ոչ ոք չի կարող ասել, թէ երբ ինքը կը մեռնի:

«Ժամը մէկին, ձերդ գերազանցութիւն» — ասացին նրան այդ բարեբիրա էշերը և թէև ասացին միայն այն պատճառով, որ արդէն մահուան առաջն առել էին, բայց այդ մահուան հնարաւոր ժամի լոկ գիտակցութիւնը սարսափով համակեց նրան: Շատ հաւանական է, որ երբևիցէ նրան կսպանեն, բայց ոչ վաղը — ոչ վաղը — և նա այժմ կարող է քնել հանգիստ, որպէս մի անմահ: Տխմարներ, նոքա չգիտէին, թէ ինչպիսի մեծ օրէնք խախտեցին, ինչպիսի անդունդ բաց արին, երբ իրանց այդ ապուշ հոգատարութեամբ յայտնեցին. «Ժամը մէկին, ձերդ գերազանցութիւն»:

— Ո՛չ, ոչ թէ ժամը մէկին, ձերդ գերազանցութիւն, այլ յայտնի չէ, թէ երբ: Յայտնի չէ, երբ: Ի՞նչ:

— Ոչինչ, — պատասխանեց լուռ թիւնը: — Ոչինչ:

— Չէ, դու ինչ որ բան ես ասում:

— Ոչինչ, — դատարկ բաներ: Ես ասում եմ՝ վաղը՝ ժամը մէկին:

Եւ յանկարծ մի սարսափելի թախիժ զգաց իր սրբտում, երբ հասկացաւ, որ այսուհետեւ և ոչ քուն պիտի ունենայ, ոչ դադար և ոչ ուրախութիւն, քանի դեռ չէ անցել այդ սև, նզովեալ ու ցիֆերբլատից դուրս խլուած ժամը: Կայ մի բան, որ չպիտի գիտենայ և ոչ մի կենդանի էակ, և որի գիտակցութեան լոկ ստուերն է, որ այժմ կանգնել էր այնտեղ անկիւնում, և այդ բաւական էր, որ մթազնէր լոյսը և համակէր մարդուն սարսափի անթափանց խաւարով: Մի անգամ զարթել էր նրա մէջ մահուան սարսափը և տարածուել մարմնի բոլոր մասերում, թափանցել ոսկորների մէջ և այժմ քաշում էր գունատ գլուխը մարմնի բոլոր ծակոտիներէց:

Այլևս ոչ թէ վաղուան մարդասպաններից էր վախենում նա — նորա անհետացել, մոռացուել, խառնուել էին այն թշնամական մարդկանց և երևոյթների խմբի հետ, որ շրջապատում էին նրա մարդկային կեանքը, այլ մի ուրիշ բանից, որ պիտի գար յանկարծ ու անխուսափելի կերպով վախենում էր կաթուածից, սրտի պայթիւնից, մի ինչ որ բարակ յիմար օտրտայից, որ յանկարծ չի դիմանայ արեան թափին ու կը պատուռի, ինչպէս ամուր ձգուած ձեռնոցը փամփրիկ մասնների վրայ:

Եւ սարսափելի էր թւում կարճ, հաստ պարանոցը և այդ անտանելի, լարժուն ու կարճ մասները, որ լիքն էին կարծես թէ մահացուցիչ հեղուկով: Եւ եթէ քիչ առաջ, մթութեան մէջ նա պիտի շարժուէր, որ չնամանուէր մեռած մարդու, այժմ այդ պայծառ, սառն-թշնամական ու սարսափելի լոյսի մէջ, թւում էր սոսկալի, նոյն իսկ անհնարին շարժուել, ծխախոտ վերցնելու կամ զանգահարե-

լու համար: Ձղերը լարում էին: Եւ իւրաքանչիւր ջիղը նման էր դուրս ծռուած ու ամուր ձգուած երկաթեայ մի թելի, որի ծայրին գանուում է մի փոքրիկ գլուխ խենթօրէն չռած, սարսափալից աչքերով, ջղայնօրէն բաց, խեղդող ու պապանձուած բերանով: Շնչել չէր լինում:

Եւ յանկարծ մթնում, փոշու և սարգոստայնի միջից առաստաղի տակ մի ինչ որ տեղ հնչեց ելեկտրական զանգը, մետաղէ փոքրիկ լեզուակը ջղաձգօրէն ու սարսափով զարկում էր հնչող բաժակին և նորից դողդողում մի անընդհատ սարսափով ու դողանջով: Այդ իր սենեակից զանգահարում էր նորին գերազանցութիւնը:

Ներս վազեցին մարդիկ: Տեղ-տեղ ջահերի ու պատերի վրայ վառուեցին մի քանի ճրագներ, — որ թէև քիչ էին լուսաւորութեան համար, բայց բաւական, որ ստուերներ երևային: Եւ նորա երևացին ամենուրեք, կանգնեցին անկիւններում, ձգուեցին առաստաղի վրայ. երբեալով կը պան բարձրութիւններին և փոռեցան պատերի վրայ. և զժուար էր հասկանալ, թէ ուր էին առաջ այդ բոլոր անթիւ ճիւղաղային, անձայն ստուերները, այդ անխօս հոգիները անխօս իրերի: Մի թաւ, դողդոջուն ձայն բարձրբարձր ինչ որ բան էր ասում: Յետոյ սկսեցին հեռախօսով բժշկին կանչել: Սանոֆսիկը իրեն վատ էր զգում: Կանչեցին նաև նորին գերազանցութեան կնոջ:

2. ՄԱՆ ԿԱՆԱՂԱՆԻ ՄԻՋՈՅՈՎ.

Այնպէս եղաւ, ինչպէս ենթադրում էր ոստիկանութիւնը: Չորս տեւօրիստներին, որոնցից երեքը տղամարդ էին, իսկ մէկը՝ կին և որոնք զինուած էին ոււմբերով, դժոխային մեքենաներով ու ատրճանակներով, բռնեցին

հէնց մուտքի մօտ. հինգերորդին՝ գաղտնի բնակարանի տանտիկնոջ գտան ու ձերբակալեցին տանը: Գտան նաև մեծ քանակութեամբ դինամիտ, կիսալից ռումբեր ու զէնք: Ձերբակալուածները բոլորն էլ երիտասարդ էին. տղամարդկանցից ամենամեծը քսանութ տարեկան էր, իսկ կանանցից ամենափոքրը՝ տասնեկին: Գտեցին հէնց նոյն բանտում, որտեղ տեղաւորեցին նրանց ձերբակալելուց յետոյ. գտեցին սուս ու փուս, արագ, ինչպէս ընդունուած էր առհասարակ այն անողոր ժամանակներում:

Դատի ժամանակ հինգն էլ հանդիստ, բայց շատ լուրջ և մտազբաղ էին. այնքան մեծ էր նրանց արհամարհանքը դէպի դատաւորները, որ ոչ ոք չէր ուզում աւելորդ ժպտով կամ կեղծ ուրախութեամբ ընդգծել իր անվեհերութիւնը: Նրանք հանգիստ էին ձիշտ այնքան, որքան հարկաւոր էր իրենց հողին ու մահուան մեծ խաւարը օտարի շար ու թշնամական հայեացքից պաշտպանելու համար: Երբեմն նոքա հաժարուում էին հարցերին պատասխանելուց, երբեմն պատասխանում էին — կարճ, պարզ ու որոշ, կարծես ոչ թէ դատաւորներին այլ վիճակագրութիւն կազմողներին էին տալիս այդ պատասխանները ինչ որ ազիւսակներ լրացնելու համար: Երեքը՝ մի կին և երկու տղամարդ յայտնեցին իրանց իսկական անունները, երկուսը հրաժարուեցան և այդպէս էլ անյայտ մնացին դատաւորների համար: Եւ առհասարակ ամբողջ դատավարութեան նրանք վերաբերւում էին այն քողարկուած մեղմ հետաքրքրութեամբ, որ յատուկ է այն մարդկանց, որոնք կամ շատ հիւանդ են, կամ տարուած են մի գերագոյն մտքով: Երբեմն յանկարծ գլուխները բարձրացնում, որսում էին համեմատաբար աւելի հետաքրքիր մի խօսք — և էլի շարունակում էին մտածել հէնց այնտեղից, որտեղ կանգ էր առել նրանց միաբը:

Գատաւորներին մօտիկ առաջին տեղում նստած էր

իր անունը յայտնողներից մէկը՝ Սերգէյ Գոլովինը, պաշտօնաթող գնդապետի որդի, ինքն էլ նախկին սպայ: Նա մի բոլորովին շահէլ, շիկահեր, թիկնեզ պատանի էր, այնքան առողջ, որ ոչ բանտը, ոչ անխուսափելի մահուան վտանգը չէին կարող խել նրա այտերի կարմրութիւնը և կապոյտ աչքերի երիտասարդական անփոյթ ու միամիտ արտայայտութիւնը: Նա շարունակ ամուր-ամուր քաշքշում էր իր շէկ ու խուճուճ միբուքը, որին դեռ չէր ընտելացել և, աչքերը կկոցելով ու բաց ու խուփ անելով, շարունակ նայում էր լուսամուտին:

Ձմեռուայ վերջն էր. թէև դեռ չէին անցել ձիւնախան փոթորիկները, սառնամանիքներն ու թխպօտ օրերը, բայց արդէն մօտիկ գարունը մէկ-մէկ ուղարկում էր իր բնականապէս պայծառ, տաք, արևոտ կամ նոյնիսկ միայն մի ժամ, բայց գարնանային մի այնպիսի ժամ, այնքան թարմ ու փայլուն, որ ճնճուկները փողոցում հրճուանքից կարծես խելագարւում էին և մարգիկ՝ կարծես թէ հարբում: Եւ այժմ փոշոտ, մի ամբողջ տարի չմաքրած վերին պատուհանից երևում էր տարօրինակ ու գեղեցիկ երկինքը: Առաջին հայեացքից նա լուում էր թուխ, գորշ-կաթնագոյն, իսկ երբ նայում էիր աւելի երկար, նկատելի էր լինում մի թեթև կապուտակութիւն, ապա հետգհետէ սկսում էր աւելի ու աւելի պայծառանալ: Եւ այն հանգամանքը, որ երկնակամարի անհունը չէր բացւում միանգամից, այլ կուսական ամօթխածութեամբ թագնւում եր թափանցիկ ամպերի քօղի տակ, դարձնում էր նրան գրաւիչ, ինչպէս այն կոյսը, որին սիրում ես: Եւ Սերգէյ Գոլովինը նայում էր երկնքին, քաշքշում էր միբուքը, երբեմն կկոցում էր երկար, թաւամազ արտանունքներով ծածկուած աչքերը և ինչ որ բանի մասին մտածում էր: Մի անգամ նոյնիսկ նա արագ-արագ մատները շարժեց և միամտօրէն ճակատը կնճուեց մի ինչ որ

ուրախ բան յիշելով, բայց շուրջը նայեց ու հանգաւ, ինչպէս հանգչում է կայծը, երբ պատահմամբ ոտի տակ է ընկնում: Եւ համարեա վայրկենապէս կարմիր այտերը, առանց նոյնիսկ գունատուելու մի մեռելային կապտութիւն ստացան: Եւ նրա թաւ մազերը, ցաւազնօրէն տեղահան լինելով, ամուր կերպով սեղմուեցան գունատ մատների արանքում: Բայց գարնան և կեանքի բերկրանքը աւելի ուժեղ է— և մի քանի րոպէից յետոյ նախկին երիտասարդ, միամիտ դէմքը էլի ձգուեց դէպի գարնանային երկինքը:

Դէպի այնտեղ՝ երկինք էր նայում նաև երիտասարդ գունատ աղջիկը, որի ով լինելը յայտնի չէր, և որին անուանում էին Մուսիա: Նա Գոլովինից աւելի ջանել էր, բայց շնորհիւ իր լրջութեան ու սև, հպարտ աչքերին թըլում էր, թէ նա աւելի մեծ է: Միայն նուրբ ու քնքոյշ պարանոցը և նոյնքան նուրբ, կուսական ձեռքերը մատնում էին նրա հասակը. մէկ էլ այն անբացատրելին, որ հէնց ինքն երիտասարդութիւնն է և որ այնպէս մեկին հնչում էր նրա ձայնի մէջ, մաքուր ու ներդաշնակ, որպէս ճիշտ լարուած մի թանկագին նուագարան, հնչում էր իւրաքանչիւր հասարակ բառի, բացականչութեան մէջ, պարզելով նրա երաժշտական բովանդակութիւնը: Նա շատ դժգոյն էր, բայց ոչ մեռելային դժգունութեամբ, այլ մի առանձին, ջերմ սպիրտակութեամբ, այնպէս որ կարծեոթէ նրա ներսը մի հսկայական ուժեղ կրակ էր վառում, իսկ թափանցիկ մարմինը ցոլում էր, ինչպէս Սեվրի նուրբ յախճապակի: Նստել էր նա, համարեա առանց շարժուելու և միայն երբեմն մատների աննկատելի շարժումով շօշափում էր աջ ձեռքի միջամատի այն ակոսիկը, որ մնացել էր մի քանի օր առաջ հանուած մատանուց: Նա նայում էր երկնքին առանց գորովի և առանց քաղցր յիշողութիւնների, նայում էր միայն նրա համար, որ արքունա-

կան կեղտոտ դահլիճի մէջ կապուտակ երկնքի այն կտորը միակ գեղեցիկ, մաքուր ու ճշմարիտ տեղն էր և որ չէր քրքրում նրա ներքին աշխարհը:

Սերգէյ Գոլովինին դատաւորները խղճում էին, իսկ Մուսիային՝ առում:

Նոյնպէս անշարժ, մի քիչ գոռոզ դիրքով, ձեռքերը ծնկների մէջ դրած, նստել էր նրա հարևանը, որին անուանում էին Վերներ, բայց որի ով լինելը անյայտ մնաց: Եթէ դէմքը կարելի է փակել խուլ դռան պէս, այդ անյայտ անձնաւորութիւնը փակել էր իր դէմքը որպէս մի երկաթէ դուռ ու կախել երկաթէ փականք: Նա անշարժ ներքև էր նայում փայտէ կեղտոտ յատակին և չէր կարելի հասկանալ խաղաղ էր նրա հոգին, թէ անվերջ յուզումներով լի, մտածում էր մի բանի մասին, թէ լսում լրտեսների ցուցմունքները: Նա միջահասակ մարդ էր, դէմքի գծերը՝ նուրբ ու ազնիւ: Այնքան քնքոյշ ու գեղեցիկ էր նա, որ յիշեցնում էր հարաւի լուսնկայ գիշերը ծովափին, իւր կիպարիաներով ու սև ստուերներով, բայց և միաժամանակ նա զարթեցնում էր հսկայական ու հանգիստ ոյժի, անընկճելի տոկունութեան և սառն ու յանգու գն արիութեան զգացմունք: Հէնց նոյնիսկ այն քաղաքավարութիւնը, որ հնչում էր նրա կարճ ու կտրուկ պատասխանների մէջ, նրա բերանում վառնալուր էր թւում: Եթէ միւսների վրայ բանտարկեալի վերարկուն մի անմիտ խեղկատակութիւն էր թւում, նրա վրայ այն բնաւ չէր երևում— այնքան խորթ էր զգեստն այդ մարդուն: Եւ թէև միւս տեւորիստների մօտ գտնուել էին ումբեր ու դժոխային մեքենաներ, իսկ Վերների մօտ՝ միայն մի սև ատրճանակ, այնուամենայնիւ դատաւորները. չգիտես ինչու, նրան էին համարում զլխաւոր և վերաբերում էին փոքր ինչ աւելի յարգանքով. խօսում էին նոյնպէս կարճ ու միմիայն գործի մասին:

Հետևեալը, Վասիլի Կաշիրին, իւր ամբողջ էութեամբ կարծես հէնց ինքը մահուան անգոսնելի սարսափն էր և ամեն կերպ աշխատում էր խեղդել իր մէջ այդ սարսափը և ծածկել զատաւորներին: Վաղ առաւօտից, հէնց որ նըրանց գատարան տարան, սրտի արագ բարախումից սկսեց նրա շունչը կտրուել. ճակատը շարունակ ծածկւում էր քրտինքի կաթիլներով. քրտնքոտ էին նաև սառն ձեռքերը, իսկ նոյնպէս սառն ու քրտնքոտ շապիկը շարունակ կրպշում էր մարմնին ու կաշկանդում նրա շարժումները: Կամքի գերբնական ճիգով նա աշխատում էր, որ իր մատները չգոգան, որ ձայնը հաստատուն ու մեկին հնչէ, և որ աչքերը հանգիստ լինեն: Իր շուրջը ոչինչ չէր տեսնում, ձայները գալիս էին կարծես ինչ որ խաւարից, ինքն էլ դէպի նոյն խաւարն էր ուղղում իւր գերագոյն ճիգը պատասխանել անյողգող, պատասխանել բարձր: Բայց պատասխանելուն պէս, նա իսկոյն մոռանում էր թէ գատաւորների հարցը, և թէ իր տուած պատասխանը ու էլի լուռ շարունակում էր իր ներքին սարսափելի պայքարը: Եւ այնքան նկատելի էր նրա մէջ մահուան ներկայութիւնը, որ գատաւորները խուսափում էին նրան նայել. դժուար էր որոշել նրա տարիքը, ճիշտ այնպէս, ինչպէս դժուար է որոշել դիակի տարիքը, որ արդէն սկսել է նեխուել: Անցողքի մէջ նշանակուած էր 23 տարեկան: Մի երկու անգամ Վերները կամացուկ ձեռքը դրեց նրա ծնկին, իսկ նա իւրաքանչիւր անգամ արտասանում էր միայն մի խօսք.

— Ոչինչ:

Ամենասարսափելին նրա համար այն էր, որ երբևէ յանկարծ բուռն ցանկութիւն էր ծնում նրա մէջ գոտալ, առանց խօսքերի, անասնական յուսահատ ազդողակով: Այդպիսի բոպէսներին նա կամացուկ կպչում էր Վերներին, որ առանց աչքերը բարձրացնելու կամաց պատասխանում էր.

39871-63

— Բան չկայ, Վասեա, շուտով կը վերջանայ:

Տեւորիստներից հինգերորդը մի կին էր՝ Տանիա Կովալչուկ, որ սրտայոյգ իր մայրական հոգատար հայեացքով շարունակ գուրգուրում էր ամենքին: Նա երբէք երեխաներ չէր ունեցել, դեռ շատ երիտասարդ էր, կարմիր այտերով, ինչպէս Սերգէյ Գոլովինը, բայց կարծես նոցա բոլորի մայրն էր, այնպէս հոգատար, այնքան սիրալիլ էին նրա հայեացքները, ժպիտն ու անհանգստութիւնը: Դատավարութիւնը նրան բնաւ չէր զբաղեցնում, որպէս մի բոլորովին կողմնակի բան, այլ միայն լսում էր, թէ ինչպէս են պատասխանում միւսները:— չի՞ դողում արդեօք մէկի ձայնը, երկիւղ չի գգում միւսը, կամ պէտք չէ՞ արդեօք շուր տալ երրորդին:

Վասիան այնպիսի վիշտ էր պատճառում Կովալչուկին, որ վերջինս նայել անգամ չէր կարողանում նրա դէմքին և միայն կամացուկ կոտրատում էր իր փամփիկ մատները: Մուսիային և Վերներին նայում էր հպարտութեամբ ու յարգանքով և դէմքին լուրջ ու մտազբաղ արտայայտութիւն էր տալիս, իսկ Սերգէյ Գոլովինին նայելիս աշխատում էր շարունակ ժպտալ:

— Հոգեակ, երկնքին է նայում: Թող նայէ, նայէ, մտածում էր նա Գոլովինի մասին:

— Իսկ Վասիան: Տէր Աստուած, Տէր Աստուած, այդ ի՞նչ... Ի՞նչ անեմ նրան: Մի բան ասե՛մ, մի գուցէ աւելի վատ լինի, մէկ էլ տեսար լաց եղաւ:

Եւ ինչպէս խաղաղ լճակը վերջալոյսին, որ արտացոլում էր իր մէջ սահող ամպի իւրաքանչիւր կտորը, ճիշտ այնպէս Տանիայի փափուկ, գրաւիչ ու բարի դէմքը արտացոլում էր չորսի էլ վարկենական խոհերն ու զղացմունքները: Իսկ թէ ինքն էլ զատապարտեալ է, և որ իրեն էլ պիտի կախեն, — այդ նրան բնաւ չէր զբաղեցնում և չէր յուզում: Նրա մտն էին գտել ուղմբերի ու դի-



նամիտի պահեստը, և զարմանալի է, այդ նա էր, որ ուտիկաններին դիմաւորեց ատրճանակի հարուածներով և վիրաւորեց լրտեսներից մէկի գլուխը:

Դատաւարութիւնը վերջացաւ մօտաւորապէս ժամի ութին, երբ արդէն մթնել էր: Մուսիայի և Սերգէյ Գոլովինի աչքերի առաջ կամաց-կամաց հանգաւ կապուտակ երկինքը, բայց չշտազուներ, չժպտաց կամացուկ, ինչպէս ամառային դիշերին, այլ պղտորուեց, գորշացաւ և յանկարծ դարձաւ ցուրտ ու ձմերային: Գոլովինը հոգոց հանեց, ձգուեց, մի երկու անգամ էլ նայեց լուսամուտին, բայց դուրսը արդէն գիշերային ցուրտ խաւար էր տիրում: Եւ էլի միրուքը քաշքշելով, մի երեխայական հետաքրքրութեամբ սկսեց նայել դատաւորներին, զինւորներին, ժպտաց Տանիա Կովալչուկին: Իսկ Մուսիան, երբ երկինքը հանգաւ, առանց աչքերը խոնարհելու, հայեացքն ուղղեց դէպի վեր, ուր վառարանի տաքուկ անկիւնում հանդարտ ձօձում էր սարդոստայնը. և այդ դրութեան մէջ մնաց մինչ որ յայտնեցին դատավճիռը:

Ապա, նրանք բաժանուեցան իրանց Ֆրակաւոր պաշտպաններից, աշխատելով խուսափել նրանց շուարած ու ամօթապարտ հայեացքից: Դատապարտեալները մի բոպէ դոնների մօտ միմեանց հանդիւպեցին և կարողացան մի քանի խօսք ստել իրար:

— Բան չկայ, Վասիա, շուտով ամեն ինչ կը վերջանայ, — ասաց Վերները:

— Հա՛, դէ ի հարկէ ոչինչ, — բարձր, հանդիստ և նոյնիսկ կարծես ուրախաձայն պատասխանեց Կաշիրինը՝ և իրօք՝ նրա դէմքը մի թեթև կարմրութիւն ստացաւ և էլ չէր նմանւում նեխուած դիակի դէմքին:

— Իրանց հէրն անիծած, կախեցին, էլի, — միամտօրէն հայհոյեց Գոլովինը:

— Այդպէս էլ պէտք էր սպասել — պատասխանեց Վեր-

ները անվրդով:

Վաղը վերջնականապէս կը յայտնեն դատավճիռը և մեզ բոլորիս միասին կը նստեցնեն, — ասաց Կովալչուկը մխիթարական ձևով: — Ամբողջ ժամանակ մինչև կախաղան հանելը միասին կը լինինք:

Մուսիան լուռ էր: Ապա վճռական քայլերով առաջ անցաւ:

3. ԻՆՁ ՉՊԷՏՔ Է ԿԱԽԵԼ.

Տեոօրիստների դատաւարութիւնից երկու շաբաթ առաջ նոյն զինւորական շրջանային դատարանը, միայն այլ կազմով, դատեց և կախաղանի դատապարտեց գիւղացի Իվան Եանսոնին:

Այդ Իվան Եանսոնը մի ունևոր կալուածատէրի մօտ բատրակ էր և ոչնչով չէր տարբերւում իր նման այլ անտուն — անտէր աշխատաւորներից: Նա էստոնցի էր, Վեդենբերգից, և տարիներ ընթացքում հետզհետէ տեղափոխուելով մի կալուածքից միւսը, նա մօտեցաւ մայրաքաղաքին: Ռուսերէն շատ վատ էր խօսում, և որովհետև նրա տէրը ոռւս էր, Լազարեով ազգանունով, իսկ շրջակայքում էրտոնցիներ չկային, Եանսոնը այդ ամբողջ երկու տարին համարեա անխօս մնաց: Ըստ երևոյթին նա այնքան էլ չէր սիրում խօսել և լուռ էր ոչ միայն մարդկանց, այլ և անասունների հետ. անխօս ջրում էր ձին, անխօս լծում, ծոյլ — ծոյլ պտոյտ էր գալիս նրա շուրջը անհաստատ, փոքրիկ քայլերով. իսկ երբ ձին՝ գժգոճ այդ լուրթիւնից, սկսում էր քմահաճ խաղեր սարքել, Եանսոնը դարձեալ անխօս սկսում էր ձեծել նրան իր անազին մտրակով: Ծեծում էր շատ խիստ, մի տառնասիրտ ու չար յամառութեամբ, իսկ եթէ այդ պատահում էր նրա

խիստ հարբած ժամանակ, կատաղութեանը չափ չէր լինում: Այդ դէպքում նրա մտրակի շրմփոցը և սմբակները վախկոտ, մտնրիկ ու ցաւագին տոփիւնը ախոռի տախտակած յատակին՝ մինչև տուն էր հասնում: Որովհետև Եանսոնը ծեծում էր ձիուն, տէրն էլ ծեծում էր Եանսոնին, բայց նրան ուղղել չկարողացաւ և այդպէս էլ թողեց:

Ամիսը մէկ-երկու անգամ Եանսոնը մի լաւ խմում էր, և այդ սովորաբար այն օրերին, երբ նա սահնակով տանում էր իր տիրոջը երկաթուղու մեծ կայարանը, որտեղ բուֆէտ կար:

Տիրոջ վայր իջնելուն պէս, նա յետ էր դռնում և կայարանից կէս վերստ հեռաւորութեան վրա թողնում էր սահնակն ու ձին ճանապարհից գուրս, ձեան շեղջի մէջ և սպասում էր գնացքի մեկնելուն: Սահնակը մնում էր այդպէս կողքի վրայ ծուռած, ձին մինչև փորը խրուած ձեան շեղջի մէջ, ոտները լայն բաց արած, ժամանակ առ ժամանակ դունչը կռացնում էր, որ փափուկ ու թաւշտ ձիւնը լիգէ: Իսկ Եանսոնը անյարմար զիրքով թեք ընկած սահնակի մէջ, կարծես նիւրճում էր: Նրա բրգահան եղած զլխարկի քանգած ականջակալները թոյլ-թոյլ կախ էին ընկնում որսկան շան ականջների պէս, իսկ կարմրած, փոքրիկ քթի տակը շարունակ թաց էր լինում:

Յետոյ Եանսոնը վերադառնում էր կայարան և կարճ ժամանակում հարբում էր:

Վերադարձին ամբողջ տաս վերստ ճանապարհը նա սարսափելի կերպով քշում էր: Զարդուած ու սարսափահար եղած ձին խելագարի նման վազում էր ինչքան ոյժ ունէր, սահնակը կողքէ կող էր ընկնում, օրօրում, զիպչում սիւններին, իսկ Եանսոնը երասանակները բաց թողած երգում էր, աւելի ճիշտ ընդհատ-ընդհատ ճչում էր մի ինչ որ էստօնական անհասկանալի երգ և ամեն ըսպէ քիչ էր մնում վայր ընկնէր սահնակից: Շատ անգամ նոյն

իսկ չէր էլ երգում, այլ անխօս, մի անորոշ կատաղութիւնից, տանջանքի ու հիացմունքի յորձանքից ատամներն ամուր սեղմած, առաջ էր սլանում և կարծես կուրացած, չէր տեսնում անցորդներին, ձայն չէր տալիս, չէր դանդաղեցնում կատաղի ընթացքը, ոչ պտոյաներում և ոչ էլ զառիվայրներում: Զարմանալի է, թէ ինչպէս է, որ իր խելագար սովորութեամբ նա մինչև այժմ ջարդ ու փշուր չէր եղել, կամ մի ուրիշին սահնակի տակ չէր ձգել:

Իսկապէս Եանսոնին վաղուց պէտք էր հեռացնել, ինչպէս այդ արել էին և ուրիշները, բայց որովհետև նա էժան էր վարձուած և ուրիշները նրանից աւելի լաւ չէին լինում, ուստի նա այդպէս էլ մնաց երկու տարի: Եանսոնի կեանքի մէջ ոչ մի աչքի ընկնող դէպք չէր պատահել: Մի անգամ նա էստօներէն նամակ ստացաւ, բայց որովհետև ինքն անգրագէտ էր, իսկ ուրիշները էստօներէն չը գիտէին, նամակն այդպէս էլ չկարողացուեց: Եւ մի ինչ որ վայրենի, հրէշային սառնասրտութեամբ, Եանսոնը աղբի մէջ ձգեց նամակը, կարծես չկարողանալով հասկանալ, որ այն լուրեր է բերում հայրենիքից: Մի անգամ էլ Եանսոնը փորձեց խոհարարուհու յետից ընկնել, երևի խիստ կարօտել էր կանանց, բայց յաջողութիւն չունեցաւ և կոպիտ կերպով մերժուեց ու ծաղրի առարկայ դարձաւ: Եւ զարմանալի չէր, որովհետև նա կարճ ու քոսոտ մի մարդ էր, մնոտ ու կնճոտ երեսով և կեղտոտ շշի գոյնի պէս պղտոր ու քնկոտ աչքերով: Նա անտարբերութեամբ հաշտուեց իր այդ անյաջողութեան հետ և զազարեց հետամտել խոհարարուհուն:

Եանսոնը թէև քիչ էր խօսում, բայց ականջը միշտ սուր էր պահում: Նա ականջ էր դնում և՛ թախծալի, ձիւնապատ դաշտին, որ ծածկուած էր աղբի սառած շեղջակոյտերով, նման ձիւնածածկ փոքրիկ գերեզմանների, և՛ քնքոյշ կապուտակ հեռաստանին, և՛ զողանջող հե-

ուագրասիւններին և մարդկանց խօսակցութեան: Թէ ինչ էին ասում նրան դաշան ու հեռագրասիւնները, այդ միայն ինքը գիտէր, իսկ մարդիկ յուզուած խօսում էին սպանութիւնների, հրդեհների ու կողոպտանքների մասին: Եւ մի անգամ գիշերը նրա ականջին հասաւ գիւղի աղօթատան գանգի անօգնական ու կերկերուն ձայնը և հրդեհի բոցերի ձթձթոցը: Ինչ որ եկեօրներ կողոպտել էին մօտակայ հարուստ կալուածքը, սպանել կալուածատիրոջը կնոջ հետ և այրել տունը:

Հէնց իրենց կալուածքում էլ իրարանցում կար: Ամենքն ահ ու գողի մէջ էին. շներին բաց էին թողնում ոչ միայն գիշերը, այլ և ցերեկը, և կալուածատէրը գիշերները կողքին միշտ հրուցան էր պահում: Նոյնպիսի մի հրացան էլ, միայն աւելի հին ու միփոզանի, նա կամենում էր Եանսոնին տալ, բայց վերջինս հրացանը շուռ ու մուռ ասուեց, գլուխը շարժեց և յետ ասուեց: Տէրը չհասկացաւ չընդունելու պատճառը և մի լաւ հայտնեց Եանսոնին: Իսկ պատճառն այն էր, որ Եանսոնն աւելի էր հաւատ ընծայում իր ֆիննական գանակի զօրութեանը, քան այդ հին, ժանգոտած երկաթէ կտորին:

— Էդ, հօ, ինձ կսպանէ, — ասաց Եանսոնը, տիրոջն ուղղելով իր ազակենման, քնաթաթախ աչքերը: Յոյսը կտրած կալուածատէրը ձեռք քաշեց.

— Համոն ախմախն ես, հա, Իվան: Դէ, արի ու էսպիսի ծառաների հետ ապրիր:

Եւ ահա հէնց այդ Իվան Եանսոնը, որ հաւատ չէր ընծայում հրացանին, ձմեռը մի գիշեր, երբ միւս ծառային կայարան էին ուղարկել, մտադրուեց կողոպտախ, սպանութեան և բռնաբարութեան մի բարդ փորձ անել: Եւ այդ նա արեց շատ հասարակ կերպով. խոհանոցի դուռը փակեց խոհարարուհու վրայ և այնպիսի մի արտայայտութեամբ, որ կարծես լէ գունը սաշափելի կերպով

տանում էր, ծոյլ-ծոյլ մօտեցաւ իր տիրոջ և յետևից, յանկարծ, իրար վրայ խփեց դանակով նրա մէջքին: Տէրը ուշաթափ գետին փռուեց: Տանտիկինը գլուխը կորցրած սկսեց զոռզոռալ, իսկ Եանսոնն ատամները բաց արած, դանակը օդի մէջ խաղացնելով, սկսեց արկղներն ու պահարանները ջրջրել: Փողերը հանեց, ապա, կարծես նոր նկատելով տանտիկնոջը, վրայ պրծաւ բռնաբարելու: Բայց որովհետև այդ նոյնիսկ իր համար անսպասելի պատահարի ժամանակ դանակը վայր էր ձգել, կինն այնքան ուժեղ գանուեցաւ, որ ոչ միայն թոյլ չտուեց բռնաբարել, այլ և քիչ մնաց խեղդէր նրան: Հէնց այդ ընդէին կալուածատէրը սկսեց թաւալ գալ յատակի վրայ, խոհարարուհին էլ, աշխատելով կրակախառնիով խոհանոցի դուռը կտրել, աղմուկ բարձրացրեց, ուստի Եանսոնը փախաւ դէպի գաշտ: Մի ժամից յետոյ նրան բռնեցին մարտգում, ուր նա անկիւնում պըպզած, իրար յետևից լուցկիներ էր կպցնում, աշխատելով հրդեհ ձգել:

Մի քանի օրից յետոյ կալուածատէրը մեռաւ արեան վարակումից, իսկ Եանսոնին, երբ միւս աւազակներից ու մարդասպաններից յետոյ հերթը նրան հասաւ, դատեցին ու մահուան դատապարտեցին: Դատարանումն էլ նա նոյն փոքրիկ, քոսոտ, մնտա երեսով ու ազակենման աչքերով Եանսոնն էր: Նա, ըստ երևոյթին այնքան էլ լաւ չէր հասկանում, թէ ինչ է կատարում իր շուրջը և արտաքուստ շատ անվրդով էր. թարթում էր սպիտակ արտահանունքները, առանց հետաքրքրութեան, ապուշի պէս դիտում էր այն անձանոթ, փառահեղ դահլիճը և չոր, կոպիտ, փայտանման մասներով փորփրում էր քիթը: Միայն կիւրակի օրերը նրան աղօթատանը տեսնողները կը նկատէին, որ նա փոքր ինչ աւելի զուգուել էր: Վիզն էր ձգել մի կեղտոտ — կարմիր, գործած շարֆ և տեղ-տեղ թրջել էր զըլխի մազերը. թրջուած մասում մազերը աւելի կոկիկ ու

սև էին, իսկ մնացած տեղերում նրանք կարծես թէ աւելի շէկ էին ու նոսր և բիզ-բիզ ցցուել էին, ինչպէս ցողունները կարկտանար արտում:

Երբ մահուան դատավճիռը յայտնեցին, Եանսոնը յանկարծ սկսեց յուզուել: Նա սաստիկ կարմրեց և սկսեց արագ-արագ կապել ու քանդել շարժը, որ կարծես խեղ-գում էր նրան: Ապա ձեռքով մի քանի անմիա շարժումներ արեց և դառնալով այն դատաւորին, որ չէր կարգում դատավճիռը ու, մատնացոյց անելով կարդացողի վրայ, ասաց.

— Էդ մարդն ասաց, որ ինձ պիտի կախեն:

— Էդ մարդը... ո՞վ, — հարցրեց դատավճիռ կարդացող նախագահը հաստ ձայնով:

Եանսոնը ցուցամատն ուղղեց դէպի նախագահը և, յօնքերը կիսած, բարկութեամբ պատասխանեց.

— Դ՛ն:

— Յեանոյ:

Եանսոնը նորից աչքերը ձգեց միւս չիստող դատաւորին: Եանսոնը կարծում էր թէ այդ մարդը ոչ մի մասնակցութիւն չունի դատավճռի մէջ և համարում էր նրան իր բարեկամը, ուստի նորից դիմեց նրան.

— Էդ մարդն ասաց, որ ինձ պիտի կախեն: Ինձ չըպէտքէ կախել:

— Տարէք մեղադրեալին:

Բայց Եանսոնը կարողացաւ էլի մի անգամ լրջօրէն ու համոզիչ ձայնով կրկնել.

— Ինձ չպէտքէ կախել:

Նա իրար էր աշխատում իր փոքրիկ, բարկացկոտ դէմքին լուրջ արտայայտութիւն տալ և մատը երկարացրած պահել, որովհետև չնայած իր ջանքերին, այնուամենայնիւ մի այնպիսի ապուշի տպաւորութիւն էր թողնում, որ նոյնիսկ պահակախմբի զինւորներից մէկը, օրէն-

քը խախտելով, նրան դահլիճից դուրս տանելիս, կամացուկ ասաց.

— Համա ախմախն ես հա, մեր տղայ:

— Ինձ չպէտքէ կախել, — յամառութեամբ կրկնեց Եանսոնը:

— Էնպէս կախեն, որ քէֆդ գայ:

Լաւ, լաւ, ձէնդ կտրիր, — բարկութեամբ նկատեց պահակախմբի միւս զինւորը: Բայց ինքն էլ չկարողացաւ համբերել ու աւելացրեց.

— Աւազակին տեսէք: Ինչո՞ւ ուրիշի մեղքի տակ ընկար: Տեղն է, դէ, հիմի գնա՛ ու կախուի:

— Ո՞վ է իմանում, կարելի է ներեն, — ասաց առաջին զինւորը, որ այժմ սկսել էր խղճալ Եանսոնին:

— Ո՞նց չէ, էդպիսիներին ներեն... Է՛հ, լաւ, հերիք է:

Բայց Եանսոնն արդէն լուել էր: Եւ նրան տարան էլի այն սենեակը, ուր արդէն մի ամիս նա նստել էր և որին ընտելացել էր այնպէս, ինչպէս հեշտութեամբ ընտելանում էր ամեն բանի՝ ծեծին, օղուն, թախծոտ ու ձիւնածածկ դաշտին, գերեզմանների տեսք ունեցող իր շեղա-կոյտերով: Եւ այժմ նա նոյնիսկ ուրախացաւ, երբ տեսաւ իր մահճակալը. իր վանդակապատ լուսամուտը, և երբ նրան հաց բերին. առաւօտուանից նա ոչինչ չէր կերել: Եթէ մի անախորժ բան կար, այդ այն էր, ինչ որ կատարուեց դատարանում, բայց այդ մասին նա չէր կարողանում մտածել, ընդունակութիւն չունէր: Իսկ թէ ինչպէս պիտի նրան մահացնեն, կախաղան հանելով, այդ երևակայել անգամ չէր կարողանում:

Թէև վճռել էին Եանսոնին կախաղան հանել, բայց նրա պէս շատերը կային և նրան էլ բանտում կարևոր յանցագործ չէին համարում: Ուստի և հետը խօսում էին առանց կասկածի ու առանց յարգանքի, ինչպէս այն բոլոր բանտարկեալների հետ, որոնք մահուան չէին դատա-

պարտուած: Կարծես նրա մահը մահ չէին համարում: Բանտի վերակացուն լսելով զատավճռի մասին, ասաց նրան խրատական ձայնով.

— Տեսար, կախեցին.

— Բա ինձ երբ պիտի կախեն, անվտանգօրէն հարցրեց Եանսոնը: Վերակացուն մի փոքր մտածեց ու ասաց.

— Էդ դեռ այնքան էլ շուտ չի լինի: Պիտի սպասես մինչև որ բնկերներ ճարուին: Թէ չէ մի մարդու, այն էլ քեզ պէս մարդու համար արժէ՞ այնքան աշխատել, կախազան պատրաստել:

— Բա երբ, երբ — մի գլուխ հարցնում էր Եանսոնը: Նրա համար բնաւ վիրաւորական չէր, որ ինքը մենակ կախուելու անգամ արժանի չէ. նա, ասենք, գրան իսկի չհաւատաց, կարծում էր, թէ այդ մի պատրուակ էր, որ մահապատիժը յետաձգէն և ապա բոլորովին փոխեն: Մի ինչ որ ուրախութիւն համակեց նրան. այդ անորոշ, սարսափելի բոլակն, որի մասին մտածել չէ լինում, կարծես հեռանում, անհետանում և դառնում էր հէքիաթական ու անհաւատալի, ինչպէս մահն առհասարակ:

— Ե՞րբ, երբ, — բարկացաւ վերակացուն, այդ խոժոռագէմ, բթամիտ ծերունին: — Էդ հօ շուն սատկացնել չէ՞, — տարար մարագի յետևը, մի անգամ խփեցիր ու պրծաւ: Բո ուզածն էլ հէնց էդ էր, չէ՞, ախմախ:

— Չէ, ես չեմ ուզում, — ժպտալէն երեսը կնճռեց Եանսոնը: — Էդ էն մարդն ասաց, թէ ինձ պիտի կախեն, համա ես չեմ ուզում:

Եւ գուցէ կեանքում առաջին անգամ նա ծիծաղեց մի ճշացող, անմիտ, բայց սարսափելի ուրախ քրքիշով, կարծես սազը կանչեց՝ դ՛ն-դ՛ն-դ՛ն: Վերակացուն սկզբում զարմացած նայեց նրան, ապա դէմքին խիտ արտայայտութիւն տուեց ու յօնքերը կիտեց: Այդ մահուան դատապարտուած մարդու անմիտ հրճուանքից կարծես թէ վի-

րաւորում էին բանտն ու մահը և դառնում մի ինչ որ տարօրինակ բան: Եւ յանկարծ մի վայրկեան, մի շատ կարճ վայրկեան, ծերունի վերակացուին, որ ամբողջ կեանքն անցրել էր այդ բանտում և նրա կանոնները բնութեան օրէնքներ էր համարել, — թուաց, թէ այդ բանտն ու կեանքը մի ինչ որ զժանոց է, և ինքը՝ վերակացուն, հէնց ամենազլխաւոր գիժը:

— Թիւ, քո հէքն անխճած, ի՞նչ ես առամներդ բաց արել, սրտեղ ես:

— Ախար ես չեմ ուզում, — դ՛ն-դ՛ն-դ՛ն — ծիծաղեց Եանսոնը:

— Ստանայ, — ասաց վերակացուն, լաշակնքելու կարիք զգալով:

Այդ փոքրիկ ու թռչնած դէմքով մարդը ստանայի ոչ մի նմանութիւն չուներ, բայց նրա սազի կառանչին նմանող ձայնի մէջ մի ինչ որ բան կար, որ ոչնչացնում էր բանտի սրբութիւնն ու ամբութիւնը: Եթէ մի փոքր էլ հոճար այդ մարդը, թուլացած պատերը քար ու քանդ կը լինէին, փափկացած վանդակները վայր կը ընկնէին, և վերակացուն ինքը գուրս կը հանէր բանտարկեալներին՝ «համեցէք, պարոնայք, գնացէք քաղաք, ման եկէք, կամ գուցէ և մէկը ու մէկը կուզենաք զիւր գնալ, խնդրեմ»: Ստանայ:

Բայց Եանսոնն արգէն էլ չէր ծիծաղում և միայն խորամանկօրէն կկոցում էր աչքերը:

— Տես, հն, — անորոշ կերպով սպասնաց վերակացուն և յեա-յեա նայելով հեռացաւ:

Ամբողջ գիշերը Եանսոնը հանգիստ էր և նոյն իսկ ուրախ: Ինքն իրեն կրկնում էր նոյն բառերը «ինձ չպէտք է կախել», և այդ միտքն այնքան համոզիչ, խելացի, անհերքելի էր թւում, որ էլ ոչ մի բանի մասին անհանգստանալու կարիք չկար: Իր գործած ոճիրի մասին

նա վաղուց էր մոռացել և միայն երբեմն ափսոսում էր, որ չկարողացաւ բռնաբարել տանտիրուհուն: Բայց շուտով այդ էլ մոռացաւ: Ամեն առաւօտ Եանսոնը հարցնում էր, թէ երբ պիտի կախեն, և իւրաքանչիւր անգամ վերակացուն բարկացած պատասխանում էր.

—Քեզ էլ հերթը կը գայ, սատանայ, դեռ սպասիր,— և շտապով հեռանում էր, քանի դեռ Եանսոնը չէր սկսել հռնալ:

Այդ միակերպ կրկնուող խօսքերը, թէ այն հանգամանքը, որ օրերը սկսում ու վերջանում էին իբրև սովորական օրեր, Եանսոնին այն անհողող համոզմունքին բերին, որ նրան բնաւ կախաղան չեն հանելու: Շատ հեշտութեամբ նա մոռացաւ դատաւորներին և ամբողջ օրերով փռուած մահճակալի վրայ, մի անորոշ հաճոյքով երազում էր շեղճակոյտերով ծածկուած թախճոտ ու ձիւնապատ դաշտերը, կայարանի բուֆէտը, և երբեմն էլ մի ինչ որ հեռաւոր և վսեմ բան: Բանաւում նրան լաւ էին կերակրում, այնպէս որ նա շուտով մի քանի օրուայ ընթացքում գիրացաւ և սկսեց իրեն աւելի հպարտ ու լուրջ պահել:

«Այ, հիմի նա ինքն ինձ կը սիրէր»,— մտածեց նա մի անգամ տանտիրուհուն յիշելով: «Հիմի ես հաստ եմ և ոչնչով պակաս չեմ աղայից»:

Միայն թէ օդի լւմել շատ էր ուզում— իմէր ու մի լաւ քշէր:

Երբ տեւորիսաներին ձերբակալեցին, լուրը շուտով բանտ հասաւ, ուստի Եանսոնի սովորական հարցին վերակացուն անսպասելի պատասխան տուեց.

—Այժմ արդէն շուտով:

Վերակացուն նայում էր նրան սնհանդիւտ ու լրջօրէն և ասում:

—Այժմ արդէն շուտով: Կարծում եմ, որ մի շաբա-

թից յետոյ:

Եանսոնը գունատուեց, ապակենման աչքերի հայեացքն այնքան պղտոր էր, որ կարծես թէ քնի միջից հարցրեց.

—Հանձը ես անում:

—Առաջ համբերութիւն չունէր, հիմի էլ թէ՛ հանաք ես անում: Մեղանում հանաքներ չեն անում: Էդ դուք էք հանաք սիրում, իսկ այստեղ հանաք մանաք չկայ:

Չէնց այդ օրը մինչև երեկոյ, Եանսոնը բաւական նիհարեց: Նրա ձգուած ու առժամանակ կոկուած կաշին յանկարծ հաւաքուեց ու փոքրիկ կնճիռներ կազմեց, տեղտեղ էլ նոյնիսկ կարծես կախ ընկաւ: Քունն էլի աչքերն առաւ, և նա սկսեց այնպիսի դանդաղ ու հեղգ շարժումներ անել, որ կարծես ամեն անգամ գլուխը թեքելը, մատները ծռելը, ոտքերը փոխելը մի այնպիսի բարդ ու հսկայական ձեռնարկութիւն էր, որի համար նա պէտք է նախ երկար ու բարակ մտածէր:

Գիշերը նա պարկեց, բայց քնաթաթախ աչքերը բաց մնացին մինչև առաւօտ:

—Ընր՛, ասաց վերակացուն հետևեալ առաւօտը մի առանձին բաւականութեամբ,—բան, ինչ էիր կարծում, էս հօ ձեր տունը չի:

Եւ ինչպէս մի գիտնական, որի փորձը մի անգամ էլ յաջողուեց, վերակացուն մեծ հաճոյքով և ամենայն ուշադրութեամբ գննեց դատապարտեալին ոտքից մինչև զրլուխ: Այժմ ամեն ինչ կարգի կը ընկնի: Սատանան խայտառակուած է, բանտի ու մահուան սրբութիւնը վերականգնուած է, ուստի ձերունին մի ներողամիտ հայեացքով, նոյն իսկ անկեղծօրէն խղճալով Եանսոնին, հարցրեց.

—Տեսնելու մարդ ունիս, թէ չէ:

—Ի՞նչ տեսնելու մարդ:

—Մնաս բարով ասելու, էլի: Օրինակ, մայր կամ եղ-

բայր չունի՞ս:

— Ինձ չպէտք է կախել, — կամաց արտասանեց Եանսոնը և աչքի տակով ծուռ-ծուռ նայեց վերակացուին: — Ես չեմ ուզում:

Վերակացուն նայեց և լուռ ուսերը թոթուեց:

Երեկոյեան Եանսոնը մի փոքր հանգստացաւ: Օրն այնքան սովորական էր, ինչպէս և ամպամած ձմեռային երկինքը, միջանցքում լուող ոտնաձայներն ու խօսակցութիւնը, թթու կաղամբից պատրաստած շշիի հոտը, այնքան սովորական ու բնական, որ Եանսոնն էլի սկսեց չըհաւատալ թէ իրեն կախելու են: Բայց գիշերը համեղուն պէս սարսափը պատեց նրան: Առաջ գիշերը Եանսոնի համար մի հասարակ բան էր, մի մթութիւն, մի խաւար ժամանակ, երբ պէտք էր քնել. իսկ այժմ զգաց նրա խորհրդաւոր ու անարկու էութիւնը: Որպէսզի մահն անհաւատալի թուայ, անհրաժեշտ է, որ մարդ շարունակ տեսնէ ու լսէ իր շուրջը սովորական բաներ՝ քայլեր, ձայներ, թթու կաղամբից պատրաստած շշի, իսկ այդ գիշերը ամեն ինչ անսովոր էր՝ թէ այդ լուսթիւնը և թէ այդ խաւարը կարծես հէնց մահը լինէին:

Եւ քանի գնում գիշերն աւելի սարսափելի էր դառնում: Մի պարզամտութեամբ, որ յատուկ է վայրենուն կամ երեխային, որոնց ամեն ինչ հնարաւոր է թուում, Եանսոնն ուզում էր գոռալ արեին՝ լուսաւորիք: Եւ նա խնդրում, նա պաղատում էր, որ արևը լուսաւորէ, բայց գիշերը պարուրում էր երկիրը իր սև ժամերով, և չկար մի ոյժ, որ կանգնեցնէր նրա անշեղ ընթացքը: Եւ այդ անկարելիութիւնը, որ առաջին անգամ զգաց Եանսոնը իր թոյլ ուզեցով, համակեց նրան սարսափով. թէև դեռ չէր համարձակուում պարզապէս զգալ, բայց արդէն հասկացել էր, որ մահն անխուսափելի է, և գողգոջ քայլերով բարձրացաւ կռուափնատեղի առաջին աստիճանը:

Հետեւեալ օրը նրան նորից հանգստացրեց, բայց դարձեալ եկաւ գիշերն ու սարսափ բերեց իր հետ, և այսպէս շարունակ մինչև այն գիշերը, երբ Եանսոնն արդէն վերջնականապէս համոզուեց ու զգաց, որ մահն անխուսափելի է և գալու է երեք օրից յետոյ լուսաբացին, արևը ծագելու ժամանակ:

Նա երբէք չէր մտածել այն մասին, թէ ի՞նչ բան է մահը, ի՞նչ կերպարանք ունի, — բայց այժմ նա շատ պարզ կերպով զգաց, տեսաւ ու հասկացաւ, որ այդ մահը մտել է սենեակը և խարխափելով իրեն՝ Եանսոնին է որոնում: Եւ աշխատելով փախչել նրա ձեռքից, Եանսոնը սկսեց վազվզել սենեակում:

Իսկ սենեակն այնքան փոքր էր, որ կարծես պատերը ոչ թէ սուր, այլ բուրժ անկիւններ էին կազմում, և նրան շարունակ մէջ տեղն էին քշում: Եւ շփաէր, ուր թաղնուէր: Դուռը փակ էր: Լոյս էր: Մի քանի անգամ ամբողջ մարմնով լուռ կտաւ պատերին, մի անգամ ընդհարուեց դռանը, բայց խուլ ու դատարկ էր այնտեղ: Կըպաւ մի ինչ որ բանի և վայր ընկաւ երեսի վրայ, և զգաց, որ իրեն բռնում են և փորի վրայ պռակած, յատակին կըպած և երեսը նրա սև, կեղտոտ ասֆալտի մէջ թաղցրած, Եանսոնը սարսափահար սկսեց գոռալ: Պառկել էր ու գոռում ամբողջ ձայնով, մինչև որ եկան ուրիշները, բարձրացրին յատակից, նստեցրին մահճակալի վրայ, սառ շուրջը ին զլիսին, և այդ բոլորից յետոյ Եանսոնը գեռ չէր համարձակուում բաց անել խփած աչքերը: Մէկ բաց է անում աչքը, տեսնում է դատարկ, լուսաւոր անկիւնը կամ ինչ որ մէկի կօշիկները օդի մէջ, և էլի սկսում է գոռալ:

Բայց սառն շուրը սկսեց ազդել: Օդնեց և այն, որ հերթապահ վերակացուն, էլի նոյն ձերուհին, մի քանի անգամ խփեց նրա զլիսին իբրև գեղ: Սյո բոլորը նրան նորից զգալ տուին կեանքը և վանեցին մահը, ուստի Եանսոնը բաց

արաւ աչքերը և գիշերուայ մնացած մասը ամուր քնեց մթագնաց ուղեղով: Պառկել էր մէջքի վրայ, բերանը բաց, և բարձր ու լիաձայն խոնփում էր, և կիսախուփ կոպերի միջից փայլում էր հարթ ու անկենդան աչքը առանձ բիբի:

Այնուհետև ամեն ինչ՝ և՛ օրն ու գիշերը, և՛ քայլերն ու ձայները, և՛ թթու կաղամբից պատրաստած շշին դարձան մի ընդհանուր սարսափ և նրան այնպիսի վայրենի զարմանք պատճառեցին, որ ոչ մի բանի հետ չէր կարելի համեմատել: Նրա թոյլ ուղեղը ոչ մի կերպ չէր կարողանում կապել միմեանց հետ երկու իրար միանգամայն ժխտող միտք. մի կողմից սովորական պոյժառ օրը, կաղամբի համն ու հոտը—միւս կողմից՝ այն, թէ երկու օրից յետոյ, մի օրից յետոյ նա պիտի մեռնի: Ոչինչ չէր մտածում, չէր համարում նոյնիսկ ժամերը, այլ համը սարսափից կաշկանդուած՝ ուղղակի կանգնել էր այդ հրէշային հակասութեան առաջ, որ երկու կէս էր անում նրա ուղեղը: Դէմքը միայն գունատ էր, սպիտակութեան և կարմրութեան ոչ մի հետք չկար և արտաքուստ կարծես հանգիստ էր: Միայն թէ ոչինչ չէր ուտում և բոլորովին չէր քնում. կամ ծաղապատիկ նստած աթոռին, ամբողջ գիշեր դողում էր երկիւղից, կամ կամացուկ ու գաղտագողի շրջում էր սենեակում, քնաթաթախ աչքերը այս ու այն կողմ դարձնելով: Բերանը շարունակ կիսաբաց էր, կարծես թէ անասելի զարմանքը չէր անցնում երբէք: Եւ նոյն իսկ ամենատնօրական առարկաները վերցնելիս, մի ապուշ հայեացքով նախ երկար գննում էր և ապա անվրստահօրէն վերցնում:

Այդ փոփոխութիւնը նկատելով, թէ վերակացուն և թէ լուսանցքից գիտող զինուորը էլ ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում նրա վրայ: Վերակացուն թէև երբէք մահապարտի վիճակի մէջ չէր եղել, բայց և այնպէս հաւատացնում էր, թէ այդ այն գրութիւնն է, որ յատուկ է

բոլոր մահապարտներին և նոյն իսկ համեմատում էր մորթւող անասունների դրութեան հետ, երբ նրանց խլացնում է կացնի հարուածը:

— Արդէն նա խլացել է, այժմ արդէն մինչև մահուան բոպէն էլ ոչինչ չի զգայ,—ասում էր վերակացուն, փորձառու աչքերով նրան նայելով:—Ի՞վան, լսում ես. Ի՞վան:

— Ինձ չպէտք է կախել,—խուլ ձայնով պատասխանեց Եանսոնը, և ստորին ծնոտը նորից կախ ընկաւ:

— Թող մարդասպանութիւն չանէիր, քեզ չէին կախի,—խորախուսական ձայնով ասաց աւագ վերակացուն, մի դեռ երիտասարդ, բայց բաւական լուրջ և շքանշաններով զարդարուած մարդ:—Թէ չէ սպանելը սպանել ես, իսկ կախուել չես ուղում:

— Նահաղ տեղը մարդուն սպանեց: Յիմար է, յիմար, բայց և խորամանկ:

— Ես չեմ ուղում,—ասաց Եանսոնը:

— Ինչ անենք, մի ուզիր, քէֆը քոնն է,—անտարբեր կեդրով ասաց աւագ վերակացուն.—աւելի լաւ է փոխանակ դատարկ բաներ խօսելու, ունեցած - չունեցածը բաժանելու հոգս քաշելի: Ինչքան չլինի, էլի մի բան կը ունենաս:

— Նա ոչինչ չունի: Մի շապիկ և մի վարտիկ: Հա, ճիշտ, մէկ էլ մի մորթէ գլխարկ—ինչ անկողն է:

Այսպէս ժամանակն անցաւ մինչև հինգշաբթի, իսկ հինգշաբթի օրը գիշերը ժամի 12-ին, Եանսոնի սենեակը մտան ինչ որ մարդիկ և մի պարոն պագոնները ուսերին ասաց:

— Դէհ, պատրաստուեցէք գնանք:

Եանսոնն էլի այնպէս դանդաղ, ծոյլ-ծոյլ շարժուելով հազաւ ինչ որ ունէր և կապեց կեղտոտ կարմիր շորֆը: Նոյն պարոնը, որ ծխախոտը բերանին դիտում էր, թէ ինչպէս է Եանսոնը հագնուում, յանկարծ աչքերը բարձրա-

ցրեց և ասաց.

— Ի՞նչ տաք է այսօր օրը: Կատարեալ գարուն է:

Յանսոնի աչքերը խփւում էին, քունը բոլորովին տանում էր և այնքան դանդաղ ու ծանր-ծանր էր շարժւում, որ վերակացուն ասաց.

— Իէհ, դէ, շուտ արա, ինչ ես քնում:

Յանկարծ Յանսոնը կանգ առաւ:

— Ես չեմ ուզում, — ասաց նա հեգօրէն:

Նրան բռնեցին թևերէց ու տարան, իսկ նա անխօս սկսեց քայլել, ուսերը վեր քաշելով: Դուրսը գարնանային խոնաւ օդը փչեց նրա երեսին, և նրա քթի տակ սկսեց թացանալ: Չնայելով, որ գիշեր էր, բայց տաք էր ու հալելոց, և ջրի ուրախ կաթիլները չըլթ-չըլթ թափւում էին քարերին: Եւ մինչգեռ ժանդարմները կռանալով ու սրիւր շըրկխացնելով մանում էին առանց լապտերների սև ծածկակառքը, Յանսոնը ծոյլ-ծոյլ մատով քթի տակն էր սրբում և ուղղում էր ծոռած շարժը:

4. ՄԵՆՔ ՕՐԼՈՎՅԻՆԵՐՍ.

Յանսոնին դատապարտող գինւորական շրջանային դատարանի նոյն կազմը կախադանի դատապարտեց նաև մի գիւղացու. Օրլովի նահանգի, Ելեցկի գաւառից, Միխայիլ Գոլուբեց անունով: Նա յայտնի էր Յիզան կամ Թաթար մականունով: Երեք հոգու սպանութիւն և գինուած կողոպուտ, ահա նրա վերջին ոճրագործութիւնը, որ ճշտապէս ապացուցուած էր: Իսկ նրա անցեալը չափազանց մութ էր և կասկածելի: Անորոշ ակնարկներ կային, թէ նա մասնակցութիւն է ունեցել մի շարք այլ կողոպուտների ու սպանութիւնների մէջ. և թւում էր, որ նա իր յետնը

թողել է արիւն ու կրակ և հարբեցողի մի մութ ու շուայտ կեանք: Նա բոլորովին անկեղծօրէն իրան պարզապէս աւազակ էր անուանում և հեգնօրէն էր վերաբերում նրանց, որոնք մօղային հետևելով իրանց էքսպրօպրիատոր անունով էին մեծարում: Նա սիրով պատմում էր իր վերջին սխրագործութեան բոլոր մանրամասնութիւնները, քանի որ թագցնելը ոչ մի միտք չունէր. իսկ երբ հարց էին տալիս անցեալի մասին, նա միայն ատամներն էր բաց անում և շվշվացնում:

— Հին դարմանը քամուն չեն տայ:

Իսկ երբ հարց ու փորձով հոգուն էին հասցնում, Յիզանը լըջանում, արժանավայել տեսք էր ստանում:

Մենք բոլոր օրլովցիներս գլից ձեռք քաշած մարդիկ ենք, — լըջմտօրէն ու հպարտ ասում էր նա: — Օրեօլ ու կրոմ քաղաք — գող ու աւազակ: Կարաչև ու Լիֆսի — տունն ու տեղն են գողերի: Իսկ մեր քաղաքը՝ Ելեց — սաղ աշխարհքը դարմացրեց: Էլ հարց ու փորձս սրն է:

Յիզան անունն էին տուել նրան իր արտաքինի և աւազակային ձևերի համար: Նա անօրինակ սև մազեր ունէր, խիստ նիհար էր, իսկ դուրս ցցուած թուրքական այտերը ծածկուած էին դեղին բծերով: Չիու նման շուռ ու մուռ էր տալիս աչքերի սպիտակուցը և շարունակ շտապ-շտապ ման էր գալիս: Նա նայում էր կտրուկ ու արագաշարժ հայեացքով, որ սակայն չափազանց շեշտակի էր և լի հետաքրքրութեամբ, այնպէս որ երբ նա մի անցողակի հայեացք էր ձգում մի որևէ առարկայի վրայ, վերջինս կարծես թէ մի բան էր կորցնում, նրան էր տալիս իր մի մասը և բոլորովին փոխւում էր: Եթէ նա նայում էր ծխախոտին, էլ անհնարին էր լինում վերցնել այն, և այնքան անհաճոյ, որ կարծես թէ ուրիշի բերանից ես առնում: Կարծես նրա մէջ սատանան էր բուն դրել և հանդիստ չէր տալիս. մէկ ոլորում էր նրան թոկի պէս, մէկ

դէս ու դէն շարտում, որպէս ճայճաթող կայծեր: Զուրն էլ խմում էր ձիու պէս՝ լիք-լիք դոյլերով:

Դատարանում հարցեր տալիս նա վեր էր թռչում և կարճ, փստահ պատասխաններ էր տալիս, նոյն իսկ կարծես մի առանձին բաւականութեամբ կրկնում էր.

— Ճիշտ է:

Երբեմն էլ շեշտելով.

— Ճիշտ է:

Եւ յանկարծ անսպասելի կերպով, երբ արդէն բոլորովին ուրիշ բաների մասին էին խօսում, վեր թռաւ և խնդրեց նախագահին.

— Թողէք մէ շվվացնեմ:

— Ա՞յդ ինչի համար, զարմացաւ նա: Բա որ նրանք ասում են, թէ ես ընկերներէս նշան էի տալիս, այ, էդ եմ ուզում ցոյց տալ: Շատ հետաքրքիր է:

Փոքր ինչ տատանուելուց՝ յետոյ, նախագահը համաձայնեց: Յիգանը իսկոյն բերանը դրեց իւրաքանչիւր ձեռքից երկու մատ, շուրջ կատաղած աչքերը— և դատական գանձի անկենդան օդը ձեղքեց մի այնպիսի վայրենի, իսկը աւազակային սուրաց, որից վեր են թռչում ու ծառանում խլացած ձիերը և ախամայից գունատում են մարդկանց երեսները: Եւ այդ ոչ մարդկային, և ոչ դագանային, խլացուցիչ ազդակի մէջ հնչում էր և՛ սպանուողի սրտամաշ վիշտը, և՛ մարդասպանի վայրենի խնդութիւնը, և՛ սպառնալիքն ու օգնութեան կոչը, և՛ աշնան ցուրտ ու անձրևոտ գիշերների խաւարն ու մենակութիւնը:

Նախագահը ինչ որ ձայներ հանեց, տղա ձեռքով նշան արեց Յիգանին, և նա իսկոյն լռեց: Եւ ինչպէս մի յախթական արտիստ, որ միշտ յաշոդութեամբ կատարում էր իր դժուարին արիստն, նստեց, թաց մաաները սրբեց վերարկուով և ինքնազօժ նայեց ներկայ եղողներին:

— Տեսնո՞ւք աւազակը, — ասաց դատաւորներից մէկը՝

ախանջը քորելով: Բայց միւսը, սուսական լայն միրուքով և թուրքական աչքերով, երագուն հայեացքն ուղղեց դէպի վեր, ժպտաց ու առարկեց.

— Բայց ճիշտ որ հետաքրքիր է:

Եւ հանդիստ սրտով, առանց խղճահարութեան ու ցաւակցութեան՝ դատաւորները Յիգանին մահուան դատապարտեցին:

— Ճիշտ է, — ասաց Յիգանը, երբ դատավճիռը կարգացին: — Լայնարձակ դաշտում, կախաղանի վրայ: Ճիշտ է:

Եւ դառնալով զինուորին, հերոսաբար գոչեց.

— Դէ գնանք, տօ, իշու գլուխ: Հրացանդ պինդ բռնիր, թէ չէ հա՛ — կը խլեմ:

Ձինուորը գէժքը խոժոռած կասկածով նայեց նրան, ապա ընկերովը և շոշափեց հրացանի փակը: Նոյնն արեց և ընկերը: Եւ ամբողջ ճանապարհը մինչև բանա, զինուորները կարծես չէին գնում, այլ թռչում էին օդի մէջ, այնպէս էին տարուել ոճրագործով, որ չէին գգում ոչ գետինը ոտների տակ, ոչ ժամանակը և ոչ էլ իրենք իրենց:

Նախ քան կախաղան հանելը Միշկա Յիգանը, ինչպէս և Եանսոնը ստիպուած եղան տանուետի օր բանտում մնալ: Եւ այդ բոլոր օրերը անցան այնպէս արագ, աննկատելի կերպով, ինչպէս մի օր — ինչպէս մի անխուսափելի միտք փախուստի, ազատութեան և կեանքի մասին: Յիգանի մէջ բուն դրած սատանան, որին այժմ ճնշում էին պատերը, վանդակները, և խուլ ու անկենդան լուսամուտը, իր բոլոր կատաղութիւնը կենտրոնացրել էր նրա ներսում և այրում էր Յիգանի միտքը, ինչպէս տախտակի վրայ թափած ածուխը: Մէկին, բայց անկատար պատկերները Յիգանի երևակայութեան մէջ, կարծես հարբած ու խելագար, յախուռն տարմով թռչում, վազում, իրար էին անցնում ու սլանում, որպէս մի անզուսպ ու շրացուցիչ մըրիկ, և բոլորը վերջ ի վերջոյ հաւաքում էին մի մտքի

շուրջը — փախուսաւ, ազատութիւն և կեանք: Մերթ ձիու պէս ուռցնելով քթածակերը, Յիգանը ամբողջ ժամերով օդն էր հոտհոտում— նրան թւում էր, թէ կանեփի, հրդեհի ծխի կծու խանձահոտ է դալիս. մերթ հոյի պէս պոռոյտ էր զալիս սենեակում, արագ-արագ պատերն էր շօշափում, մատներով թրխկթրխկացնում, չափ ու ձև անում, հայեացքով առաստաղն էր քանդում ու վանդակները սղոցում: Իր անդադար վարքով, նա լուսանցքից դիտող զինւորի հոգուն հասցրեց, այնպէս որ նա, էլ չկարողանալով համբերել, մի քանի անգամ սպառնաց կրակել: Յիգանը պատասխանում էր միայն կոպիտ ծաղրով, և վերջանում էր նրանով, որ հակաճառութիւնը շուտով փոխւում էր օսակական գոեհիկ ու սովորական հայհոյանքի, որ սակայն ոչ ոքի չէր վիրաւորում, և որ կրակելը դարձնում էր անհնարին ու անմիտ:

Գիշերները Յիգանը քնում էր խոր քնով, համարեա առանց շարժուելու, մի անփոփոխ, բայց կենդանի անշարժութեամբ, ինչպէս մի առժամանակ դադար առած զրսպանակ: Բայց վեր թռչելուն պէս, սկսում էր էլի պոռոյտ գալ, խորհել ու շօշափել: Չեռքերը միշտ չոր էին ու տաք, բայց սիրտը երբեմն յանկարծ սառչում էր. կարծես նրա կրծքի մէջ չնալող սառցի կտոր էին գնում, և նրա ամբողջ մարմնով մի չոր սարսուռ էր անցնում: Եւ այդ բուպէներում Յիգանի առանց այն էլ թուլս գէմքը սեանում և կապտաւուն պողպատի գոյն էր ստանում: Մի տարօրինակ բան էր սովորել. կարծես թէ չափազանց ու անտանելի բազր բան կերած լինէր՝ նա շարունակ շրթունքներն էր լիզում, չփչփացնում ու ատամների արանքից չըթացնում, յատակին էր թքում բերանում հաւաքուած լորձուները: Խօսքերը կիսատ էին մնում— այնքան արագ էին սահում մտքերը, որ լեզուն չէր կարողանում հասնել նրանց:

Մի անգամ ցերեկը պահակախմբի զինւորներից մէկի ուղեկցութեամբ ներս մտաւ աւագ վերակացուն, ծուռ-ծուռ նայեց թքով ծածկուած յատակին ու դէմքը խոժոռեց: — Տես ոնց է մուռտառել:

Յիգանն արագութեամբ վրայ բերեց.

— Բա դու, խոզի գլուխ, սաղ աշխարհն ես մուռտառել ու ոչինչ: Ինչո՞ւ գլուխդ խոթեցիր այստեղ:

Նոյն խոժոռ դէմքով վերակացուն առաջարկեց Յիգանին դահիճ դառնալ: Յիգանը ատամները բաց արեց ու հոհոաց:

— Հը, չի՞ ճարւում: Լա՛ւ է: Դէ արի ու կախի, հա՛, հա՛: Վիզ էլ կայ, պարան էլ կայ, բայց կախող չկայ: Ես իմ Աստուածը, լա՛ւ է:

— Կենդանի կը մնաս:

— Բա չէ՞ մէ... Հօ մեռնելուց յետոյ չպիտի քեզ համար մարդիկ կախեմ: Համա ասաց հա՛, էլ վա՛նտո՞ղ:

— Դէ ի՞նչ ես ասում: Գեղ համար մէկ է՝ այսպէս թէ այնպէս:

— Իսկ ձեզանում ո՞նց են կախում: Չլինի՞ սուս ու փուս են խեղդում:

— Չէ, դափ ու զուռնով, — բարկացած հեգնեց վերակացուն:

— Բա ի՞նչ, ախմախ, ի հարկէ դափ ու զուռնով: Ա՛յ, էսպէս — և նա սկսեց մի շախով բան երգել:

— Տօ՛, դու բոլորովին խելքդ կորցրել ես, — ասաց վերակացուն. — է՛յ, ի՞նչպէս: Բան ասա՛, բան հասկանանք:

Յիգանն ատամները բաց արեց:

— Ի՞նչ տղայ ես, էղպէս, շո՛ւտ: Հալա մէկ էլ արի, այն ժամանակ կասեմ:

Պարզ, բայց անկատար պատկերների ուժգին թափից ճնշուած Յիգանի մտքի քասօին աւելացաւ մի նորը՝ Ի՞նչ լաւ է դահիճ դառնալ, կարմիր շապիկը հագած: Եւ նրա

առաջ կենդանի կերպով պատկերացաւ մարդկանցով լի հրապարակը, բարձր կառավրնատեղին և ինքը՝ Յիզանը, կարմիր շապիկը հագած ու կացինը ձեռքին ման է գալիս բարձր տախտակամածի վրայ: Արեւը լուսաւորում է մարդկանց գլուխները, ուրախ պսպղում է կացնի վրայ, և շուրջը այնպիսի շքեղութիւն ու գուարթութիւն է տիրում, որ նոյն իսկ նա, որի գլուխը շուտով կտրելու են, նոյնպէս ժպտում է: Իսկ ժողովրդի յետեւը երևում են սայլեր և ձիերի դնչեր—այդ գիւղացիներն են հաւաքուել գիւղերից, իսկ այն կողմը՝ աւելի հեռուն երևում է դաշտը:

— Ձր՛թ—թքեց Յիզանը, շրթունքները լիզելով: Եւ յանկարծ կարծես մի մորթէ գլխարկ անցկացրին գլուխն ու վայր քաշեցին մինչև բերանը. աչքերը մթնեցան, շունչը կտրուեց, սիրտը դարձաւ չհարող սառցի մի կտոր և չոր սառսուռը անցաւ նրա ամբողջ մարմնով:

Մի երկու անգամ էլ եկաւ վերակացուն, իսկ Յիզանը՝ առամները բանալով էլի նոյն պատասխանն էր տալիս—
— Էդպէս շո՛ւտ. չէ հալս մէկ էլ արի:

Վերջապէս մի օր վերակացուն լուսանցքից անցողակի կերպով նայեց ու ասաց.

— Բախտդ ձեռքիցդ թոցրիք, հայվան: Ուրիշը ձարեցին:

— Ձհանգամ, կուզես ինքդ կախիր, — կատաղած վրայ բերեց Յիզանը: Եւ դադարեց ելապել դահձութեան մասին:

Բայց քանի մօտենում էր մահուան օրը, այնքան աւելի անտանելի էր դառնում պատկերների ընդհատուած շարքի ուժգին թափը: Յիզանն արդէն ուզում էր կանգ առնել, ոտները բաց արած գետնին հուպ տալով, կանգ առնել—բայց ոլորապտոյա յորձանքը քշում էր նրան, և ոչ մի բան չկար, որից կարողանար բռնել ու կանգ առնել՝ շուրջն ամեն ինչ լողում, վազում էր: Քունն էլ արդէն անհանգիստ էր դարձել: Երևացին նոր, ծանր ու

ուռած երազներ, նման գոյնզգոյն ներկած փայտէ կլոր փեթակների, երազներ, որ սլանում էին աւելի յախուռն թափով, քան միտքը: Այդ արդէն այլ ևս յորձանք չէր, այլ անվերջ սարից մի անվերջանալի գահավիժումն, մի ոլորուն թռիչք տեսանելի-նախշուն ափեզերքի ծոցում: Երբ Յիզանն ազատ էր, Փրանտի պէս միայն ոլորած բեխեր էր պահում, իսկ այժմ բանտում բսել էր նրա դէմքին սև, կարճ ու ծակծկող միրուք, որ նրան խելագարի տեսելի տեսք էր տալիս: Ժամանակ առ ժամանակ Յիզանն իրօք իրեն կորցնում էր և անմտօրէն պտոյա էր գալիս սենեակի մէջ, բայց և այնպէս շօշափում էր ծեփած ու խորթ ու բորդ պատերը: Եւ շուրջ խմում էր ձիու պէս:

Մի անգամ երեկոյեան դէմ, երբ նոր էին վառել կրակները, Յիզանը չորեքթաթ ելաւ յատակի վրայ և դողդողուն ձայնով սկսեց գայլի պէս ոռնալ: Այդ ժամանակ նա իրեն առանձնապէս լուրջ էր պահում և ոռնում այնպէս, կարծես մի մեծ ու կարևոր գործ էր կատարում: Արտղ կուրծքը լցնում էր օդով և կամաց-կամաց դուրս թողնում տեւական ու դողդողուն ուննոցով. և ուշքը լարած, աչքերը խփած, ախանջ էր գնում, թէ ինչպէս է դուրս գալիս: Չայնը, կարծես, գիտամար էր դողդողացնում: Այդ մի անմիտ գոռգոռոց չէր. անասելի սարսափով ու թախիծով լի այդ գազանային ոռնոցի ամեն մի կտորը նա դուրս էր բերում ամենայն խնամքով:

Ապա յանկարծ կտրեց ոռնոցը և մի քանի բոպէ, առանց վեր կենալու, լուռ մնաց նոյն դրութեան մէջ: Եւ շարունակելով գետնին նայել, նա յանկարծ կամացուկ շշնջաց.

— Աղաւնեակներ, հոգեակներ... Խղճացէք, ողորմեցէք... Աղաւնեակներ, հոգեակներ...

Եւ կարծես էլի ախանջ էր գնում, թէ ինչպէս է

գուրս գալիս: Ասում էր ու ականջ դնում:

Յետոյ վեր թռաւ և սկսեց, առանց շունչ քաշելու, մի ամբողջ ժամ հայհոյանքներ թափել:

— Այ ես ձեր... ես ձեր էն-էն-էն... գոռում էր նա արնակալած աչքերը շուռ տալով: — Կախում էք, կախէք, թէ չէ... ես ձեր էն...

Եւ կաւճի պէս սպիտակած զինուորը, դայրոյթից ու սարսափից լաց էր լինում ու հրացանի փողով խփում էր դռանը և գոռում:

— Կը սպանեմ, Աստուած վկայ, կը սպանեմ: Լսում ես:

Բայց չէր համարձակում կրակել, որովհետև մահուան դատապարտուածների վրայ չէին կրակում, քանի դեռ ապստամբութիւն չկար: Իսկ Յիզանն ատամները կրճտացնում էր, հայհոյում ու թքում — նրա մարդկային ուղեղը կեանքի ու մահուան սուր եզերքին մաս-մաս էր լինում, ինչպէս չոր ու հողմահար կաւի մի կտոր:

Գիշերը երբ մտան Յիզանի սենեակը, որ տանեն կախելու, նա իրար անցաւ և կարծես կենդանութիւն ստացաւ: Բերանն աւելի քաղցրացաւ, և թուրը սկսեց հաւաքուել մեծ արագութեամբ, բայց այտերը փոքր ինչ շառագունեցին և աչքերի մէջ փայլեց նախկին կիսավայրենի խորամանկութիւնը: Հագնուելիս նա հարցրեց պաշտօնեային.

— Կախողն ո՞վ է լինելու: Նո՞րը: Ո՞վ գիտէ դեռ անփորձ է:

— Այդ մասին կարող էք անհանգիստ չլինել — չոր-չոր պատասխանեց պաշտօնեան:

— Ոնց թէ անհանգիստ չլինել, ձերդ մեծապատուութիւն, ախար կախուողն ես եմ, հօ դուք չէք: Դուք գոնէ պարանի համար թագաւորական սապոնը մի խնայէք:

— Լաւ, լաւ, խնդրեմ լռէք:

— Թէ չէ, այ, էդ մարդը սաղ սապոնը կերել է, —

ասաց Յիզանը, մատը ուղղելով դէպի վերակացուն, — տեսէք, ոնց է ուխը պսպղում:

— Լռի՛ր:

— Դէ, չխնայէք:

Յիզանը հռնաց, բայց բերանն աւելի ու աւելի քաղցրանում էր, և յանկարծ մի տարօրինակ կերպով ստներն սկսեցին համրանալ: Բայց այնուամենայնիւ բակ դուրս գալիս նա կարողացաւ բացականչել.

— Բերէք Բէնգալեան գրաֆի կարետը:

5. ՀԱՄԲՈՒՐԻՐ ՈՒ ԼՈՒՐ.

Հինգ տեւորիստներին յայտնեցին վերջնական ձևով վճիռը, որ և նոյն օրը վաւերացուեց: Գատապարտեալներին չասացին, թէ երբ են կախելու, բայց նորա գիտէին ինչպէս այդ անում էին սովորաբար, իրանց էլ պէտք է կախեն հէնց նոյն գիշերը, կամ շատ-շատ հետևեալ: Եւ երբ միւս, այսինքն՝ հինգշաբթի օրը նրանց առաջարկեցին ծընողների հետ տեսնուել, հասկացան, որ կախելու են ուրբաթ լուսաբացին:

Տանիա Կովալչուկը մօտիկ ազգականներ չունէր, եղածներն էլ Մոլորոսիայի մի ինչ որ խուլ անկիւնում էին գտնուում և հազիւ թէ գիտէին դատի և գալիք մահուան մասին. Մուսիայի ու Վերների բարեկամների մասին խօսք անգամ չէր կարող լինել, որովհետև նրանք չյայտնեցին իրանց ով լինելը. այնպէս որ միայն երկուսը՝ Սերգէյ Գոլովինն ու Վասիլիյ Կաշիրինը պիտի տեսնուէին իրանց ծնողների հետ: Եւ երկուսն էլ սարսափով ու վշտով էին մտածում այդ տեսակցութեան մասին, բայց չէին համարձակում զրկել ծերունիներին վերջին խօսակցութիւնից, վերջին համբոյրից:

Այդ տեսակցութիւնն առանձնապէս տանջանք էր պատճառում Սերգէյ Գոլովինին: Նա շատ էր սիրում իր հօրն ու մօրը. շատ չէր անցել, որ տեսնուել էր նրանց հետ և այժմ սարսափով էր մտածում, թէ այդ ինչ է լինելու: Նոյն իսկ մահը իր անսովոր ու հրէշային էութեամբ և ուղեղը կիսող խելահեղութեամբ աւելի հեշտ էր պատկերացնել և թւում էր, թէ այնքան սարսափելի չէ, որքան տեսակցութեան այդ մի քանի կարճ-անհասկանալի բոպէները, որ կարծես թէ կանգնած էին ժամանակից ու նոյն իսկ հէնց կեանքից դուրս: Ի՞նչպէս նայել, ի՞նչ մտածել, ի՞նչ ասել,— չէր կարողանում ըմբռնել նրա մարդկային միտքը: Ամենից պարզ և սովորական ձևն էր՝ ձեռքը բռնել համբուրել ու ասել «բարև հայրիկ»: Բայց հէնց այդ անհնարին էր ու սարսափելի իր հրէշային, անմիտ ու խելագար կեղծութեամբ:

Մահավճուրից յետոյ դատապարտեալներին միասին չը նստեցրին, ինչպէս ենթադրում էր կովալչուկը, այլ իւրաքանչիւրին թողին իր առանձնութեան մէջ: Ամբողջ առաւօտ մինչև ժամի 11-ը, երբ եկան Սերգէյ Գոլովինի ծնողները, նա կատաղած քայլում էր սենեակի մէջ, ձրգձգում էր միրուքը, խղճալի կերպով կնճռոտում ու մըրթմըրթում էր: Երբեմն յանկարծ կանգ էր առնում, կուրծքը լիքը լցնում էր օդով և ուժգին արտաշնչում, որպէս ջրի տակ երկար մնացած մի մարդ: Բայց նա այնպէս առողջ էր, այնպէս հաստատուն կերպով նստել էր նրա մէջ երիտասարդ կեանքը, որ նոյն իսկ այդ անսպասելի տանջանքների բոպէներին արիւնը եռում էր կաշուի տակ, այտերը կարմրում էին, և աչքերը մի պայծառ, անմեղ կապտութիւն ստանում:

Մակայն ամեն ինչ անցաւ շատ աւելի լաւ, քան սպասում էր Սերգէյը:

Ամենից առաջ տեսակցութեան սենեակը մտաւ Սեր-

գէյի հայրը, պաշտօնաթող գնտապետ, Նիկոլայ Սերգէյ-վիչ Գոլովինը: Նա ամբողջապէս սպիտակ էր՝ դէմքը, միրուքը, մազերը և ձեռները, կարծես մի ձիւնէ արձան էր մարդկային զգեստներով զարդարուած. հագել էր էլի նոյն հնամաշ, բայց լաւ մաքրած ու նոր ուսագիրներով սիւրտուկը, որից դեռ բենզոլինի հոտ էր գալիս: Ներս մտամի վեհ հանդիսաւորութեամբ, հաստատ ու որոշակի քայլերով, սպիտակ, չոր ձեռքը մեկնեց և բարձր ձայնով ասաց:

— Բարև, Սերգէյ:

Նրա յետևից մանրիկ քայլերով գալիս էր մայրը մի տարօրինակ ժպիտ երեսին: Բայց նա էլ սեղմեց օրդու ձեռքը և բարձր ձայնով կրկնեց.

— Բարև, Սերեօժենիկա:

Ապա համբուրեց շրթունքները — և լուռ նստեց: Չընկաւ նրա վզովը, լաց չեղաւ, ազդակ չբարձրացրեց, ոչ մի սարսափելի բան չարեց, ինչպէս սպասում էր Սերգէյը, — այլ համբուրեց — ու լուռ նստեց: Նոյն իսկ զոզոջուն ձեռքերով աղղեց մետաքսէ սև զգեստը:

Սերգէյը չգիտէր, որ ամբողջ նախընթաց գիշերը, գնտապետը իր առանձնասենեակում փակուած, լարելով իր բոլոր ոյժերը, քննում էր այս ծիսակատարութեան կարգը: Մենք պարտական ենք ոչ թէ ծանրացնել, այլ թեթևացնել մեր օրդու վերջին բոպէները, հաստատ որոշեց գնտապետը և սկսեց ամենայն խնամքով կշռադատել վաղուան խօսակցութեան իւրաքանչիւր նախադասութիւնը, իւրաքանչիւր շարժումը: Բայց երբեմն թիւը կորցնում էր, մոռանում էր և այն, որ արդէն պատրաստել էր և բազմոցի մի անկիւնը քաշուած, աղիողորմ լալիս էր: Իսկ առաւօտեան բացատրեց կնոջը, թէ նա ինչպէս պիտի պահէր իրեն տեսակցութեան ժամանակ:

— Ամենալոյսաւորը, համբուրի՛ր — ու լո՛ւր — սովորեց-

նում էր գնտապետը: — Յետոյ կարող ես և խօսել, մի քիչ անցնելուց յետոյ, իսկ համբերելու ժամանակ լռիր: Չիինի թէ համբուրելուց յետոյ անմիջապէս սկսես խօսել, թէ չէ այն չես ասի, ինչ որ պէտք է, հասկանում ես:

— Հասկանում եմ, Նիկոլայ Սերգէեւիչ, — պատասխանում էր մայրը արտասուքն աչքերին:

— Եւ չլսա: Աստուած մի արասցէ, որ լաց լինես, պառաւ, եթէ լաց եղար, գիտցիր, նրա համար մահ է:

— Հապա դու ինչո՞ւ ես լաց լինում:

— Գուք ո՞ւմ չէք լացացնի որ: Չէ՛, չպիտի լանք, լսում ես:

— Լաւ, Նիկոլայ Սերգէեւիչ:

Կառքի մէջ նա մէկ էլ էր ուզում կրկնել խրատը, բայց մոռացաւ: Եւ այսպէս երկու ձերուներէն լուռ ու կծկծուած գնում էին և խորհում, իսկ քաղաքում կենդանութիւն ու աղմուկ էր տիրում. բարիկենդանի շաբաթն էր, փողոցները լիքն էին մարդկանցով ու աղմուկով:

Նստեցին: Գնտապետը իր նախապատրաստած զիրքն ընդունեց, աջ ձեռքը ծոցը գնելով: Սերգէյը մի վայրկեան նստած մնաց, տեսաւ մօտիկից մօր կնճռոտ դէմքն ու վեր թռաւ:

— Նստիր, Սերգէյ ջան, — խնդրեց մայրը:

— Նստիր, Սերգէյ, — պնդեց հայրը:

Լռեցին: Մայրը տարօրինակ կերպով ժպտում էր:

— Որքան դէս ու դէն ընկանք քեզ համար, Սերեօ՝ ժենկա: Հայրդ . . .

— Ի գուր, մայրիկ . . .

Գնտապետը անհողորդ ձայնով ասաց.

— Մենք պարտական էինք այդ անել, Սերգէյ, որ չը կարծէիր, թէ ծնողներդ թողել են քեզ:

Նորից լռեցին: Սարսափելի էր թւում խօսքեր արտասանել, կարծես իւրաքանչիւր արտասանուած բառը կորցնում էր իր նշանակութիւնը և միայն մի բան էր

արտայայտում՝ մահ: Սերգէյը նայեց հօր մաքուր սիւրտուկին, որից բենզինի հոտ էր գալիս, և մտածեց՝ ծառայ չունենք այժմ, ուրեմն նա ինքն է մաքրել: Ի՞նչպէս է որ ես առաջ չէի նկատում, թէ նա երբ էր մաքրում իր սիւրտուկը: Երևի առաւօտները: Եւ յանկարծ հարցրեց:

— Քոյրս ինչպէս է: Առողջ է:

— Նինո՛չլան ոչինչ չզիտէ, — շտապով պատասխանեց մայրը:

Բայց գնտապետը խստութեամբ ընդհատեց.

— Ինչո՞ւ ստենք: Երեխան կարգացել էր լրագրներում: Թող Սերգէյը իմանայ, որ բոլոր . . . մերձաւորները . . . այդ ժամանակ . . . մտածում էին և . . .

Էլ չկարողուցաւ շարունակել ու կանգ առաւ: Յանկարծ մօր դէմքը միանգամից սրորուեց, հալուեց, ձգուեց, երբ-բայց, թացացաւ ու վայրենի արտայայտութիւն ստացաւ: Խուսուցած աչքերը խենթօրէն շրջուեցին, շնչառութիւնը դարձաւ կարճ, արագ ու բարձր:

— Սե . . . սեր . . . սե . . . սե . . . — կրկնում էր նա, առանց

շրթունքները շարժելու: — Սե . .

— Մայրիկ:

Գնտապետն առաջ քայլեց, սիրտուկի իւրաքանչիւր ծալքը, դէմքի իւրաքանչիւր կնճիւրը դողում էին և նա, առանց հասկանալու, թէ ինքն որքան սարսափելի է իր մեռելային սպիտակութեամբ, իր անվրդով մնալու յուսահատական ճիգերով, դարձաւ կնոջը.

— Լռիր: Մի տանջիր նրան: Մի տանջիր: Մի տանջիր: Նա պիտի մեռնի: Մի տանջիր:

Մայրը վախեցած արդէն լռել էր, իսկ նա դեռ շարունակում էր սեղմած բուռնցքները շարժել ու կրկնել.

— Մի տանջիր:

Ապա յետ-յետ գնաց, դողդոջուն ձեռքերը էլի ծոցը դրեց և բռնազբօսիկ անվրդովութեամբ, սպիտակ շրթունք-

ները շարժելով, բարձրաձայն հարցրեց.

— Ե՞րբ:

— Վաղը առաւօտեան — նոյնպէս սպիտակած շրթունքներով պատասխանեց Սերգէյը:

Մայրը ցած էր նայում, կրժոտում էր շրթունքները և կարծես ոչինչ չէր լսում: Եւ շարունակելով կրժոտել, կարծես թէ վայր ձգեց բերանից այս պարզ օտարոտի խօսքերը.

— Նինոյիկան պատուիրեց քեզ համբուրել, Սերեօթա շան:

— Համբուրիր նրան իմ կողմից, մայրիկ, — ասաց Սերգէյը:

— Լաւ: Բարևում են նաև Խփոստոյները:

— Ո՞ր Խփոստոյները: Ա՛խ, հա:

Գնտապետը ընդհատեց:

— Դէ, գնանք: Վեր կաց, մայր, ժամանակ է:

Երկուսով բարձրացրին թուլացած մօրը:

— Մնաս բարով ասան, — հրամայեց գնտապետը: — Սաչակները:

Մայրը բոլորը կատարում էր, ինչ որ ասում էին, բայց խաչակներելով ու կարճ համբոյրներ գրոշմելով որդու գէմքին, նա շարունակ շարժում էր և անմիտ կերպով կրկնում.

— Չէ, այսպէս չէ: Այսպէս չէ: Չէ, չէ: Յետոյ ես ի՞նչպէս: Ես ի՞նչ ասեմ: Չէ, այսպէս չէ:

— Մնաս բարով, Սերգէյ — ասաց հայրը: Նոքա իրար ձեռք սեղմեցին և միայն մի անգամ, բայց ամուր համբուրուեցան:

— Դու . . . — սկսեց Սերգէյը:

— Ի՞նչ — կարուկ հարցրեց հայրը:

— Չէ, այսպէս չէ: Չէ, չէ: Հապա ես ի՞նչ ասեմ. — կրկնում էր մայրը գլուխը շարժելով: Նա արդէն նորից

նստել էր և ամբողջ մարմնով ձօձում էր:

— Դու . . . նորից սկսեց Սերգէյը: Յանկարծ մի խղճալի, երեխայական արտայայտութեամբ դէմքը կնձռեց. աչքերը լցուեցան արտասուքով, որոնց փայլուն ու թափանցիկ շղարշի միջից նա կարողացաւ մօտիկից տեսնել հօր սպիտակ դէմքն ու նոյնպէս արտասուքներով լի աչքերը:

— Դու, հայրիկ, ազնիւ մարդ ես:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, — վախեցած կրկնեց գնտապետը: Եւ յանկարծ՝ կարծես թէ կոտորուեց ու ընկաւ որդու ուսին: Առաջ նա Սերգէյից աւելի բարձր էր, իսկ այժմ կարճացել էր, ու թաւամազ, չոր գլուխը՝ որպէս՝ մի սպիտակ գունա՝ ընկել էր որդու ուսին: Երկուսն էլ լուռ, ագահութեամբ համբուրում էին — Սերգէյը՝ հօր սպիտակ թաւ մազերը, իսկ հայրը՝ նրա կալանաւորի վերարկուն:

— Հապա ես, — լսուեց յանկարծ մի բարձր ձայն:

Յետ նայեցին, մայրը կանգնել էր, գլուխը յետ էր ձգել և զայրոյթով, համարեա ատելութեամբ նայում էր նրանց:

— Ի՞նչ ես ասում, պառաւ, — բացականչեց գնտապետը:

— Հապա ես, — ասում էր նա գլուխը շարժելով, խեղազար արտայայտութեամբ: — Դուք համբուրում էք, ապա ես: Տղամարդիկ էք, հա: Ապա ես: Ապա ես:

— Մայրիկս, — գոչեց Սերգէյն ու մօր վզովն ընկաւ: Եւ կատարուեց այն, որի մասին չի կարելի և պէտք էլ չէ պատմել:

Գնտապետի վերջին խօսքերն էին.

— Օրհնում եմ քո մահը, Սերեօթա: Մեռիր քաջաբար, որպէս զօրական:

Եւ գնացին: Յանկարծ գնացին: Եկան կանգնեցին, խօսեցին — ու յանկարծ գնացին: Ա՛յ, այստեղ նստել էր

մայրը, այստեղ կանգնել հայրը, և յանկարծ գնացին: Սերգեյը վերադարձաւ իւր սենեակը, պառկեց մահճակալը վրայ, երեսը պատին արեց, որ թագնուի զինւորներէց, և երկար լաց էր լինում: Ապա արտասուքներէց յոգնած խոր քնի մէջ ընկաւ:



Վասիլիյ կաշիրինի մօտ եկաւ միայն մայրը — հայրը մի հարուստ առևտրական, չկամեցաւ գալ: Թէև սենեակում տաք էր և նոյն իսկ շոգ, բայց Վասիլին քայլում էր ու գողում ցրտից, երբ ներս մտաւ պառաւ մայրը: Տեղի ունեցաւ մի կարճ ու ճնշող խօսակցութիւն:

— Աւերորդ էր ձեր գայլը, մայրիկ: Թէ ձեզ, թէ ինձ միայն տանջանք պիտի պատճառէք:

— Ախար ինչո՞ւ, Վասիա: Ինչո՞ւ արիւր այդ: Տէր Աստուած: Պառաւը սկսեց լաց լինել, և սև, բրդէ թաշկի-նակի ծայրերով աչքերը սրբել: Վասիլին էլ իր եղբայրների նման, սովորութիւն ունէր միշտ զոռալ իր անհասկացող մօր վրայ. այժմ էլ կանգնեց ու ցրտից զողալով՝ բարկութեամբ ասաց.

— Ահա: Գիտէի, որ այդպէս պիտի լինէր: Ախար դուք ոչինչ չէք հասկանում, մայրիկ, ոչինչ:

— Իէ, լաւ, լաւ: Ի՞նչ է, ցո՞րա է:

— Տուրա է... — արտասանեց Վասիլին ու էլի սկսեց քայլել, ծուռ-ծուռ նայելով մօրը:

— Գուցէ մըսել ես:

— Է՛հ, մայրիկ, ինչ մըսել, ինչ բան, երբ...

Եւ յուսահատութեամբ ձեռքը շարժեց: Պառաւն այն է՝ ուզում էր ասել. «Բա չես տես, հայրդ հրամայեց երկուշաբթի օրուանից բլիթ թխեմ», բայց վախեցաւ ու ասաց.

— Ասում էի, ախար տղադ է, դնա՛, թողութիւն տուր: Չէ, յամառեց իշի պէս...

— Է՛, ջհանգամը: Նա ինչ հայր է որ: Սրիկայի մէկն էր, սրիկայ էլ մնաց:

— Վասենկա, էդ հօրդ ես ասում — նախատեց պառաւը փոքր ինչ ձգուելով:

— Հօրս:

— Հարազատ հօրդ:

— Ի՞նչ հարազատ հայր:

Վայրենի ու անմիտ էր այս բոլորը: Առջևում կանգնած էր մահը, իսկ այստեղ բուսնում էր մի ինչ որ փոքրիկ, դատարկ, անպէտք բան և բառերը չըթչըթում էին, ինչպէս ոտքի տակ ձգած ընկոյզի դատարկ կձեպներ: Եւ Վասիլին գոռաց համարեա լաց լինելով այն ցաւից, այն դառն զգացումից, որ ինքն ու իր մերձավորները երբէք միմեանց չեն կարողացել հասկանալ, զգացում, որ պատի պէս կանգնել էր բոլոր ժամանակ նրա ու ծնողների մէջ, և որ այժմ, կեանքի վերջին ժամին, վայրենաբար չուել է իր փոքրիկ անմիտ աչքերը:

— Վերջապէս, հասկացէք, որ ինձ պիտի կախեն: Պիտի կախեն: Հասկանում էք: Պիտի կախեն:

— Թող մարդկանց ձեռք չտայիր, քեզ չէին... — գոչեց պառաւը:

— Տէր Աստուած: Այս ի՞նչ է: Ախար այդպիսի բան գազաններն անգամ չեն անի: Ես ձեր որդին եմ, թէ չէ:

Նա լաց եղաւ և քաշուեց մի անկիւն: Լաց եղաւ նաև պառաւը իր անկիւնում: Անգոր լինելով գոնէ մի բոպէ միախառնուել սիրոյ ջերմ զգացումով և այն հակադրել գալիք մահուան սարսափին, լալիս էին նոքա միայնակութեան ցուրտ, սիրտ չտաքացնող արցունքներով: Մայրն ասաց.

— Դու ասում ես, ես քո մայրն եմ, թէ չէ, նախա-

տում ես ինձ: Իսկ ես էս քանի օրը բոլորովին ճերմակել, պառակել եմ: Դու գեռ խօսում, նախատում ես:

— Է՛, լաւ, լաւ, մայրիկ: Ներեցէք: Գնալու ժամանակն է: Համբուրեցէք եղբայրներս:

— Բա ես մայր չեմ: Բա ես չեմ խղճում:

Վերջապէս գնաց: Լալիս էր դառնագին, սրբում թաշկինակի ծայրերով աչքերը, չէր տեսնում ճանապարհը: Եւ քանի շատ էր հեռանում բանտից, այնքան աւելի դառնութեամբ էին թափում արցունքները: Յետ գնաց զէպի բանտ, յետոյ վայրենու պէս մոլորուեց այն քաղաքում, որտեղ ծնուել, մեծացել ու ծերացել էր: Քաշ գալով հասաւ մի ինչ որ ամայի սյգի, ուր միայն մի քանի կտորտուած, հին ծաւեր կային, և նստեց ձիւնից գեռ չը չորացած, թաց նստարանի վրայ: Եւ յանկարծ կարծես միայն այժմ հասկացաւ, որ նրան վաղը պիտի կախեն:

Պառաւր վեր թռաւ, կամեցաւ փախչել, բայց յանկարծ գլուխը խիստ պտտուեց, և նա վայր ընկաւ: Ստոցով ծածկուած ճանապարհը թացացել, սայթաքուն էր դարձել ու պառաւր ոչ մի կերպ չէր կարողանում վեր ելնել. պտտում էր, մի փոքր բարձրանում էր արմունկների ու ծնկների վրայ և էլի վայր ընկնում կողքի վրայ: Սև թաշկինակը վայր ընկաւ գլխից և կեցտոտ, աչխառն մազերի միջից երևան հանեց ծոծրակի ճաղատը. և յանկարծ նրան թուաց, որ հարսանիքում ուրախութիւն է անում. իբր թէ որդուն պսակում են, և ինքը խմել ու թունդ հարբել է:

— Չեմ կարող: Էն Աստուածը, չեմ կարող — հրաժարւում էր նա, շարժելով գլուխը, ու սողում էր սառուցի թաց շերտի վրայ, իսկ նրա համար շարունակ գինի էին լցնում ու լցնում:

Եւ արդէն սիրաւ սկսում էր ցաւել գինարբութիւնից ու ծիծաղից, հիւրասիրութիւնից ու խոլական

պարից, — իսկ նրա համար շարունակ գինի էին լցնում: Շարունակ լցնում:

6. ԺԱՄԵՐԸ ՍԱՀՈՒՄ ԵՆ.

Բանտում, ուր նստած էին դատապարտեալ տեղորիսաները, գտնւում էր մի զանգակատուն իւր վաղեմի ժամացոյցով: Ժամացոյցը, տարափոխիկ թուշունների հետո՛ւ էթերում հարող մարմաշուն կտտանչի նման, թախժոտ զրնդոցով, ծանր-ծանր խփում էր իւրաքանչիւր ժամը, կէսը և քառորդը: Յերեկները այդ ախուր ու օտարոտի երաժշտութիւնը կորչում էր քաղաքի, բանտի մօտ ընկած մեծ ու մարդաշատ փողոցի ժխորի մէջ: Ազմկում էին արամվայները, չըխկ-չըխկում էին ձիերի սմբակները, հեռուից զբմփ-զբմփում ու գոռում էին օրօրեղ աւտոմոբիլները: Բարիկենդանի պատճառով քաղաք էին եկել շրջակայքի զիւղացի կտտապանները իրենց զարգարուն կտոքերով, բոժոժաւոր, կարճահասակ ձիերը լծած, և օդն էին խլացնում իրենց զընգընդոցով: Հարբած մարդիկ համակուած բարիկենդանի արամաղրութեամբ ուրախ-ուրախ զրոյց էին անում ու ազմկում: Եւ այդ իրարանցման այնքան ներդաշնակ էր նորածիլ գարնան հալիցը, մայթերի վրայ հաւաքուած պղտոր լճակները և պարտիգի յանկարծակի սեւչան ծառերը: Ծովից լայն հոսանքով փչում էր խոնաւ ու տաք քամին. թւում էր, որ նոյն իսկ աչքերով կարելի էր տեսնել, թէ ինչպէս զի մաշիկ, թարմ մասնիկները միանամուտ թոխչքով սլանում են զէպի ազատ ու անեզր հեռուն, սլանում են ու ժպտում:

Գիշերը կրկտրական արեղակների լոյսի մենակութեան մէջ մի անգորր էր ախրում: Եւ այն ժամանակ

հակայական բանար, որի հարթ պատերի մէջ ոչ մի լոյս չէր երևում, կորչում էր մթութեան ու խաղաղութեան մէջ և լուսութեան, անշարժութեան ու խաւարի մի գծով բաժանւում էր միշտ կենդանի ու շարժուն քաղաքից: Եւ միայն այն ժամանակ լուում էր ժամացոյցի ձայնը. երկրին խորթ այդ տարօրինակ մեղեդին տխուր ու զանդաղ ծնւում ու մարում էր բարձանքում: Ծնւում էր նորից, ականջը խաբելով, հնչում կամայ ու ողբաձայն—ընդհատւում էր— ու նորից հնչում: Անիմանայի բարձունքից ժամերն ու րոպէները որպէս մեծ, թափանցիկ ու ապակե-նման կաթիլներ վայր էին ընկնում մեղմ գողանջող մետաղէ բաժակի մէջ: Կամ սահում անցնում էին տարափոխիկ թռչունները:

Չոկ-Չոկ սենեակներում փակուած բանտարկեալների ականջին զիշեր ու ցերեկ միայն այդ զընդօցն էր հասնում: Տանիքից, քարէ հաստ պատերի միջից նա ներս էր մտնում, խաղաղութիւնը վրդովելով, ապա աննկատելի կերպով հեռանում էր, որպէսզի աննկատելի կերպով նորից դայ: Երբեմն մտտանում էին և էլ չէին լուում այդ ձայնը, բայց երբեմն էլ նրանք միայն այդ զընդօցներով էին ապրում և հաւատ չը ընծայելով լուսութեան, յուսահատ անհամբերութեամբ սպասում էին նրանց: Միայն ամենակարևոր ոճրագործների համար էր այս բանար, և արտատվոր կարգ ու կանոն էր տիրում այնտեղ՝ զաժան, անողորմ ու ամբաղուտ, ինչպէս բանտի հուսաբեւտ պատերի անկիւնները: Եթէ զաժանութեան մէջ կարող է լինել վեճութիւն, ապա վեճ էր այդ խուլ, հանգիսաւոր, համր ու անկենդան լուսութիւնը: Եւ այդ հանգիսաւոր լուսութեան մէջ, որ երևում էր սահող րոպէներէ տխուր ձայնից, հիւսկ հողի՝ երկու կին և երեք աղամարդ, միանգամայն կորուած կեանքից ու աշխարհից, սպասում էին զիշերուան, լուսաբացին ու ապա մահուան, և իւրաքանչիւրն իր ձեով պատրաստում էր դիմաւորել նրան:

7. Չ Կ Ա Յ Մ Ա Հ.

Ինչպէս Տանիա Կովալչուկը իր ամբողջ կեանքում մտածել էր շարունակ միայն ուրիշների, բայց ոչ երբէք իր մասին, այնպէս էլ այժմ նրան հոգս ու վիշտ էին պատճառում ընկերները: Մահը պատկերացնում էր միայն իբրև Սերեոժա Գոլովինին, Մուսիային և միւսներին տանջող մի բան—իսկ իրեն համար նա կարծես նոյն իսկ գոյութիւն չունէր: Իբրև վարձատրութիւն իր այն ակամայ ատկուանութեան համար, որ ցոյց տուեց դատարանում, նա մի ամբողջ ժամ կուշտ լաց եղաւ—ինչպէս լալիս են շատ դարդ ու ցաւ տեսած պառաւ կանայք, կամ երիտասարդ, բայց շատ բարի ու լալիսն մարդիկ: Եւ այն ենթադրութիւնը, թէ մի գուցէ Սերեոժան ծխախոտ չունի, կամ Վերները մնացել է աւանց իր սիրած մուգ թէյի, և մանուանդ այժմ, երբ նրանք պիտի մեւնեն, — անջում էր նրան գուցէ աւելի, քան այն միտքը, թէ նրանց կախազան պիտի հանեն: Կախաղանը մի անխուսափելի և նոյն իսկ կողմնակի բան է, որի մասին մտածել անզամ չարժէ, իսկ եթէ վարդ բանտում և այն էլ կեանքի վերջին րոպէներին ծխախոտ չունի, — այդ արդէն անտանելի է: Մեծ հաճոյքով յիշում էր իրենց միասին անցկացրած կեանքի բոլոր մանրամասնութիւնները և քարտնում էր սարսափից, երևակայելով Սերգէյի և ծնողների հանդիպումը:

Մի առանձին կսկիծ էր գգում նա մանուանդ գէպի Մուսիան: Վաղուց արդէն նրան թւում էր, թէ Մուսիան սիրում է Վերներին, և չնայելով, որ այդ ենթադրութիւնը բոլորովին սխալ էր, նա այնուամենայնիւ երազում էր երկուսի փայլուն ու երջանիկ ապագայի մասին: Երբ դեռ չէին բռնուած, Մուսիան մի արծաթէ մատանի ունէր, որի վրայ ձևակերպուած էին գանդ, ոսկոր, իսկ շուրջը

փշեայ պսակ: Յաճախ Տանիա Կովալչուկը նայում էր այդ մատանու վրա իբրև դատապարտութեան սիմվոլի, ուստի վշտացած՝ մէկ հանաքով, մէկ լուրջ՝ խնդրում էր Մուսիային, որ հանէ:

—Նուիրիբ ինձ, — թախանձում էր նա:

—Ձէ, Տանեչկա, չեմ նուիրի: Իսկ դու շուտով ուրիշ մատանի կը ունենաս:

Մուսիան և միւս ընկերները կարծում էին, որ Տանիա Կովալչուկն անպայման և այն էլ շատ շուտով մարդու պիտի գնայ, և այդ վիրաւորում էր նրան, — ամուսնութեան մասին նա լսել անգամ չէր ուզում: Յիշելով Մուսիայի հետ ունեցած այդ խօսակցութիւններն ու հանաքները, և այն, որ այժմ Մուսիան իրօք դատապարտեալ է, նա խեղդում էր արցունքներից ու մայրական գորովից: Եւ ամեն անգամ երբ խփում էր ժամացոյցը, բարձրացնում էր իր արտասուածքը աչքերը և ուշադրութեամբ ականջ դնում — թէ այնտեղ միւս սենեակներում ինչպէս են ընդունում այդ ծանր ու անդադրուն մահակոչը: Իսկ Մուսիան երջանիկ էր:

Ձեռքերը մէջքին դրած, նա հաւասար քայլերով անդադար ման էր գալիս. հագել էր կալանաւորի մեծ ու երկար վերարկուն, որ նմանեցնում էր նրան տղամարդու կամ ուրիշի շորերը հագած պատանու: Վերարկուի թևերը երկար էին, ուստի նա ստիպուած էր եղել ծալել, և նուրբ, համարեա մանկական, նիհար ձեռքերը դուրս էին գալիս լայն բացուածքներից, ինչպէս ծաղկի ցողունը կոպիտ ու կեղտոտ կճուճի բերանից: Վերարկուի կոշա կտորը քրտում, բրդոգում ու ցաւեցնում էր նրա նուրբ ու ձերմակ պարանոցը. մէկ-մէկ Մուսիան երկու ձեռքերի շարժումով ազատում էր կոկորդը և մատով զգուշութեամբ շօշափում էր բորբոքուած կաշու այն մասը, որ կարմրել և ցաւում էր:

Մուսիան քայլում էր — և յուզուելով ու կարմրելով

արգարանում էր մարդկանց առաջ: Արգարանում էր այն բանի համար, որ ինքը՝ մի երիտասարդ ու աննշան աղջիկ, որ դեռ շատ քիչ բան է արել և հերոսուհի կոչուելու երբէք արժանի չէ, պիտի մեռնի նոյն վեհ ու պատուաւոր մահով, որով մինչ այդ մեռել են իսկական հերոսներն ու նահատակները: Մարդկային կարեկցութեան, սիրուն ու բարութեան մի անսասան հաւատ տածելով, նա երեակայում էր, թէ ինչպէս մարդիկ իւր պատճառով յուզում ու տանջում են և թէ ինչպէս խղճում են իրեն: Եշակայում էր և կարմրում ամօթից: Կարծես թէ կախաղանի վրայ մեռնելով, նա մի վերին աստիճանի անպատշաճ բան էր կատարում:

Վերջին տեսակցութեան ժամանակ նա խնդրեց իր պաշտպանին, որ թոյն ճարէ, բայց յանկարծ ուշքի եկաւ՝ իսկ եթէ յանկարծ ինչպէս պաշտպանը, այնպէս էլ ուրիշները կարծեն, թէ այդ լոկ անապարձութիւն կամ երկչոտութիւն է, և ինքը՝ փոխանակ համեստ ու աննկատելի կերպով մեռնելու՝ աւելի մեծ ազմուկ հանէ: Ուստի շտապեց վրայ բերել:

—Ձէ, ասենք, հարկաւոր չէ:

Եւ այժմ նա միայն մի բան էր ցանկանում՝ ցոյց տալ ու ապացուցել մարդկանց, թէ ինքը հերոսուհի չէ, թէ մեռնելն այնքան էլ սարսափելի չէ և թող նրա մասին ոչ հոգս քաշեն և ոչ էլ ափսոսան: Ապացուցել, որ ոչ մի մեղք չունի, որ իրեն՝ մի երիտասարդ ու աննշան աղջկայ ենթարկում են այդպիսի մահուան և իր պատճառով այդքան ազմուկ բարձրացնում:

Իսկական մեղադրեալի պէս Մուսիան ամեն հնարք գործ էր դնում արգարանալու համար, աշխատում էր գտնել գոնէ մի բան, որ բարձրացնէ ու իսկական արժէք տար իր գոծին: Նա այնպէս էր դատում:

—Ի հարկէ, ես երիտասարդ եմ և դեռ շատ կարող

էի ապրել: Բայց...

Եւ ինչպէս մոմի լոյսը նսեմանում է ծագող արեգակի շողերի մէջ, այնպէս էլ կեանքն ու երիտասարդութիւնն աղօա ու անգոյն էր երևում այն մեծ ու վսեմ լոյսի առաջ, որ պիտի պսակէր նրա համեստ գլուխը:

Արդարանալու ոչ մի միջոց:

Բայց գնացէ նրան կարողանայ արգարացնել այն, որ նա իր հոգում կրում է անասման սէր, անասման պատրաստակամութիւն հերոսական գործ կատարելու և անասման արհամարհանք դէպի անձը:

Իրօք, չէ՞ ոչ նա մեղաւոր չէ, որ նրան թոյլ չտուին անելու այն ամենը, ինչ որ ուզում էր և կարող էր—սպանեցին նրան տաճարի շէմքին, զոհարանի առաջ:

Բայց եթէ այդ այդպէս է, եթէ մարդուն գնահատելի են զարձնում ոչ միայն նրա կատարած գործերը, այլ և գործելու ցանկութիւնը—ապա ուրեմն... ապա ուրեմն ինքն արժանի է նահատակի պսակին:

Միթէ... մտածում էր Մուսիան ամօթխածութեամբ: Միթէ ես արժանի եմ, որ մարդիկ ինձ համար լաց լինեն, յուզուեն, ինձ՝ մի փոքրիկ ու աննշան աղջկայ համար:

Եւ մի անասելի հրճուանք համակում էր նրան: Էլ ոչ մի կասկած ու տարակուսանք չկայ, նա ընդունուած է, նա ամենայն իրաւունքով դասուում է այն սրբերի շարքը, որ զարեւրից ի վեր խարոյկի, տանջանքի ու կախաղանի վրայով անցնում ու զնում են դէպի վեր—երկինք: Հանգիստ ու անվրդով խաղաղութիւն և անեզր, մեզմ ու գեղսժպիտ երջանկութիւն: Թւում էր, թէ արդէն կտրուել, վեր է բարձրացել երկրից—մօտեցել կեանքի ու ճշմարտութեան անիմանալի արեգակին և իբրև մի անմարմին էակ՝ ճախրում է նրա լոյսի մէջ:

—Եւ այդ անուանում են մահ: Բայց միթէ դա մահ է—մտածում էր Մուսիան երանութեամբ:

Եւ եթէ նրա սենեակը հաւաքուէին աշխարհի բոլոր կողմերից գիտնականներ, փիլիսոփաներ ու դանիճներ, փռէին նրա առաջ իրանց գրքերն ու դանակները, կացիններն ու օղակները և սկսէին ապացուցանել, թէ մահը գոյութիւն ունի, թէ մարդը մեռնում, սպանում է և թէ չկայ—անմահութիւն,—նրանք ամենքը կարողէին միայն զարմանք պատճառել Մուսիային: Ինչպէս թէ չկայ անմահութիւն, երբ ինքը հէնց այս րոպէիս արդէն անմահ է, էլ որ մահուան մասին խօսք կարող է լինել, երբ ինքը հէնց այժմ արդէն մեռած է և անմահ, կենդանի մահուան մէջ, ինչպէս կենդանի էր և կեանքի մէջ:

Եւ եթէ նրա սենեակը բերէին մի զազաղ իւր իսկ նեխուղ ու գարշահոտ մարմնով և ասէին.

—Նայիր, ա յ ս զու ես.

Նա կը նայէր ու կը պատասխանէր.

—Ո՛չ այդ ես չեմ:

Եւ երբ աշխատէին երկիւղ ազդել նրա վրայ քայքայման չարագուշակ տեսքով և ճգնէին համոզել, թէ այդ ինքն է, ինքը,—Մուսիան կը պատասխանէր ժպտադէմ.

—Ոչ: Դուք էք կարծում, թէ այդ ես եմ, բայց այդ ես չեմ: Ես նա եմ, որի հետ դուք խօսում էք, էլ ինչպէս կարող եմ լինել այդ:

—Բայց դու կը մեռնես ու կը դառնաս այդ:

—Ո՛չ, ես չեմ մեռնի:

—Քեզ կը կախեն, անա օղակը:

Ինձ կը կախեն, բայց ես չեմ մեռնի: Ինչպէս կարող եմ մեռնել, քանի որ արդէն այժմ ես անմահ եմ: Եւ գիտնականները, փիլիսոփաներն ու դանիճները յիստ-յիստ կերթային ու սարսափահար կասէին.

—Մի մերձենաք այդ տեղին: Այդ տեղը սուրբ է:

Ուրիշ էլ ինչի՞ մասին էր մտածում Մուսիան: Շատ բաների մասին, որովհետև կեանքի թելը նրա համար չէր

կտրուում մահով, այլ հանգիստ ու հաւասարապէս հիւս-
ւում, ոլորուում էր: Նա մտածում էր և հեռու ընկերներէ
մասին, որ ցաւ ի սիրտ ապրում են իրանց մահը, և այն
մօտիկ ընկերներէ մասին, որոնք իր հետ միասին կա-
ռափնատեղին պիտի բարձրանան: Չարմանքով յիշեց Վա-
սիլիին, ինչո՞ւ նա այնքան վախեցաւ—միշտ քաջ էր և նոյն
խսկ հանաք էր անում մահուան հետ: Օրինակ, հէնց երեք-
շաբթի առաւօտեան, երբ նրանք Վասիլիի հետ միասին
տեղաւորուում էին զօտիների մէջ պայթուցիկ մեքենաները,
որ մի քանի ժամից յետոյ օդը պիտի հանէին շատերի
հետ և իրանց, Տանիա կովալչուկի ձեռքերը դողդողում
էին յուզմունքից, ուստի նրան ստիպուած եղան հեռաց-
նել, մինչդեռ Վասիլին հանաքներ ու ծաղրածութիւններ
էր անում, պտոյտ էր գալիս և նոյն խսկ այնքան անըզ-
գոյշ էր, որ Վերները խստութեամբ նկատեց:

— Չպէտք է խաղ անել մահուան հետ:

Ապա ինչո՞ւ այժմ նա վախեցաւ: Բայց այդ անհասկանալի
մահը այնքան խորթ էր Մուսիայի հոգուն, որ շուտով գա-
զարից այդ մասին մտածել և նրա պատճառը փնտռել:
Յանկարծ նա մի սարսափելի ցանկութիւն զգաց՝ տեսնել
Սերգէյ Գոլովինին և մի ինչ որ բանի վրայ ծիծաղել:
Մտածեց և աւելի խիստ ցանկութիւն զգաց Վերներին
տեսնելու և մի ինչ որ հարցի վերաբերմամբ նրան հա-
մոզելու: Եւ երևակայելով, թէ Վերները ման էր գալիս
նրա հետ միասին, իր որոշակի, չափած-ձեւած քայլերով,
Մուսիան ասում էր նրան.

— Չէ, հոգիս, Վերներ, դրանք բոլորը դատարկ բա-
ներ են, թէ սպանել ես դու № N-ին, կամ ոչ: Դու խելօք
ես, բայց կարծես քո շախմատն ես խաղում—մի քար ա-
ռար, ապա միւր և խաղը քոնն է: Այստեղ կարևորն այն
է, Վերներ, որ մենք ինքներս պատրաստ ենք մեռնելու:
Հասկանում ես: Ախար այդ պարոնները ինչ են կարծում:

Վարժում են, թէ մահից աւելի սարսափելի բան չկայ:
Իրենք հնարել են մահը, իրենք վախենում են նրանից և
մեզ էլ վախեցնում: Եւ նոյն խսկ կը ուղենայի մենակ դուրս
գալ զինւորների մի ամբողջ զնտի դէմ և բրաունինգը ձե-
ռիս անընդհատ կրակել: Ի՞նչ անենք, որ ես մենակ եմ,
խսկ նրանք հազարաւոր, և ես ոչ ոքի չեմ սպանի, կա-
րևորն հէնց այն է, որ նրանք հազարաւոր են: Երբ հա-
զարները սպանում են մէկին, այդ նշանակում է, որ այդ
մէկը յաղթեց: Այդ այդպէս, է Վերներ, հոգիս:

Բայց այդ էլ այնքան պարզ էր, որ Մուսիան էլ չէր
ուզում շարունակել ապացուցանել—Վերներն այժմ երևի
հէնց ինքը հասկացաւ, բայց գուցէ և ուղղակի չէր ու-
զում մի բանի վրայ կանգ առնել նրա միտքը, ինչպէս
ազատ ճախրող մի թռչուն որ տեսնում է անեզր հորի-
զոնները, որին մատչելի են շոյուն ու քնքոյշ կապուտա-
կութեան ամբողջ ընդարձակութիւնը, խորութիւնն ու
բերկրանքը: Ժամացոյցն անդադար խփում էր, համը լը-
սութիւնը վրդովելով, և այդ հեռուից եկող չքնաղ ուներ-
դաշնակ հնչիւնին խառնուում էին մտքերն ու իրենք էլ
սկսում էին հնչել, և այսպէս սահող պատկերներն երա-
ժշտութեան էին փոխուում: Կարծես խաղաղ ու մութ գի-
շերին Մուսիան գնում էր լայնարձակ ու հարթ ճանա-
պարհով և ճօճում էին ընտրներն ու բոժոժները՝ զընգ-
զընգում: Չքացել էին հոգսերն ու յոյզերը, խոնջացած
մարմինը լուծուել էր խաւարի մէջ, և գուարթ-յոգնած
միտքը լուռ ու մունջ ստեղծագործում էր պայծառ պատ-
կերներ, յագնում էր նրանց գոյներով ու մեղմ խաղա-
ղութեամբ: Յիշեց Մուսիան իր երեք ընկերներին, որոնց
մօտ ժամանակներս կախել էին. նրանց դէմքերը պայծառ
էին, ուրախ և իր սրտին մօտ—արդէն աւելի մօտ, քան
նրանց գէմքերը, որոնք ապրում էին. Այդպէս բերկրան-
քով մտածում է մարդ վաղ առաւօտ իր բարեկամների

տան մասին, ուր գնալու է երեկոյեան այցի՝ ողջոյնը ժպտացող շրթունքներին:

Մուսիան շատ յոգնեց ման գալուց: Զգուշութեամբ պարկեց մանճակալի վրայ և աչքերը կիսախուփ շարունակեց երագել: Ժամացոյցն անդադար խփում էր, վրդովելով համր լուսթիւնը, և նրա հնչուն փեթերին հանդարտ լողում էին երգող, պայծառ պատկերները: Մուսիան մըտածում էր.

— Միթէ այս է մահը: Տէր իմ, որքան գեղեցիկ է: Բայց զուցէ այս կեանքն է: Զգիտեմ, չգիտեմ: Նայեմ ու լռեմ:

Վաղուց արդէն բանասարկութեան առաջին օրերից, Մուսիայի ականջը սկսել էր երեակայական ձայներ բել: Նրա առանց այն էլ երաժշտական լսողութիւնը լուսթեան մէջ աւելի սուր էր գտնում և նա իրականութեան չնչին մասնիկներից՝ միջանցքով անցնող պահապանի ոտնաձայնից, ժամացոյցի զննոցից, երկաթէ տանիքին բաղխող քամու խրչոցից ու լապտերի ճոճոցից յօրինում էր երաժշտական ամբողջ պատկերներ: Սկզբում Մուսիան վախենում էր այդ ձայներից, հետու էր վանում իրենից, որպէս հիւանդոս հալիւցինացիա, բայց յետոյ հասկացաւ, որ ինքն առողջ է, և ոչ մի հիւանդոս երևոյթ չի կարող լինել — և հանգիտ սրտով սկսեց անձնատուր լինել նրանց:

Եւ այժմ բոլորովին պարզ ու որոշ նա լսեց զինուորական երաժշտութեան ձայնը: Զարմացած բաց արաւ աչքերը, գլուխը բարձրացրեց — դուրսը զիշեր էր և ժամացոյցի ձայնն էր միայն լուում: Դարձեալ, ուրեմն, — մտածեց նա հանգիտ և աչքերը փակեց: Եւ հէնց որ փակեց, երաժշտութիւնը նորից հնչեց: Նա պարզ լսում է, անհա շինութեան աջ անկիւնից զինուորների մի ամբողջ գունտ է անցնում լուսամուտի առաջից: Ռտքերը համաշափ բաղխելով խփում էին սառած գեանին՝ մէկ-երկու,

մէկ-երկու, — լուում էր նոյն իսկ ինչպէս երբեմն ճոճում էր կոշիկների կաշին, ինչպէս յանկարծ մէկը սայթաքում էր և իսկոյն ուղղում էր ոտքը: Եւ երաժշտութիւնը մօտենում՝ լուում է բոլորովին անձանօթ, բայց տօնական մի բարձր ու կայտառ քայլերգ: Ակներև է, որ բանտում ինչ որ տօն է:

Ահա նուազախումբը հաւասարուեց պատուհանի հետ և ամբողջ սենեակը լցրեց իր ուրախ, ներդաշնակ — բազմադան ձայներով: Պղնձէ մեծ փողերից մէկը շարունակ սխալում է, մերթ ուշանում, մերթ ծիծաղալի կերպով առաջ է քնկնում: Մուսիան տեսնում է նուազող այդ փոքրիկ զինուորին, նրա մտահոգ զիմապծերը և ծիծաղում:

Հեռանում են: Քայլերը մարում եմ՝ մէկ-երկու, մէկ-երկու: Հեռուից երաժշտութիւնն աւելի ուրախ ու գեղեցիկ է թւում: Մի երկու անգամ էլ լուում է սխալող փողի ուրախ ճիչը և ամեն ինչ մեռնում: Եւ նորից զանգաւատանք զանդաղ ու տխուր խփում է ժամացոյցը հագիւ հազ վրդովելով լուսթիւնը:

— Գնացին, մտածում է Մուսիան մի թեթև թախիծ սրտին: Ափսոսում է այն ուրախ ու ծիծաղելի ձայների համար, որ արդէն չքացել են, ափսոսում է նոյն իսկ հեռացած զինուորներին, որովհետև այդ մտահոգ զինուորները իրենց պղնձէ փողերով ու ճոճոտան կոշիկներով բոլորովին այլ էին, քան նրանք, որոնց վրայ ուղում էր կրակել բրաունինգից:

Էլի, էլի — ազաչում էր նա մեղմ ձայնով: Ու մէկ էլ են գալիս, խոնարհում նրա վրայ, պարուրում մի թափանցիկ ամպով ու վեր են տանում այնտեղ, ուր սրանում են տարտփոխիկ թռչուններն ու կանչում մոռնետիկների պէս: Այլ ու ձախ, վեր ու վայր կանչում են նրանք մոռնետիկների պէս: Գոչում, ազգարարում ու իմաց են աւալիս իրենց թոխչի մասին: Լայն-լայն թախտահարում են թե-

ւերը, և խաւարը պահում է նրանց իր ուսերի վրայ, ինչպէս և լոյսը. և նրանց օդը ձեղքող, դուրս ընկած կըրծքերին լուսավառ քաղաքն արտացօլում է իր կապուտակութիւնը: Մուսիայի սիրտն աւելի ու աւելի մեղմ է բաբախում, շունչն աւելի հանգիստ ու խաղաղ է դառնում: Քունը տանում է: Դէմքը յոգնած է ու դժգոյն, աչքերի տակ շրջաններ են կազմուել, կուսական, նիհար ձեռքերն այնպէս նուրբ են, — իսկ շրթունքներին ժպիտն է փայլում: Վաղը արևը ծագելու ժամանակ այդ մարդկանց դէմքը կը այլանդակուի անմարդկային ծամածուծութեամբ, ուղեղը կը լցուի թանձր արիւնով, ապակեցած աչքերը դուրս կը գան իրենց կողմերից — իսկ այսօր նա հանգիստ քնած է և ժպտում է իր վեհ անմահութեան մէջ:

Մուսիան քնեց:

Իսկ բանտում ետում է իւրատեսակ կեանք, խուլ ու զգայուն, կոյր ու աշալուրջ, ինչպէս ինքը յաւիտենական անհանգստութիւնը: Մի տեղ քայլում են, մի տեղ շնչում, մի ուրիշ տեղ յանկարծ հրացանն է զըրնգում: Թւում է, թէ մէկը ձայն տուեց: Բայց գուցէ և ոչ ոք ձայն չհանեց, — այլ միայն այդպէս թուաց լուսութեան մէջ:

Անա առանց աղմուկի բացում է դռն օդանցքը և մութ բացուածքի մէջ երևում է բեղաւոր, թուխ դէմքով մի մարդ: Աչքերը չուած, զարմանքով երկար նայում է Մուսիային — ու չքանում առանց աղմուկի, ինչպէս եկել էր:

Վաղեմի ժամացոյցը խփում է ու զըրնգում — երկնք, հողեմաճ: Կարծես կէս գիշերին յոգնած ժամերը սողում են դէպի բարձր սարի կատարը, և վերելքը քանի զընում այնքան ծանր ու դժուարին է դառնում: Պոկ են գալիս, սայթաքում, վայր են ընկնում, մի հառանչանք հանում — ու էլի շարունակում են սրտամաշ վերելքը դէպի մութ կատարը:

Մի ինչ որ տեղից քայլերի ձայն էր գալիս: Մի այլ տեղ շնչում են: Սև, անլապտեր ծածկակառքերի ձիերն արդէն լծում են:

ԿԱՅ ՄԱՀ, ԿԱՅ ԵՒ ԿԵԱՆՔ.

Մահուան մասին Սերգէյ Գոլովինը երբէք չէր մտածում, իբր մի կողմնակի բան, որ իրեն բոլորովին չի վերաբերում: Նա մի ամրակազմ, առողջ ու ուրախ պատանի էր, օժտուած այն անվրդով ու անխառն կենսուրախութեամբ, որ իւրաքանչիւր վատ ու կեանքի համար ֆասսակար միտք կամ զգացմունք անհետ չքացնում է մարդու մէջ: Ինչպէս արագութեամբ լաւանում էին նրա բոլոր վերքերն ու խոցերը, այնպէս էլ այն ամենը, որ ճընշում, վիրաւորում է հոգին, անմիջապէս դուրս էր քըշւում, անհետանում: Եւ իւրաքանչիւր գործ կամ նոյն իսկ զուարճութիւն, լինէր այդ լուսանկարչութիւն, հեծանիւ, թէ տեռօրիստական ակտի նախապատրաստութիւն, միշտ կատարում էր նա նոյն անվրդով ու կենսուրախ լրջութեամբ: Կեանքում ամեն ինչ բերկրալի է, ամեն ինչ կարևոր է, ամեն ինչ պէտք է անել լաւ:

Եւ իրօք, ամեն ինչ նա լաւ էր անում: Փառաւորապէս ղեկավարում էր առագաստանաւը, հրաշալի կերպով ատրճանակ էր արձակում. հաստատուն էր ու տեղական նրա ընկերական զգացմունքը, ինչպէս և սէրը, և մոլեռանդ հաւատ ունէր դէպի «ազնիւ խօսքը»: Իւրայինները ծիծաղում էին նրա վրայ, որ եթէ նոյն իսկ մի լրտես, մի իսկական մատնիչ, զգուելի մէկը նրան ազնիւ խօսք տայ, թէ ինքը լրտես չէ, Սերգէյը կը հաւատայ նրան և ընկերաբար ձեռքը կը սեղմէ: Մի պակասութիւն միայն

ունէր՝ հաւատացած էր, թէ շատ լաւ է երգում, մինչդեռ ամեննին լսողութիւն չունէր, երգում էր անտանելի, սխալներ էր անում նոյն իսկ յեղափոխական երգերի մէջ և վիրաւորում էր, երբ ծիծաղում էին:

— Կամ դուք բոլորդ էք էշեր, կամ ես եմ էշ, — ասում էր նա լուրջ ու վիրաւորուած տօնով: Նոյն լրջութեամբ, փոքր ինչ մտածելուց յետոյ, վճռում էին ամենքը.

— Դու ես էշ: Չայնիցդ երևում է:

Բայց նրան իր այդ պահասութեան համար, կարելի է ասել, աւելի էին սիրում, քան արժանաւորութիւնների համար, ինչպէս վարւում են երբեմն լաւ մարդկանց հետ:

Մահից նա այն աստիճան չէր վախենում և այնքան քիչ էր մտածում նրա մասին, որ այն օրհասական առաւօտեան Տանիա Կովալչուկի սենեակից դուրս գալուց առաջ, նա մենակ, ինչպէս պէտքն է, մեծ ախորժակով նախաճաշեց. կէսը կաթ լցրած երկու բաժակ թէյ խմեց և հինգ կոպէկանոց մի ամբողջ բուլկի կերաւ: Յետոյ ամստանքով նայեց Վերնների հացին, որին նա ձեռք չէ տրուել ու սասց.

— Իսկ դու ինչու չես ուտում: Կեր, պէտք է կազդուրուել:

— Չեմ ուզում:

— Որ այդպէս է, ես կուտեմ: Հա:

— Համա ախորժակ ունես, Սերեօժա:

Պատասխանի փոխարէն Սերգէյը լիք բերանով, խուլ ձայնով ու սխալներով երգեց.

— Вихри враждебные вьютъ надъ нами...

Չերբակալութիւնից յետոյ նա փոքր ինչ ախրեց. լաւ դուրս չեկաւ, գործը գլուխ չբերին, բայց մտածեց. «այժմ մի ուրիշ բան կայ, որ պէտք է լաւ անել — այդ մեռնելն է» և էլի գուարթացաւ: Տարօրինակ բան. հէնց երկրորդ օրը՝ առաւօտեան սկսեց բանտում մարմնամարզութեամբ

պարապել ոմն գերմանացի Միւլլերի վերին աստիճանի խելացի սխտեմով, որ Սերգէյին շատ դուր էր գալիս. ամբողջովին մերկացաւ և, մեծ զարմանք ու վրդովմունք պատճառելով նրան դիտող պահակագինւորին, ամենայն ճշտութեամբ կառարեց առաջարկած բոլոր տասնևութ վարժութիւնները: Եւ նրան, իբրև Միւլլերի սխտեմի պրոպագանդիստի, մեծ հաճոյք էր պատճառում, որ պահապան զինւորը դիտում և ըստ երևոյթին զարմանում էր և, գիտենալով հանդերձ, որ պատասխան չի ստանայ, նա այնուամենայնիւ ասաց աչքը դռան ծակին քցած գինւորին.

— Գիտես, բարեկամ, լաւ կազդուրում է մարդու: Այ, թէ ինչ պիտի մտցնէին ձեք զինւորների մէջ, — բացականչեց նա մեղմ ու համոզիչ ձայնով, որպէսզի դիմացին չը վախենայ, առանց կասկածելու, որ զինւորը նրան ուզողակի խելագար է համարում:

Մահուան երկիւղը մօտենում էր նրան աստիճանաբար, ընդհատ-ընդհատ, այնպէս էր թւում, կարծես մէկը սեղմած բոսնիցքով ամենայն ուժով ներքևից հրում է սիրտը: Աւելի շուտ ցաւ էր զգում, քան սարսափ: Շուտով զգացումն անցնում է — բայց մի քանի ժամից յետոյ նորից երևում և ամեն անգամ աւելի ուժեղ ու տևական է դառնում: Եւ արդէն պարզապէս սկսում է մի ինչ որ մեծ և նոյն իսկ անտանելի երկիւղի տարտամ պատկեր ստանալ:

— Մի՞թէ ես վախենում եմ, — զարմացած մտածեց Սերգէյը: — Այ, յիմարութիւն:

Նա չէր վախենում — վախենում էր նրա երիտասարդ, ամրակազմ ու ուժեղ մարմինը, որին չէր յաջողում խաբել ոչ գերմանացի Միւլլերի մարմնամարզութեամբ, ոչ ցուրտ շիւմներով: Եւ իւրաքանչիւր անգամ սառն ջրից յետոյ այդ մարմինը քանի ամրապնդւում, քանի թարմանում էր, այնքան աւելի սուր ու անտանելի էր դառնում վայրկենական երկիւղի զգացումը: Եւ մինչ ազատութեան

մէջ հէնց այդ ըոպէսներին—առաւօտեան, խոր քնից ու ֆիզիքական վարժութիւններից յետոյ—նա շատ աւելի ուժեղ ու կենսուրախ էր դառնում, այստեղ ընդհակառակը, նրա մէջ զարթնում էր այդ սուր ու կարծես խորթ երկիւղը: Նա այդ նկատեց ու մտածեց.

—Յիմարութիւն է արածդ, պարոն Սերգէյ: Որպէսզի մեռնելն աւելի դիւրին լինի, մարմինդ պիտի թուլացնես և ոչ թէ ամրապնդես: Յիմարութիւն է, յիմարութիւն:

Եւ թողեց մարմնամարզութիւնն ու շփումը: Իսկ արդարանալու համար զինւորին այսպէս բացատրեց.

— Դու ինձ մի նայիր, բարեկամ: Հաւատան, շատ լաւ բան է: Միայն թէ անօգուտ ու անպէտք է նրանց համար, ում պիտի կախեն: Այ թէ ինչու ես թողի: Իսկ ուրիշների համար շատ լաւ բան է:

Եւ իրօք, կարծես թէ աւելի թեթևութիւն զգաց: Փորձեց նաև աւելի քիչ ուտել, որ մարմինը թուլանայ, սակայն, չնայելով մաքուր օդի ու վարժութիւնների բացակայութեան, շատ մեծ ախորժակ ունէր, դժուար էր այդ իրագործել, և ինչ որ բերում էին, բոլորն ուտում էր: Ուստի սկսեց այսպէս վարուել՝ նախքան ուտելը, տաք կերակրի կէսը թափում էր տաշտի մէջ. և այդ կարծես թէ օգնեց՝ մի բուժ քնէածուծեան ու յոգնածութեան մէջ ընկաւ:

— Ես քեզ ցոյց կը տամ,— սպառնում էր մարմին, իսկ ինքը մի առանձին վշտով, քնքշութեամբ ձեռքով շոյում էր թռչնած ու թուլացած միանները:

Շուտով մարմինը սովորեց և այդ ըէժիմին, և մահուան երկիւղն էլի երևաց, թէև ոչ այնքան սուր ու հրատապ, բայց ևս առաւել նոզկալի, նման սրտախառնութեան: «Այդ նրանից է, որ շատ են ձգձգում» — մտածեց Սերգէյը — «լաւ կը լինի, որ մարդ այս ամբողջ ժամանակը, մինչև կախաղանի օրը քնով անցկացնի»: Եւ աշխատում էր, որ-

քան կարելի է, շատ քնել: Սկզբում յաջողուեց, բայց յետոյ չափազանց շատ քնելուց, թէ մի այլ պատճառից, անքնութիւն ստացաւ: Անքնութիւնը իւր հետ բերեց սուր ու խորաթափանց մտքեր, իսկ մտքերը՝ կեանքի անձուկ:

— Մի՞թէ ես այդ զարհումարից վախենում եմ,— մտածում էր նա մահուան մասին:— Չէ, ես կեանքն եմ ափսոսում: Լաւ բան է, ախպէր, ինչ կուզեն, թող ասեն յոռետեսները: Ապա ինչ կլինի, եթէ մի յոռետեսի կախեն, Այս, ափսոս է կեանքը, հազար ափսոս: Ինչո՞ւ է միրուքս եկել: Չեկաւ, չեկաւ ու հիմի սկսեց գալ: Ինչո՞ւ:

Տխրութեամբ շարժում էր գլուխը և ծանր ու երկար հառաչում: Լոռ-թիւն— և երկար ու խոր հառաչանք. նորից կարճ լոռ-թիւն և դարձեալ աւելի երկար ու ծանր հառաչանք:

Նա այդ դրութեան էր նախ քան դատը և նախ քան վերջին սարսափելի տեսակցութիւնը ծերունիների հետ: Նա մի տարօրինակ բան զգաց, երբ զարթնեց այն պարզ գիտակցութեամբ, որ կեանքի հետ հաշիւն արդէն վերջացած է, որ մնում են միայն մի քանի սպասողական ժամեր դատարկութեան մէջ, ապա մահը: Կարծես թէ նրան բոլորովին մերկացրել էին, տարօրինակ կերպով մերկացրել—վրայից հանել էին ոչ միայն զգեստները, այլ և կարծես խլել էին նրանից արեգակը, օդը, լոյսն ու աղմուկը, շարժումներն ու լեզուն: Դեռ չկայ մահ, բայց նոյնպէս չկայ և կեանք, այլ կայ մի ինչ որ նոր, անհասկանալի բան, որ դժուար էր ասել ունէր որևէ միտք, թէ ոչ, բայց եթէ ունէր էլ, այնքան խոր, խորհրդաւոր ու անմարդկային էր, որ անկարելի էր ըմբռնել:

— Թիւ, դրա հէրն անիծած,— տանջում էր զարմանքից Սերգէյը: Այս ի՞նչ բան է: Ո՞րտեղ եմ ես: Ես. . . Ի՞նչ ես:

Ուշադրութեամբ ու հետաքրքրութեամբ նայեց իր

վրայ՝ սկսած կալանաւորի մեծ մաշիկներից մինչև փոքր, որի վրայ դուրս էր ցցուել վերարկուն: Թևերը բացած՝ նա մի երկու անգամ ման եկաւ սենեակի մէջ, շարունակելով ամեն կողմից իրեն դիակել, ինչպէս մի կին, որ նոր զգեստ է հագել, իսկ զգեստն երկար է վրան: Գլուխը շարժեց — շարժում է: Այդ տարօրինակ ու փոքր ինչ սարսափելի բանը ուրեմն ինքն է, ինքը Սերգէյ Գոլովինը, և այդ բանը շուտով էլ գոյութիւն չի ունենայ:

Եւ ամեն ինչ տարօրինակ գործաւ:

Փորձեց քայլել սենեակում — տարօրինակ է, որ քայլում է: Փորձեց նստել — տարօրինակ է, որ նստում է: Փորձեց շուր խմել — տարօրինակ է, որ խմում է, կուլ է տալիս, որ բաժակը բռնել է ձեռքով, որ մատներ ունի և այդ մատները գոգում են: Խնայաց, հազաց, և հազալով մտածեց՝ «ինչ տարօրինակ է, ես հազում եմ»:

— Այս ինչ բան է, խելքս զլուխս է, թէ չէ — մտածեց Սերգէյը սարսուռով: Էդ էր պակաս, դրանց հէրն անիծած:

Ձեռքով ճակատը շփեց, բայց այդ էլ էր տարօրինակ: Եւ անշարժութեան մէջ կարծես մեռաւ: Թւում էր, թէ ժամերով շունչ չէր քաշում, աշխատում էր մարել մաքի նշոյլն անգամ, աշխատում էր բարձր շնչառութիւնը պահել, ամեն կերպ խուսափելով շարժումներ անելուց, որովհետև իւրաքանչիւր միաք խենդութիւն էր, իւրաքանչիւր շարժում խենդութիւն էր: Կարծես ժամանակն էլ գոյութիւն չունի, դարձել է տարածութիւն, թափանցիկ ու անօդ տարածութիւն, մի հրապարակ, որի վրայ զանուում է ամեն ինչ՝ երկիրը, կեանքը, մարդիկ: Եւ այդ բոլորը կարելի է տեսնել մի հայեացքով, բոլորը մինչև ծայր, մինչև մահուան խորհրդաւոր անդունդը: Բայց սարսափելին այն չէր, որ մահն էր երևում, այլ այն, որ միաժամանակ երևում էր և կեանքը, և մահը: Սրբապիղծ ձեռ-

քով բաց են արել վարագոյրը, որ դարերից ի վեր թաղցնում էր կեանքի ու մահուան գաղտնիքը, և նրանք այժմ էլ գաղտնիք չեն — բայց հասկանալի էլ չեն դարձել, մնում են իբրև մի ճշմարտութիւն՝ գրուած անյայտ լեզուով: Չկային նրա մարդկային ուղեգում այնպիսի հասկացողութիւններ, չկային նրա մարդկային լեզուում այնպիսի բառեր, որոնցով նա կարողանար ընդգրկել տեսածը: Եւ շարունակ կրկնում էր. «սարսափելի է» խօսքը միայն նրա համար, որ չկար մի այլ խօսք, գոյութիւն չունէր և չէր կարող գոյութիւն ունենալ մի հասկացողութիւն, որ համապատասխան էր այդ նոր, անմարդկային գրութեան: Նոյնը կը լինէր մարդու հետ, եթէ նա, մնալով մարդկային ըմբռնողութեան, փորձի ու զգացումների սահմաններում, յանկարծ Աստուծուն տեսնէր — կը տեսնէր ու չէր հասկանայ, եթէ նոյն իսկ իմանար, որ այդ Աստուծո՞ւ է կոչւում և կը սարսէր անասելի անըմբռնողութեան անասելի տանջանքներից:

— Ահա՛ քեզ և Միւլլեր — յանկարծ բարձր ու չափազանց համոզիչ ձայնով արտասանեց նա և գլուխը շարժեց: Եւ ինչպէս յատուկ է մարդկային հոգուն, նրա զգացումների մէջ մի վայրկենական ու անսպասելի փոփոխութիւն առաջ եկաւ և ուրախ ու անկեղծօրէն սկսեց հռնալ:

— Ա՛խ դու, Միւլլեր: Ա՛խ դու, իմ սիրելի Միւլլեր: Այ, դու իմ պատուական զերմանացի: Բայց և այնպէս դու իրաւունք ունես Միւլլեր, իսկ ես, պարոն Միւլլեր, աւանակ եմ:

Մի քանի անգամ արագ-արագ քայլեց սենեակում և մի նոր ու աւելի մեծ զարմանք պատճառելով լուսանցքից նրան դիտող պահապան զինւորին, րոպէապէս շորերը հանեց, բոլորովին մերկացաւ և ամենայն խնամքով, ուրախուրախ կատարեց տանկութիւնները, ձգում ու ձգձգում էր իր երիտասարդ, փոքր ինչ նիհարած մար-

մինը, նստում էր ոտների վրայ, շնչում ու արտաշնչում օդը, կանգնում ոտների ծայրերին և արագ-արագ շարժում էր ոտքերն ու ձեռքերը: Եւ իւրաքանչիւր վարժութիւնից յետոյ մի առանձին բաւականութեամբ կրկնում էր

— Ա՛յ, այսպէս: Ա՛յ, այս է իսկականը, պարոն Միւլլեր: Այտերը կարմրեցին, մարմնի ծակոտիներէց դուրս եկաւ տաք, հաճելի քրտինքը և սիրտը սկսեց աւելի ամուր ու հաւասար բաբախել:

— Բանն այն է, Միւլլեր, — խորհրդածում էր Սերգէյը, կուրծքն այնպէս դուրս ձգելով, որ բարակ, ձգուած կաշու տակից պարզ երևում էին կողի ոսկորները, — բանն այն է, Միւլլեր, որ կայ նաև տասնևիններորդ վարժութիւն՝ վիզը թոկ ձգած կախուել անշարժ դրութեան մէջ: Եւ այդ կոչում է կախադան: Հասկանո՞ւմ ես, Միւլլեր: Վերցնում են կենդանի մարդուն, ասենք թէ Սերգէյ Գորովինին, տիկնիկի պէս պարուրում են, թոկը ձգում վիզը և կախում մինչև որ մեռնի: Շատ յիմար բան է, Միւլլեր: Բայց ինչ արած — հարկն ստիպում է:

Ծռուեց աջ կողի վրայ ու կրկնեց.

— Հարկն ստիպում է, պարոն Միւլլեր:

9. ՍԱՐՄԱՓԵԼԻ ՄԵՆԱԿՈԹԻԿՆ.

Սերգէյից ու Մուսիայից մի քանի դադարկ սենեակներով բաժանուած, ականջ դնելով վաղեմի ժամացոյցին նոյն զընգոցին, ցաւով ու սարսափով իր կեանքի վերջին օրերն էր անցկացնում դժբախտ Վասիլիյ Կաշիրինը, մի այնպիսի ճնշող մենակութեան մէջ, որ կարծես ամբողջ տիեզերքում ինքը միայն գոյութիւն ունէր:

Քրանած, թաց շապիկը մարմնին կպած, խճուճ մա-

զերը զզգզած, յուսահատ, ջղաձգօրէն պատէ պատ էր ընկնում սենեակի մէջ, ատամի անտանելի ցաւից տանջւող մարդու պէս: Մի րոպէ նստում էր, ապա նորից վազում, ճակատը սեղմում պատին, կանգ էր առնում և աչքերով ինչ որ բան էր պրպտում, կարծես դեղ էր որոնում: Այնքան էր փոխուել որ թւում էր թէ նա երկու տարբեր զէմք ունէր, որոնցից առաջուանը՝ կայտառ ու երիտասարդ, զնացել, հեռացել էր, իսկ նրա տեղը բռնել էր մի նորն ու սարսափելին, որ եկել էր խաւարի միջից:

Մահուան երկիւղը նրան մօտեցաւ միանգամից և համակեց ամբողջովին ու տիրապէս: Դեռ առաւօտեան, երբ նա պարզապէս մեռնելու էր գնում, մահը բանի տեղ չէր գնում, իսկ երեկոյեան, մենակ փակուած սենեակում, արդէն տարուել էր կատաղի սարսափի այլքով և պտոյտ էր գալիս նրա յորձանքի մէջ: Քանի դեռ նա ինքը, իր կամքով ընդառաջ էր գնում մահուան ու վտանգին, քանի դեռ իր մահը, որքան էլ նա արտաքուստ սարսափելի լինէր, բռնել էր իր սեփական ձեռքերի մէջ, նա շատ հանգիստ էր և նոյն իսկ ուրախ. իր յանդուգն ու անվեհեր հոգու խիզախ, հաստատ որոշման ու անսահման ազատութեան զգացումի մէջ անհետ կորչում էր այդ աննշան, խորշումած և կարծես պառաւած փոքր երկիւղը: Դժոխային մեքենայով գօտեպնդուած, նա ինքը կարծես դժոխային մեքենայ էր դարձել, ամփոփել էր իր մէջ զինամիտի դաժան բանականութիւնը, իւրացրել էր նրա մահաբեր ու հրեղէն գօրութիւնը: Եւ երբ գնում էր փողոցով, ուր խոնուում, իրար էին անցնում առօրեայ հոգսերով ու գործերով ծանրաբեռնուած մարդիկ և շտապով փոխչում, խուսափում էին կռքերի ձիերից ու տրամվայներից, նրան թւում էր, որ ինքը եկուոր է մի այլ, անյայտ աշխարհից, ուր ոչ մահ կայ, ոչ երկիւղ:

Եւ յանկարծ մի խիստ, վայրենի ու շշմեցնող փոփո-

խութիւն: Նա այլևս չէ գնում, ուր որ ուզում է, այլ նրան տանում են—ուր որ ուզում են: Նա արդէն չէ ընտրում իր ուզած տեղը, այլ նրան դնում են քարէ վանդակի մէջ և կողպում վրայից, ինչպէս մի իր: Նա էլ չի կարող ազատ բնորութիւն անել կեանքի ու մահի մէջ, ինչպէս բոլոր մարդիկ, այլ նրան անպայման, անխուսափելի կերպով կը մահացնեն: Մի վայրկեան առաջ կամքի, կեանքի ու ուժի մարմնացումը այժմ դառնում է աշխարհի միակ անուժութեան խղճալի պատկեր, դառնում է մի անասուն, որ սպասում է սպանդանոցին, մի անբաւրաւ իր, որ կարելի է տեղափոխել, վառել, կոտրել: Ինչ էլ սր ասի, խօսքերին ուշք չեն դարձնի, իսկ եթէ սկսէ գոռալ, բերանը փախսով կը ծածկեն, եթէ ինքը ոտները շարժէ, նրան կը տանեն ու կը կախեն, և եթէ ուզենայ դիմադրել, ոտները թափահարել, գետնին պռակել—նրան ուժով կը բարձրացնեն, կը կապկպեն և կապկպած կը մօտեցնեն կախազանին: Եւ այն հանգամանքը, որ նրա վրայ այդ մեքենայի աշխատանքը կատարում են նոյնպիսի մարդիկ, ինչպէս ինքն է, նրանց մի նոր, անսովոր ու չարագուշակ տեսք է տալիս. ասեա թէ ինչ որ տեղից դիմամբ հաւաքուած կեղծող ուրուականներ են կամ զսպանակի վրայ ամբարցրած մեքենայական տիկնիկներ, որ վերցնում, բռնում, տանում, կախում ու ոտներից ձգձգում են: Կտրում են պարանր, տեղաւորում, տանում, թաղում:

Եւ բանտում, հէնց առաջին օրից կեանքն ու մարդիկ դարձան նրա համար ուրուականների և մեքենայական տիկնիկների մի աշխարհ, լի անասելի սարսափով: Համարեա խելագարուած, նա աշխատում էր պատկերացնել մարդկանց իբրև լեզու ունեցող ու խօսող էակներ և չէր կարողանում—նրանք համբ էին թւում. աշխատում էր յիշել նրանց խօսակցութիւնը, այն բառերի իմաստը, որ գործ էին ածում մարդիկ իրար հասկանալու համար—և չէր

կարողանում: Բերանները բացում են, ինչ-որ ձայներ են լսում, ապա նրանք, ոտքերը շարժելով, ցրում են և էլ ոչինչ չկայ:

Այդպէս կը զգար մարդ, եթէ գիշերը, տանը մենակ մնացած ժամանակ, յանկարծ բոլոր առարկաները կենդանութիւն ստանային, շարժուէին և ձեռք բերէին մի անսահման իշխանութիւն նրա վրայ: Յանկարծ սկսէին նրան դատել պահարանը, աթոռը, գրասեղանն ու բազմոցը: Նա կը գոռար, իրար կ'անցնէր, կ'աղաչէր, օգնութեան կը կանչէր, իսկ այդ առարկաները միմեանց հետ կը փսփսային իրանց անհասկանալի լեզուով, ապա կը տանէին նրան կախելու նոյն այդ պահարանը, աթոռը, գրասեղանն ու բազմոցը: Եւ միւս առարկաները կը դիտէին այդ:

Եւ ամեն ինչ սկսեց խաղալիք թուալ կախազանի դատապարտուած Վասիլիյ Կաշիրինին՝ և սենեակը, և փորրիկ լուսանցքով դուռը, և լարուած ժամացոյցի ձայնը, և բանտի փռաւոր շէնքը, և մանուաւոր այն հրացանաւոր մեքենայական տիկնիկը, որ ոտքերը թիթիկացնելով, քայլում է միջանցքում և միւսները, որ, վախեցնելով, նայում են լուսանցքից նրան և լուս կերակուր տալիս: Չէր կարելի ասել, թէ նրա զգացածը մահուան սարսափն էր. աւելի շուտ նա նոյնիսկ ուզում էր մահը, որ իւր յաւիտենական խորհրդածութեամբ ու անհասկանալիութեամբ իսկ՝ աւելի մատչելի էր մտքի համար, քան աշխարհի այդ վայրենի ու ֆանտաստիկ փոփոխութիւնը: Ի՞նչ աւելին, ուրուականների և տիկնիկների այդ խենդ աշխարհում մահը կարծես բոլորովին ոչնչանում, կորցնում էր իր մեծ ու խորհրդաւոր իմաստը, դառնում էր մի ինչ-որ նոյնպէս մեքենայական բան, և հէնց այդ պատճառով, աւելի սարսափելի: Վերցնում են, բռնում, տանում, կախում ու ոտներից ձգձգում: Կտրում են պարանր, տեղաւորում, տանում, թաղում:

Անհետացաւ մարդը աշխարհից:

Գտաովարութեան ժամանակ, ընկերների մօտիկութիւնը Կաշիրինին ուշքի բերեց, և մի վայրկեան, նա դարձեալ տեսաւ մարդկանց—նրանք նստել ու դատում են իրեն և խօսում են մարդկային լեզուով, լսում են և կարծես հասկանում: Բայց արդէն մօր հետ տեսակցութեան ժամանակ նա դարձեալ կորցրեց ինքն իրեն, և որպէս մի մարդ, որ սկսում է խելագարուել և հասկանում է այդ սարսափով զգաց, որ զլուխը սև թաշկինակ կապած այդ պառաւ կինը վարպետօրէն շինած մի մեքենայական տիկնիկ է, ճիշտ նրանցից, որ արտասանում են՝ «պա-պա», «մա-մա», միայն փոքր ինչ աւելի լաւ շինուած: Աշխատում էր հետը խօսել, իսկ ինքը սարսուռով մտածում էր.

—Տէր Աստուած, ախար սա տիկնիկ է: Տիկնիկ-մայրա է: Իսկ ահա այս տիկնիկ-զինուոր է, իսկ այնտեղ տանը՝ տիկնիկ-հայրս, այս էլ տիկնիկ-Վասիլիյ Կաշիրինը:

Թւում էր, թէ մի քիչ էլ, և նա կը լսէ մի տեղ մեխանիզմի կոտորուելու ձայնը, չ'իւղած անիւների ճոճոցը: Երբ մայրը լաց եղաւ, կարծես մի վայրկեան նորից շողաց ինչ որ մարդկային բան, բայց նրա արտասանած հէնց առաջին խօսքերի հետ չքացաւ, և նա շարունակեց սարսափով ու հետաքրքրութեամբ նայել, թէ ինչպէս տիկնիկի աչքերից շուր է վազում:

Յետոյ իր սենեակում, երբ սարսափն անտանելի դարձաւ, Վասիլիյ Կաշիրինը փորձեց աղօթել: Այն ամենից, որով իր վաճառական հօր տանը կրօնի անուան տակ շրջապատել էին նրա երիտասարդ կեանքը, մնացել էր միայն մի անհաճոյ, դառն ու տանջող մրուր, իսկ հաւատ չկար: Բայց մի ժամանակ, գուցէ դեռ երեխայութեան օրերին, նա լսել էր երեք խօսք, որ մեծ զարմանք և թրթռուն յուզմունք էին պատճառել նրան, և այդ խօսքերն ամբողջ կեանքում նրա համար խաղաղ պօէզիայի մի հմայք ունէին: Այդ խօսքերն էին.

— Բոլոր տառապեալների սփոփանք:

Պատահում էր, որ կեանքի ծանր րոպէներին, առանց աղօթելու, առանց գիտակցութեան, հէնց այնպէս ինքն իրեն շնջում էր. «բոլոր տառապեալների սփոփանք»—և յանկարծ թեթևութիւն էր զգում, ուզում էր գնալ մի սիրելի բարեկամի մօտ ու կամացուկ զանգատուել.

—Մեր կեանքը... բայց մի՞թէ այդ կեանք է: Կ'ն, սիրելիդ իմ, մի՞թէ այս կեանք է:

Յետոյ յանկարծ ծիծաղն էր գալիս, ուզում էր մագերը խճճել, մի ոտքն առաջ տանել, կուրծքը դէմ անել մէկի հարուածներին՝ ահա, խփիր:

Ոչ ոքի, նոյն իսկ ամենամօտիկ ընկերներին, նա ոչինչ չէր ասում իր «բոլոր տառապեալների սփոփանքի» մասին, նոյնիսկ ինքն էլ կարծես չգիտէր նրա մասին.—այնքան խորն էր թաղուած հոգու մէջ: Եւ յիշում էր ոչ այնքան յաճախ, մեծ զգուշութեամբ:

Եւ այժմ, երբ նա ամբողջովին ծածկուած էր դէմ առ դէմ կանգնած, անլուծելի գաղտնիքի սարսափով, ինչպէս ափի մօտ բուսած թփիկը բարձրացած ջրի մէջ—նա կամեցաւ աղօթել: Ուզում էր ծունկ չոքել, բայց ամաչեց զինուորից և ձեռքերը կրծքին խաչելով կամացուկ շնջաց.

— Բոլոր տառապեալների սփոփանք:

Եւ անձկութեամբ ու բերկրալի գոհանակութեամբ կրկնեց.

— Բոլոր տառապեալների սփոփանք, եկ ինձ մօտ, սիրտ տուր Վասկա Կաշիրինին:

Շատ առաջ, երբ նա զեռ համալսարանի առաջին կուրսուսն էր և քէֆ էր անում, զեռ նախքան Վերների հետ ծանօթանալն ու ընկերութեան մէջ մտնելը, նա ինքն իրեն խղճալի կերպով պարծենկոտութեամբ «Վասկա Կաշիրին» էր անուանում—այժմ, չգիտես ինչու, նա ուզեց իրեն նոյն ձևով անուանել: Եւ խօսքերը հնչեցին անկեն-

դան ու առանց արձագանքի:

— Բոլոր տառապելիների սփոփանք:

Մի ինչ որ բան շարժուեց: Կարծես հեռում սահեց մէկի խաղաղ ու թախծոտ պատկերը և հանդարտ մարեց, առանց լուսաւորելու հոգեվարքի խաւարը: Զանգակաաւանը խփում էր լարած ժամացոյցը: Զինուորը սուրը թէ հրացանը միջանցքում մի բանի խփեց և երկար ու ելեէջներով յօշանջեց:

— Բոլոր տառապելիների սփոփանք: Եւ դու լնու ես: Եւ դու ոչինչ չես ուզում ասել Վասկա Կաշիրինին:

Ժպտում էր բերկրալի գոհանակութեամբ և սպասում: Բայց գատարկ էր և՛ շուրջը, և՛ հոգին: Եւ չէր վերադառնում խաղաղ ու թախծոտ պատկերը: Ինքն էլ չզիտէր, թէ ինչու, յանկարծ մի հոգեմաշ ցաւովնա յիշեց վառուղ մոմերը, շուրջաոր վրան ձգած քահանային, պատի վրայ նկարուած պատկերը, իր հօրը, որ կուճ ու ձիգ անելով աղօթում էր ու ծունր գնում, և միաժամանակ աչքի տակով նայում էր, թէ աղօթում է Վասկան, կամ արդեօք շարութիւն չէ անում: Յիշեց ու աւելի սարսափեց, քան աղօթքից առաջ:

Ամեն ինչ անյայտացաւ:

Խելագարութիւնը ծանր սողում, մօտենում էր: Գիտակցութիւնը հանգաւ, որպէս ցրիւ տուած, մարւող խարոյկ, սասեց, որպէս նոր մեռած մարդու դիակ, որի սիրտը դեռ տաք է, իսկ ձեռքերն ու ոտքերը արդէն փայտացել են: Մի անգամ էլ հանգչող միտքը բոցավառուեց արևոտ փայլով ու ասաց, թէ նա, Վասիրիյ Կաշիրինը կարող է խելագարուել, այնպիսի շարչարանքներ կրել, որոնք անուն չունին, ցաւի ու տանջանքների այն սահմանին հասնել, որին չէ հասել դեռ ևս ոչ մի կենդանի էակ: Թէ նա կարող է զլուխը պատէպատ խփել, մասներով աչքերը հանել, ասել ու գոռալ ինչ որ ուզում է, ար-

տասուքներն աչքին հաւատացնել, թէ էլ չէ կարող դիմանալ—և ոչինչ: Կը գայ ոչինչը:

Եւ ոչինչը եկաւ: Ոտքերը, որ իրենց սեփական գիտակցութիւնն ու կեանքն ունին, շարունակում էին ման գալ և կրել թաց ու դողդոջուն մարմինը: Զեռքերը, որ իրենց սեփական գիտակցութիւնն ունին, ի զուր էին փորձում վայր բերել բացուող վերարկուն, կուրծքը ծածկել և տաքացնել թաց ու դողդոջուն մարմինը: Մարմինը դողում էր, մրսում: Աչքերը նայում էին: Եւ այդ արդէն համարեա մեռելային հանգիստն էր:

Բայց վայրենի սարսափի մի բողբ էլ կար դեռ ևս: Այդ այն բողբն էր, երբ մարդիկ ներս մտան: Նա նոյն իսկ չմտածեց, թէ ինչ է նշանակում—ժամանակ է երթալու, այլ ուղղակի մարդկանց տեսաւ ու վախեցաւ համարեա երեխայի պէս:

— Էլ չեմ, ես էլ չեմ. — շշնջում էր նա մեղմ, անկենդան շրթունքները շարժելով և կամացուկ յետ-յետ էր գնում դէպի սենեակի խորքը, ինչպէս երեխայ ժամանակ, երբ հայրը բարձրացնում էր ձեռքը:

— Ժամանակ է դնալու:

Թօտում են, ման են դալիս նրա շուրջը, ինչ որ բան են տալիս: Աչքերը փակեց, օրօրուեց—և ծանր-ծանր սկսեց պատրաստուել: Երևի գիտակցութիւնը սկսեց յետ դառնալ՝ յանկարծ պաշտօնեայից ծխախոտ խնդրեց, և նա սիրով բաց արեց զեկադենտական նկարով զարդարուած արծաթէ ծխատուփը:

10. ՊԱՏԵՐԸ ՎԱՅՐ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ.

Նա, որին անուանում էին Վերներ, և որ անյայտ էր

մնացել, կեանքից ու կուռից յոգնած մի մարդ էր: Կար ժամանակ, որ նա իր բոլոր ուժով սիրում էր կեանքը և բաւականութիւն էին պատճառում նրան թատրոնը, գրականութիւնը, մարդկանց հետ նիստ ու կացը: Սուր յիշողութեամբ և հաստատուն կամքով օժտուած, նա կատարելագէտ սովորեց մի քանի եւրոպական լեզուներ. կարող էր ազատ կերպով իրեն գերմանացու, ֆրանսիացու կամ անգլիացու տեղ գնել: Գերմաներէն խօսում էր սովորաբար բաւարական արտասանութեամբ, բայց, ըստ ցանկութեան, կարող էր խօսել նոյնպէս իբրև բնիկ բերլինցի: Սիրում էր լաւ հագնուել, ունէր գեղեցիկ շարժումներ և միակն էր իր ընկերներից, որ առանց ճանաչուած լինելու վտանգի, համարձակում էր երևալ բարձր շրջանի բալերում:

Բայց արդէն վաղուց նրա հոգու մէջ, ընկերների համար անտեսանելի, ծնունդ էր առել մի խուլ ատելութիւն դէպի մարդիկ. կար այնտեղ և յուսահատութիւն և ծանր համարեա մահացու յոգնածութիւն: Իր բնութեամբ աւելի շատ մաթեմատիկ, քան պօէտ, նա դեռ չգիտէր ոչ ոգևորութիւն և ոչ էքստազ, և լինում էին բոպէսներ, երբ ինքն իր աչքին երևում էր իբրև մի խելագար, որ մարդկային արեան ճապաչիքի մէջ փնտրում է շրջանի քառակուսացումն: Այն թշնամին, որի հետ նա ամեն օր կուում էր — յիմարութեան, դաւաճանութեան, ստութեան, թուք ու մրի և նողկալի խաբէութեան խիտ ցանցը — չէր կարող նրան յարգանք ներշնչել: Կազմակերպութեան յանձնարարութեամբ կատարած պրովոկատորի սպանութիւնը թրւում էր, թէ ընդմիջտ ոչնչացրեց նրա մէջ ապրելու ցանկութիւնը: Սպանեց անվրդով, իսկ երբ տեսաւ այդ մահացած, կեղծող, բայց այժմ արդէն հանգիստ և այնուամենայնիւ խղճալի մարդկային դէմքը — յանկարծ դադարեց յարգել թէ իրեն և թէ իր գործը: Ոչ թէ զգաց, այլ ուղղակի յանկարծ դադարեց գնահատել իրեն, ինքն իր

համար դարձաւ անհետաքրքիր, անկարևոր, ճանձրալի ու խորթ: Բայց իբրև միակ ու անբաժանելի կամքի տէր մարդ նա դուրս չեկաւ կազմակերպութիւնից և արտաքուստ մնաց նոյնը, միայն աչքերի մէջ բուն գրեց մի ինչ որ սառն ու անհամբոյր բան: Եւ ոչ ոքի ոչինչ չասաց:

Ունէր և մի հազուագիւտ յատկութիւն. ինչպէս որ կան մարդիկ, որ երբէք չեն գիտեցել գլխացաւ, այնպէս էլ նա չգիտէր, թէ ինչ է երկիւղը: Եւ երբ ուրիշները վախենում էին, նա չէր դատապարտում, բայց և չէր կարեկցում. վերաբերմունք, որ տածում է մարդ դէպի այն բաւական տարածուած հիւանդութիւնը, որով սակայն ինքը երբէք չէր հիւանդացել: Ընկերներին, մանաւանդ Վասկա Կաշիրինին նա խղճում էր, բայց այդ զգացմունքը սառն էր ու համարեա պաշտօնական, որից երևի զուրկ չէին նոյնիսկ դատաւորներից մի քանիսը:

Վերները հասկանում էր, որ կախաղանը հասարակ մահ չէ, այլ ինչ որ մի այլ բան, — բայց յամենայն դէպս որոշեց ընդունել հանգիստ, ինչպէս մի կողմնակի բան: Աւելի լաւ է ապրել մինչև վերջ այնպէս, իբր թէ ոչինչ չէ եղել և ոչինչ չի լինի: Այդ ձևով միայն նա կարող էր արտայայտել իր մեծ ատելութիւնը դէպի մահը և պահպանել վերջին, անկապտելի ազատութիւնն ոգու: Գատաւարութեան ժամանակ — այդ գուցէ անհաւատալի թուար և ընկերներին, որ այնքան լաւ գիտէին նրա սառն անվեհերութիւնն ու անբարտաւանութիւնը — նա չէր մտածում ոչ կեանքի և ոչ էլ մահուան մասին, այլ կենտրոնացած, խոր ու անվրդով ուշադրութեամբ շախմատի մի դժուարին խաղով էր զբաղուած: Նա հրաշալի շախմատ խաղացող էր և բանտարկելութեան հէնց առաջին օրուանից սկսել էր այդ խաղը և անընդհատ շարունակում էր: Նոյն իսկ դատավճիռը, որ կախաղան էր որոշել նրա համար չշարժեց և ոչ մի քար անտեսանելի տախտակի վրայ:

Եւ նոյնիսկ այն հանգամանքը, որ ըստ երևոյթին չըպիտի կարողանար վերջացնել խաղը, չկասեցրեց նրան, և իր երկրային կեանքի վերջին օրուայ առաւօտեան նրա առաջին գործն այն եղաւ, որ սկսեց ուղղել երեկոյեան խաղի մէջ արած ոչ այնքան յաջող քայլը: Կախ ձգած ձեռքերը ծնկների մէջ սեղմած, նա երկար ժամանակ նստած էր անշարժ, ապա վեր կացաւ ու սկսեց խորհելով շրջել: Նա առանձին տեսակի քայլուածք ունէր. իրանի վերին մասը փոքր ինչ առաջ էր ծռում և կրունկներն ամուր ու որոշակի խփում էր գետնին, այնպէս որ նոյնիսկ չոր գետնի վրայ նրա քայլերը թողնում էին խոր, նկատելի հետք: Մի շնչով նա սկսեց մեղմիկ սուլել իտալական մի փոքրիկ, պարզ արիա—այդ օգնում էր մտածելուն:

Բայց այս անգամ գործն ինչ-որ լաւ չէր գնում: Անհաճոյ զգացումով, թէ մի մեծ, նոյնիսկ կոպիտ սխալ է գործել, նա մի քանի անգամ յետ էր դառնում և վերստուգում խաղը համարեա սկզբից: Սխալ չէր գտնում, բայց և գործած սխալի զգացումը ոչ միայն չէր անցնում, այլ աւելի ուժեղ ու տանջող էր դառնում: Եւ յանկարծ մի անսպասելի ու վիրաւորական միտք ծնեց նրա մէջ՝ չլինի՞ թէ սխալն հէնց այն է, որ նա ուզում է շախմատի խաղով հեռու պահել իր ուշադրութիւնը կախադանից և պատասպարուել մահուան այն սարսափից, որ իբր թէ անխուսափելի է դատապարտեալների համար:

— Ո՛չ, ինչո՞ւ որ—պատասխանեց նա անվրդով սառնադատութեամբ ու ծածկեց անտեսանելի տախտակը: Եւ նոյն կենտրոնացրած ուշադրութեամբ, որով խաղում էր, նա այժմ խիստ քննութեան ենթարկող աշակերտի պէս՝ սկսեց պատասխանել, հաշիւ տալ իր սարսափի ու անելանելի դրութեան մասին. գննեց սենեակը, աշխատելով ոչ մի բան աչքից չթողնել, համարեց թէ քանի ժամ է մնացել մինչև մեռնելը, մօտաւորապէս, բայց բաւական ճիշտ

պատկերացրեց իրենց մահը կախադանի վրայ և ուսերը թոթուեց:

— Դէ՛հ, — պատասխանեց նա կարծես մէկին՝ կէս հարցական շեշտով:— Ահա բոլորը: Էլ ո՞ւր է երկիւղը:

Երկիւղ իրօք չկար: Ոչ միայն երկիւղ չկար, այլ ընդհակառակը, նոյնիսկ մի ինչ որ աղօտ, բայց մեծ ու խիզախ խնդութեան զգացմունք էր ծնւում: Եւ տակաւին անյայտ սխալը էլ չէր նեղացնում, անհանգստացնում, այլ ինքն էլ պատմում էր ինչ որ լաւ ու անսպասելի բանի մասին. այնպէս էր թւում, թէ նա իր մօտիկ, թանկագին ընկերոջ մեռած էր համարում, իսկ բանից դուրս եկաւ, որ այդ ընկերը կենդանի է, անվրաս և ծիծաղում է:

Վերսերը նորից ուսերը թոթուեց և զարկերակը բռնեց — սիրտը խփում էր սովորականից արագ, բայց ամուր, հաւասար, ինչ որ առանձին հնչուն ուժով: Առաջին անգամ բանա ընկած նորեկի նման մէկ էլ ուշադրութեամբ նայեց պատերին, կողպէքին, յատակին ամբարշտած աթոռին ու մտածեց.

— Ինչո՞ւ ես այսքան թեթևութիւն, բերկրանք ու ազատութիւն եմ զգում: Այո, հէնց ազատութիւն: Մտածում եմ վազուայ մահուան մասին—թւում է, որ նա գոյութիւն չունի: Նայում եմ պատերին—կարծես պատերն էլ չկան: Այնքան ազատ եմ զգում, որ կարծես բանտում չեմ, այլ նոր դուրս եմ եկել ինչ որ բանտից, ուր նստած էի բոլոր ժամանակ: Այս ի՞նչ է:

Սկսում էին ձեռքերը դողալ—Վերսերի համար չտեսնուած երևոյթ: Աւելի ու աւելի կատաղի էր դառնում միտքը: Կարծես հրեղէն լեզուներ էին բոցավառում նրա գլխի մէջ—կրակն ուզում էր դուրս ժայթքել և լուսաւորել դեռ գիշերային մութ հեռուն: Եւ ահա նա դուրս ժայթքեց, և փայլեց լուսավառ, արձակ հեռաստանը:

Անցաւ այն պղտոր յոգնածութիւնը, որ մաշում էր

Վերների սիրտը վերջին երկու տարին, և վայր ընկաւ սրտից մեռած, ցուրտ, ճնշող օձը փակ աչքերով ու պապանձուած, անկենդան բերանով—այժմ նա կանգնած էր մահուան դէմ ու դէմ, և չքնաղ պատանեկութիւնը յետ էր դառնում խաղալով: Եւ այդ դեռ աւելի էր, քան չքնաղ պատանեկութիւնը: Ոգու այն զարմանալի, երանաւէտ պայծառութեամբ, որ համակում է մարդուն կեանքի հագուագիւտ ընկալներին և հանում է նրան վեր, դէպի վսեմ հայեցութեան անհասանելի բարձունքները, Վերները յանկարծ տեսաւ և՛ կեանքը, և՛ մահը ու ապշեց շտեմնուած պատկերի հոյակապութեամբ: Կարծես թէ գնում էր բարձր, նեղ, դանակի բերանի պէս սուր լեռնաշղթայի վրայով և տեսնում էր մի կողմում կեանքը, միւս կողմում մահը, ինչպէս երկու խոր, փայլուն ու գեղեցիկ ծովեր, որոնք միանում են հորիզոնում և կազմում մի անսահման, լայն ընդարձակութիւն:

— Սյա ի՞նչ է: Ո՛րպիսի դիւթիչ տեսարան է, — դանդաղ արտասանեց նա, կամաց բարձրանալով փոքր ինչ և ուղղուելով, կարծես ակնածելով մի վերին էակի ներկայութիւնից: Եւ ոչնչացնելով պատերը, տարածութիւնն ու ժամանակը խորաթափանց հայեացքի ուժգնութեամբ, հեռու նայեց այն կեանքի խորքը, որից հեռանում է:

Եւ կեանքը նոր երեսաց: Էլ չէր աշխատում առաջուայ պէս տեսածը բառերով ապաւորել, ասենք մարդկային գեռ խեղճ ու աղքատ լեզուն այնպիսի բառեր էլ չունէր: Այն փոքրիկ, կեղտոտ ու չար բանը, որ նրա մէջ շարունակատելութիւն էր զարթեցնում դէպի մարդիկ և ժամանակ առ ժամանակ նոյնիսկ զգո՞ւանք էր յարուցանում նրա մէջ դէպի մարդկային կերպարանքը, խապառ չքացաւ. այդպէս չքանում է օդապարիկով բարձրացող մարդու համար ներքեում թողած քաղաքի նեղ փողոցների աղբն ու ցեխը, և այլանդակը գեղեցիկ է դառնում:

Անգիտակցաբար մօտեցաւ աթոռին և աջ ձեռքով յենուեց նրա վրայ: Բնութիւնից հպարտ ու հզօր, նա դեռ երբէք այդպիսի հպարտ, հզօր ու ազատ դիրք չէր ընդունել, այդպէս չէր նայել ու չէր թեքել պարանոցը, — որովհետեւ երբէք այնպէս հզօր ու ազատ չէր եղել, ինչպէս այստեղ բանտում, ուր նրան մահից ու կախաղանից մի քանի ժամն է բաժանում միայն:

Եւ նոր երևացին նրան մարդիկ, մինոր տեսակի գեղեցկութիւն ու գրաւչութիւն ստացած, նրա պայծառացած հայեացքի առաջ: Սաւառներով ժամանակից վեր, նա պարզ տեսաւ, թէ որքան երիտասարդ է մարդկութիւնը, որ դեռ երէկ, որպէս գազան ոռնում էր անտառներում. և այն, ինչ որ մարդկանց մէջ սարսափելի, աններելի ու գարշելի էր երևում, յանկարծ դուրեկան դարձաւ, — ինչպէս դուրեկան է երեխայի անգօրութիւնը՝ հասակաւորի պէս քայլել, նրա անկապ թոթովանքը՝ հանճարի կայծերով փայլող, նրա՝ ծիծաղելի անզգուշութիւնները, սխալները և ծանր խեղումները:

— Սիրելիներս, — յանկարծ անսպասելի կերպով արտասանեց Վերները ժպտալով և միանգամից կորցրեց իր յարզանք ազդող դիրքի ամբողջ նշանակութիւնը, դարձաւ կրկին բանտարկեալ, որ փակուած է նեղ ու անյարմար դրութեան մէջ, և մի քիչ սրտնեղում է պահապանի ձանձրացնող ու հետախոյզ աչքից, որ շարունակ երևում է դոսան մակերևոյթի վրայ: Զարմանալի է, համարեա ընդհանրապէս նա մոռացաւ այն, ինչ որ հէնց նոր տեսաւ այնպէս պարզ ու մեկին. և աւելի զարմանալի, որ նոյնիսկ չփորձեց յիշել այն: Այլ ուղղակի աւելի յարմար կերպով նստեց, չտալով մարմինն սովորական գօրութիւն արտայայտող դիրքը և մի խորթ, ոչ վերներական, լճոյլ ու քրնքոյշ ժպիտով դիտեց պատերն ու վանդակները: Դարձեալ մի նոր բան, որ երբէք Վերների հետ չէր պատահել՝ յան-

կարծ սկսեց լաց լինել:

— Իմ սիրելի ընկերներ,— շնչում էր նա և դառն արտասուում: — Իմ սիրելի ընկերներ:

Որպիսի անյայտ ճանապարհներով եկաւ նա անսահման, հպարտ ազատութեան զգացումից այդ քնքոյշ ու կաթոգին խղճահարութեան: Նա չգիտէր և չէր էլ մտածում այդ մասին: Խղճում էր իր սիրելի ընկերներին, թէ մի ուրիշ աւելի վսեմ ու բուռն զգացում էին թագցնում իրենց մէջ նրա արցունքները, այդ էլ չգիտէր նրա յանկարծ յարութիւն առած ու կանաչած սիրտը: Լալիս էր ու շնչում:

— Իմ սիրելի ընկերներ: Դուք, իմ սիրելի, թանկագին ընկերներ:

Այդ դառնապէս արտասուող ու արտասուքների միջից ժպտացող մարդու համար ոչ ոք չէր ասի, թէ այն սառն ու գոռոզ, յոգնած ու խիզախ Վերներն է— ոչ դատաւորները, ոչ ընկերները և ոչ նա ինքը:

11. ՆՐԱՆՅ ՏԱՆՈՒՄ ԵՆ.

Նախ քան դատապարտեալներին ծածկակառքերի մէջ տեղաւորելը, հինգին էլ հաւաքեցին մի մեծ, ցուրտ սենեակի մէջ, կամարած և առաստաղով, որ նման էր դիւանատան, ուր այլևս չեն աշխատում, կամ մի դատարկ ընդունարանի: Եւ թոյլ տուին իրար հետ խօսելու:

Բայց միայն Տանիա Կովալչուկն իսկոյն օգտուեց թոյլտուութիւնից: Միւսները լուռ, ամուր սեղմեցին միմեանից ձեռքերը, սառն՝ ինչպէս սառուց և տաք՝ ինչպէս կրակ— և աշխատելով չնայել իրար, լուռ խմբուեցին անյարմար կերպով միմեանցից հեռու-հեռու: Այժմ, երբ նը-

րանք միասին էին, կարծես ամեն մէկը ամաչում էր իր մենակութեան մէջ զգացածից. և վախենում էին նայել, որ չտեսնեն, ցոյց չտան այն նոր, առանձնայատուկ, փոքր ինչ ամօթալի բանը, որ իւրաքանչիւրը զգում կամ ենթադրում էր իր մէջ:

Բայց մէկ նայեցին, մէկ էլ նայեցին, ժպտացին և միանգամից զգացին նախկին ազատ, պարզ վերաբերմունքը. ոչ մի փոփոխութիւն չէր եղել. եթէ մի բան էլ եղել էր, այնպէս հաւասարաչափ տարածուել էր բոլորի վրայ, որ ամեն մէկի համար առանձին, աննկատելի էր դարձել: Ամենքը խօսում և շարժուում էին տարօրինակ ձևով— ուժգին թափով, ընդհատ-ընդհատ, կամ խիստ դանդաղ, կամ խիստ արագ. երբեմն շնչասպառ խեղդում էին, Կուլ տալիս բառի մի մասը, նորից մի քանի անգամ կրկնում, երբեմն էլ կիսատ էին թողնում սկսած խօսքը կամ կարծում էին, թէ արդէն վերջացրել են ու չէին նկատում այդ: Ամենքն աչքերը կկոցելով, հետաքրքրութեամբ, կարծես չճանաչելով, դիտում էին սովորական իրերը, այն ակնոցաւոր մարդկանց պէս, որոնք յանկարծ հանել էին ակնոցները: Ամենքը շուտ շուտ և յանկարծակի յետ էին դառնում, կարծես մէկը յետեից շարունակ կանչում ու ինչ որ բան էր ցոյց տալիս: Բայց իրենք այդ էլ չէին նկատում: Մուսիայի ու Տանիա Կովալչուկի այտերն ու ականջները վառում էին. Սերգէյն սկզբում փոքր ինչ դժգոյն էր, բայց շուտով ուշքի եկաւ և սովորական տեսքն ստացաւ:

Միայն Վասիլին էր, որ գրաւում էր ամենքի ուշադրութիւնը: Նոյնիսկ ընկերների մօտ նա տարօրինակ և սարսափելի տեսք ունէր: Վերները շարժուեց և քնքոյշ անհանգստութեամբ կամաց ասաց Մուսիային.

— Այս ի՞նչ է Մուսեչկա: Մի՞թէ նա... հա՛: Ի՞նչ: Պէտք է նրա մօտ գնալ:

Վասիլին հեռուից, կարծես չճանաչելով, նայեց Վեր-
ներին և աչքերը խոնարհեց:

— Վասիա, ի՞նչ է եղել մազերդ: Տօ, ի՞նչ ես անում:
Ոչինչ, եղբայր, ոչինչ, շուտով կը վերջանայ: Պէտք է ամուր
ֆնալ, պէտք է, պէտք է:

Վասիլին լուռ էր: Եւ երբ արդէն թւում էր, որ նա
բոլորովին ոչինչ չի ասի, յանկարծ լուռեց խուլ, ուշացած,
չափազանց հեռուից հնչող պատասխանը— այդպէս կարող
էր պատասխանել հարցին գերեզմանը.

— Ես, ոչինչ: Ես ամուր եմ:

Ու կրկնեց.

— Ես ամուր եմ:

Վերներն ուրախացաւ:

— Այ, այ: Ապրես, այդպէս, այդպէս:

Բայց տեսաւ խոր, հեռուից եկող նրա մութ, ծան-
րացած հայեացքը և մի վայրկեան վշտացած մտածեց՝
այդ սրտեղից է նայում: Ո՞րտեղից է խօսում: Եւ անսահ-
ման քնքշութեամբ, ինչպէս խօսում են միայն գերեզմանի
հետ, ասաց.

— Վասիա, լսում ես: Ես քեզ շատ եմ սիրում:

— Ես էլ քեզ շատ եմ սիրում, — պատասխանեց լեզուն
հազիւ-հազ շարժուելով:

Յանկարծ Մուսիան բռնեց Վերների ձեռքը և, դար-
մանքի արտայայտութեամբ, գերաստնուհու պէս ուժգին
ձայնով ասաց.

— Վերներ, ի՞նչ պատահեց քեզ: Դու ասացիր սիրում
եմ: Դու երբէք ոչ ոքի չէիր ասում՝ սիրում եմ: Ինչո՞ւ
դու ամբողջովին այդպէս... զուարթացել, մեղմացել ես:
Հ՞ր, ի՞նչ:

— Հ՞ր, ի՞նչ:

Վերներն էլ գերասանի նման, նոյնկերպ ուժգին ար-
տայայտելով այն, ինչ որ զգում էր, ամուր սեղմեց
Մուսիայի ձեռքը.

— Այո, ես այժմ շատ եմ սիրում: Ուրիշներին մի ասիր,
հարկաւոր չէ, ամօթ է, բայց ես շատ եմ սիրում:

Հայեացքները հանդիպեցան իրար, բոցավառուեցին և
շուրջն ամեն ինչ հանգաւ. այդպէս կայծակի վայրկենա-
կան փայլի մէջ մարում են բոլոր այլ կրակները, և ինքը
ծանր ու զեղին բոցը ստուեր է ձգում երկրի վրայ:

— Այո, ասաց Մուսիան: — Այո, Վերներ:

— Այո, պատասխանեց նա: — Այո, Մուսիա, այո:

Իրանք միայն հասկացան և անհողող որոշեցին: Եւ
բոցափայլ աչքերով Վերները նորից շարժուեց և արագ-
արագ մօտեցաւ Սերգէյին:

— Սերեօժա:

Բայց պատասխանեց Տանիա Կովալչուկը: Հիացմուն-
քով, մայրական հպարտութիւնից համարեա լաց լինելով,
նա կատաղաբար քաշում էր Սերգէյի թևից:

— Վերներ, լսիր: Ես նրա համար լալիս եմ, հոգիս է
դուրս գալիս, իսկ նա — մարմնամարդութեամբ է պարապում:

— Ըստ Միւլլերի, — ժպտաց Վերները:

Սերգէյն ամօթից դէմքը կնճռեց:

— Իզուր .ես ծիծաղում, Վերներ: Ես վերջնականա-
պէս համոզուեցի...

Բոլորը ծիծաղեցին: Իրար հետ խօսելով նրանք կա-
մաց-կամաց ոյժ ու ամբողջիւն ձեռք բերին և դարձան
էլի այն, ինչ որ առաջ էին, բայց երբէք այդ չէին նկա-
տում և կարծում էին, թէ նոյնն են մնացել: Յանկարծ
Վերները ծիծաղը ընդհատեց և ամենայն լրջութեամբ
ասաց Սերգէյին.

— Իրաւունք ունիս, Սերեօժա: Դու միանգամայն
իրաւունք ունիս:

— Չէ, ախար լսիր, — ուրախացաւ Գոլովինը, — ի հար-
կէ մենք...

Բայց այստեղ առաջարկեցին գնալ: Եւ այնքան բարի

եղան, որ թոյլ տուին տեղաւորուել զոյգ-զոյգ, ինչպէս ուզում են: Եւ առհասարակ շատ, նոյնիսկ չափազանց սիւրալիք էին. ոչ այն է թէ աշխատում էին մարդկային վերաբերմունք արտայայտել, ոչ այն, թէ ցոյց տան, որ իրենք այստեղ բոլորովին չկան, այլ ամեն ինչ ինքն իրեն է կատարում: Բայց դժգոյն էին:

— Դու, Մուսիա, նրա հետ, — ցոյց տուեց Վերները Վասիլիին, որ անշարժ կանգնել էր:

— Հասկանում եմ, — գլուխը թոթուեց Մուսիան: — Իսկ դու:

— Ե՛ս: Տանիան Սերգէյի հետ, դու Վասիայի հետ... Ես մենակ: Այդ ոչինչ, դու գիտես, որ ես կարող եմ:

Երբ դուրս եկան բակը, խոնաւ մթութիւնը մեղմօրէն, բայց տաքուկ ու թափով խփեց նրանց դէմքին, աչքերին, մի բոպէ կարեց շունչը, յանկարծ քնքշօրէն ներս սողաց մարմնի ծակոտիներից ու մի սառսուռ բերեց վրաները: Դժուար էր հաւատալ, թէ այդ զմայլելին միայն քամին էր, գարնան տաք, խոնաւ քամին: Եւ գարնանային իսկ որ զարմանալի գիշերը հալչող ձիւնի ու անսահման լայնարձակութեան հօտը բուրեց: Ու հնչեցին թափուող կաթիլները: Իրար անցնելով, իրար յետևից վազելով, արագ-արագ թափուում էին շտապող ու առատ կաթիլները և միահամուռ հնչունով երգ էին յօրինում. բայց ահա յանկարծ կաթիլներից մէկը շփոթուեց, ուշացաւ ու ձայները խառնուեցին, ուրախ ձայնալացին ու իրար անցան: Ապա մէկ էլ տեսար մեծ, գաժան կաթիլն ամուր խփեց, և ահա նորից պարզ ու ոլորուն հնչեց գարնանային շտապ երգը: Եւ բարձրում, քաղաքի վրայ, բանտի տանիքից վեր, ցուում էր ելեկտրական կրակների դժգոյն ցոլքը:

— Օխո՛ս, — լայն կրծքով շնչեց Սերգէյ Գոլովինը և շունչը պահեց, կարծես ափսոսում էր դուրս թողնել թօքերից այդ թարմ ու սքանչելի օդը:

— Վաղճեց է այսպիսի եղանակ անում, — կամեցաւ տեղեկանալ Վերները: — Կատարեալ գարուն է:

— Երկու օր է միայն, — սիրով ու պատրաստակամութեամբ պատասխանեցին նրան: — Թէ չէ առաջ շարունակ սառնամանիքներ էին լինում:

Մէկը միւսի յետևից հանդարտ մօտենում էին մռայլ ծածկակառքերը, վերցնում երկ-երկու հոգի ու կորչում խաւարի մէջ, ուր ձօձում էր դարպասի մօտ լապտերը: Պահապան գինւորները գորշ սիլուէտների պէս շրջապատում էին իւրաքանչիւր կառքը, նրանց ձիերն ամուր խրփում էին գետին իրենց պայտերը և չխկչխկոցով արորում թաց ձիւնը:

Երբ Վերները կռնալով ուզում էր մտնել ծածկակառքի մէջ, ժանդարմն անորոշ կերպով ասաց.

— Այստեղ ձեզ հետ մէկն էլ է գնում:

Վերները զարմացաւ.

— Ո՛ւր: Ո՛ւր է գնում: Ա՛խ, շն: Մէկն էլ հն: Ո՛վ է:

Ձինւորը լուռ էր: Իրօք ծածկակառքի մի անկիւնում մթութեան մէջ կուճ էր եկել ինչ որ փոքրիկ, անշարժ, բայց կենդանի բան, — լապտերի ծուռ շողքի մէջ փայլեց մի բաց աչք: Նստելու ժամանակ Վերներն անուշադրութեամբ դիպաւ նրա ծնկին:

— Ներեցէք, ընկեր:

Նա չպատասխանեց: Միայն երբ կառքը շարժուեց, նա յանկարծ կմկմալով հարցրեց կոտրատուած ուսերէն լեզուով.

— Դուք ո՞վ էք:

— Ես Վերներն եմ, դատապարտուած եմ կախաղանի

№№-ի վրայ մահափորձ անելու համար: Իսկ դճւք:

— Ես Եանսոնն եմ: Ինձ չպէտք է կախել:

Նրանք երկուսն էլ գնում էին, որ երկու ժամից յետոյ կանգնէին անլուծելի դադտնիքի դէմ հանգիման, գր-

նում էին կեանքից դէպի մահ—և ծանօթանում էին: Երկու մակերևոյթի վրայ միաժամանակ գնում էին կեանքն ու մահը, և մինչև վերջը իր ամենածիծաղելի ու անհեթեթ մանրամասնութիւններով կեանքը մնում էր կեանք:

— Իսկ դուք ի՞նչ էք արել, Եանսոն:

— Ես աղայիս մորթեցի դանակով: Փողերը գողացայ:

Ձայնից այնպէս էր երևում, թէ Եանսոնը քնում է: Մթութեան մէջ Վերները գտաւ նրա թուլացած ձեռքը և սեղմեց: Եանսոնը նոյնպէս թոյլ-թոյլ ձեռքը յետ քաշեց:

— Սարսափում ես,— հարցրեց Վերները:

— Ես չեմ ուզում:

Նրանք լռեցին: Վերները նորից գտաւ էստոնցու ձեռքը և ամուր սեղմեց իր չոր ու ջերմ ափերի մէջ: Եանսոնն էլ չփորձեց յետ քաշել, այլ թողեց, որ մնայ անշարժ տախտակի պէս:

Ծածկակառքի մէջ ասթ էր ու նեղուածք, զինւորական մահուդի, նեխուած աղբի և թաց կոշիկների կաշու հոտ էր գալիս: Վերների դէմ նստած երիտասարդ ժանդարմը տաք-տաք շնչում էր նրա վրայ և բերանից սոխի ու էթանագին ծխախոտի հոտ էր գալիս: Բայց ինչ որ ձեղքերից ներս էր մտնում սուր ու թարմ օդը, և այդ պատճառով փոքրիկ, նեղիկ, շարժւող արկղի մէջ գարունն աւելի էր զգալի, քան դուրսը: Վառքը մերթ աջ էր ծռուում, մերթ ձախ, մերթ կարծես յետ էր դառնում. երբեմն այնպէս էր թւում, թէ ամբողջ ժամերով նրանք, չզիտես ինչո՞ւ, պտոյտ են անում միևնոյն տեղում: Սկզբում պատուհանների ցած ձգած թանձր վարագոյրների միջից ներս էր ընկնում ելեկտրական կապտաւուն լոյսը, յետոյ յանկարծ մի պտոյտից յետոյ մթնեց, և միայն դրանից կարելի էր հասկանալ, որ նրանք ծուռեցին դէպի փողոցի խուլ ծայրը և մօտենում են Ս-սկիյ կայարանին: Երբեմն թէք պտոյտների ժամանակ Վերների կենդանի,

ծուռած ծունկը բարեկամաբար դիպչում էր ժանդարմի նոյնպիսի կենդանի ու ծուռած ծնկան, և դժուար էր լինում հաւատալ մահուան:

— Մենք սըր ենք գնում,— հարցրեց յանկարծ Եանսոնը: Մութ արկղի մէջ երկարատե, ոլոր-մոլոր շրջումներից նրա գլուխը փոքր ինչ պտոյտ էր գալիս, և սիրտը խաւնում:

Վերները պատասխանեց և աւելի ամուր սեղմեց էստոնցու ձեռքը: Նա ուզում էր մի աւելի բարեկամական ու փաղաքշական բան ասել այդ փոքրիկ ու քնկոտ մարդուն և արդէն այնքան էր սիրում նրան, որքան ոչ ոքի իր կեանքում:

— Սիրելիս, կարծես տեղդ անյարմար է: Այս կողմ քաշուիր, մօտս արի:

Եանսոնը լռեց և ապա պատասխանեց.

— Լաւ, շնորհակալ եմ: Տեղս լաւ է: Քեզ էլ պիտի կախեն:

— Ինձ էլ, — անսպասելի ուրախութեամբ, համարեա ծիծաղով պատասխանեց Վերները և մի առանձին զուարթութեամբ շարժեց ձեռքը: Կարծես խօսքը մի անմիտ ու անհեթեթ հանաքի մասին էր, որ ուզում են խաղալ նրա գլխին՝ սիրելի, բայց միամիտ ու ծիծաղելի մարդիկ:

— Կին ունի՞ս,— հարցրեց Եանսոնը:

— Չէ: Կինս սրն է: Ես մենակ եմ:

— Ես էլ եմ մենակ:

Վերների գլուխն էլ սկսում էր պտտուել: Երբեմն այնպէս էր թւում, թէ նրանք գնում են ինչ որ տօնախմբութեան. տարօրինակ է, բայց համարեա բոլոր գաղապարտեալները նոյնն էին զգում և վշտի ու սարսափի հետ միասին անսրոշ կերպով ուրախանում էին այն անսովոր բանի համար, որ շուտով պիտի կատարուէր: Իրականութիւնը յագեւում էր խելայեղութեամբ և ուրուականներ

էր ծնում մահը, որ զուգորգուել էր կեանքի հետ: Թւում էր, որ իրօք այդ բուսկին ծածանում էին աների վրայ գրօշակները:

Ծածկակառքը կանգ առաւ:

— Ահա և հասանք, — ասաց Վերներն ուրախ և հետաքրքրութեամբ ու արագութեամբ դուրս թռաւ: Իսկ Եանսոնն այնքան էլ հեշտութեամբ դուրս չեկաւ: Լուռ ու մունջ և հեղգօրէն յամառում էր և չէր ուզում դուրս գալ: Չեռքը ձգում էր դռան բռնատեղիին — ժանդարմը սեղմում է նրա անգօր մասները և պոկում է ձեռքը ձրգում է անկիւնին, դռան, բարձր անիւին — և նոյն բուսկին էլ բաց է թողնում, երբ ժանդարմը մի փոքր ոյժ է գործ դնում: Նոյն իսկ չէր բռնում, այլ քնաթօթախ կաշում էր իւրաքանչիւր առարկայի և պոկ էր գալիս հեշտութեամբ ու առանց ճիգ թափելու: Վերջապէս վեր կացաւ:

Գրօշակներ չկային: Կայարանը մութն էր, դատարկ, անկենդան, ինչպէս առհասարակ լինում է գիշերները. մարդատար գնացքներ էլ չէին մեկնում, իսկ այն գընացքի համար, որ ճանապարհի վրայ լռելեայն սպասում էր այդ ճանապարհւորներին, հարկաւոր չէր ոչ վառ կըրակներ և ոչ իրարանցում: Եւ յանկարծ Վերները մի ձանձրոյթ զգաց, ոչ սարսափ, և ոչ անձկութիւն, այլ մի մեծ, կատարելապէս ծանր ու մաշող ձանձրոյթ, որից մարդ ուզում է փախչել, երեսի վրայ ընկնել, աչքերը փակել: Վերները ձգուեց և երկար յօրանջեց: Չգուեց նաև Եանսոնը և մի քանի անգամ իրար յետեից արագ-արագ յօրանջեց:

— Գոնէ շուտ անէին, — ասաց Վերները յոգնած, Եանսոնը լուռ կուճ էր գալիս:

Երբ դատապարտեալները, զինուորներով շրջապատուած, ամայի պատֆորմի վրայով շարժուում էին դէպի լուսաւորուած վագոնները, Վերները նկատեց, որ իր կող-

քից գնացողը Սերգէյ Գոլովինն էր. վերջինս, մասնացոյց անելով հետու մի ինչ որ բանի վրայ, սկսեց խօսել և պարզ լսելի եղաւ միայն «լապտեր» բառը, իսկ վերջաւորութիւնը կորաւ մի երկարատև ու յոգնած յօրանջի մէջ:

— Ինչ ես ասում, — հարցրեց Վերներն ու նոյնպէս յօրանջեց:

— Լապտերը: Ճրագը բարձրացել է, — ասաց Սերգէյը: Վերները յետ նայեց. իսկապէս լապտերի ճրագը խիստ բարձրացել էր և սևացրել ապակու վերին մասերը:

— Այո, բարձրացել է:

Եւ յանկարծ մտածեց՝ ասենք իմ ինչ գործն է, թէ ճրագը բարձրացել է, երբ... Երևի նոյնն անցաւ և Սերգէյի մաքով. արագութեամբ նայեց Վերներին ու շուռ եկաւ: Բայց երկուսն էլ այլ ևս չէին յօրանջում:

Մինչև վագոններն ամենքը գնում էին իրենք իրենց, միայն Եանսոնին ստիպուած էին քաշ տալ թևերից. սկզբում նա ոտքերը գետնին պինդ հուպ էր տալիս, յամառում, կարծես ներբանները կայցնում էր պատֆորմի տախտակներին, յետոյ ծնկները ծռեց և կախ ընկաւ ժանդարմների թևերից և սկսեց հարբած մարդու պէս ոտքերը քաշ տալ ու նրանց ծայրերով փայտը քերել: Վագոնի դռնից էլ լուռ ու երկար շարշարուելուց յետոյ միայն կարողացան մի կերպ ներս խոթել:

Առանց օգնութեան գնում էր նաև Վասիլիյ Կաշիրինը, անգիտակցաբար ընդօրինակելով ընկերների շարժումները — ամեն ինչ անում էր այնպէս, ինչպէս նրանք: Բայց վագոն բարձրանալիս նա յետ-յետ ընկաւ, այնպէս որ ժազարմը բռնեց նրա արմունկից, որ օգնէ, — Վասիլին դողաց և ձեռքը յետ քաշելով մի սուր ճիչ արձակեց:

— Այո:

Վասիլա, ինչ պատահեց, — մօտ վագեց Վերները: Վասիլին լուռ էր և ծանր օրօրում էր: Ժանդարմը շփոթուած ու նոյն իսկ նեղացած բացատրեց:

— Ես ուզում էի օգել, իսկ նա . . .

— Գնանք, Վասիա, ես քեզ կ'օգնեմ, — ասաց Վերնե-
րը և ուզում էր նրա թևը մտնել: Բայց Վասիան կրկին
ձեռքը յետ քաշեց և աւելի բարձր ճշաց:

— Այ:

— Վասիա, այդ ես եմ, Վերները:

— Գիտեմ: Ձեռք մի տուր ինձ: Ես ինքս . . .

— Եւ, երերալով, առանց օգնութեան, մտաւ վագոն
ու նստեց մի անկիւնում: Վերները մօտեցաւ Մուսիային
և աչքերը ձգելով Վասիլիի վրայ, կամացուկ հարցրեց:

— Ի՞նչպէս էր:

— Շատ վատ, — նոյնպէս կամացուկ պատասխանեց
Մուսիան: Նա արդէն մեռած է: Վերներ, ասա ինձ, մի-
թէ կայ մահ:

— Չգիտեմ, Մուսիա, բայց կարծում եմ, որ չկայ —
պատասխանեց Վերները լուրջ ու մտախոհ:

— Ես այդպէս էլ կարծում էի: Իսկ նա: Հոգիս դուրս
եկաւ կառքի մէջ, կարծես դիակ էր հետինս:

— Չգիտեմ, Մուսիա, գուցէ և մի քանի մարդկանց
համար մահ կայ: Առ այժմ, իսկ յետոյ բոլորովին չի լի-
նի: Այ, ինձ համար էլ կար, իսկ այժմ չկայ:

Մուսիայի փոքր ինչ գծգունած այտերը վառուեցին:

— Կար, Վերներ: Կար:

— Կար: Այժմ չկայ: Ինչպէս և քեզ համար:

Վագոնի դռան մօտ մի աղմուկ լսուեց: Կրունկներն
ամուր-ամուր խփելով բարձրաձայն շնչելով և արագ-արագ
թքելով, ներս մտաւ Միշկա Յիզանը: Աչքերը շուռ ու
մուռ տուեց ու յամառութեամբ կանգ առաւ:

— Էստեղ տեղ չկայ, ժանդարմ, — գոռած նա յոգնած
ժանդարմին, որ բարկութեամբ նայում էր նրան: — Դու
ինձ էնպէս արա, որ տեղս ազատ, արձակ լինի, թէ չէ
չեմ գայ, հա՛, կախիր հէնց այստեղ, ֆոնարից: Կարէս

տուին էլի, շան որդիք, էդ էլ կարէս է, զիբիլի կաշկա է,
ոչ թէ կարէս: Բայց յանկարծ գլուխը խոնարհեց, պարա-
նոցը ձգեց և այդպէս առաջ գնաց դէպի միւսները: Գրգ-
զըզուած մազերի ու միրուքի շրջանակի մէջ սև աչքերը
նայում էին սուր, վայրենի հայեացքով և փոքր ինչ խենդ
արտայայտութեամբ:

— Հա՛, պարոններ, — ձայնը երկարացրեց նա: — Այ,
թէ ինչ: Բարի լոյս, աղա:

Ձեռքը պարզեց Վերներին ու նստեց նրա դիմաց:
Ապա գլուխը մօտեցրեց, աչքով արեց և արագ շարժու-
մով ձեռքը պարտնոցին տարաւ:

— Ձեզ է՛լ: Հա՛:

— Մեզ էլ, — ժպտաց Վերները:

— Ե՛ս,՝, եանի բոլորի՞դ:

— Բոլորիս:

— Օհօ, — ատամները բաց արեց Յիզանը և արագ դի-
տեց բոլորին, մի բոպէ աւելի երկար կանգ առնելով Մու-
սիայի և Եանսոնի վրայ: Եւ նորից աչքով արեց Վերներին:

— Մինիսարի՞ն:

— Մինիսարին: Իսկ դո՞ւ:

— Ես, աղա, ուրիշ գործով: Մենք սուր, մինիսարը սուր:
Ես, աղա, աւաղակ եմ, այ, թէ ով եմ ես: Մարդասպան
եմ: Վնաս չունի, աղա ջան, քիչ գէնը քաշուիր, ինչ ա-
նենք, իմ կամքով չէ, որ ձեր խմբի մէջ ընկայ: Էն աշ-
խարհում բոլորիս էլ տեղ կը լինի:

Նա զգզուած մազերի տակից վայրենու պէս մի
արագ կասկածոտ հայեացք ձգեց բոլորի վրայ: Բայց ա-
մենքը նայում էին նրան լուռ, լուրջ և նոյն իսկ կարծես
կարեկցաբար: Յիզանն ատամները բաց արեց և մի քանի
անգամ արագ-արագ խփեց Վերների ծնկին:

— Այդպէս էլի, աղա: Ոնց որ երգն է ասում՝ մի խըշ-
շայ, կանաչ անտառ:

— Ինչո՞ւ ես ինձ աղա ասում, երբ մենք բոլորս...

— Գրուստ է,— մեծ բաւականութեամբ համաձայնեց Յիգանը:— Էլ ի՞նչ աղա ես, որ իմ կողքին պիտի կախ ընկնես: Այ թէ աղան ո՞վ է,— մատը տնկեց նա լուռ ժանդարմի վրայ:— Է, ձերոնցից էն մէկը ասես թէ մի քիչ... էնպէս... հո՞, — ցոյց տուեց նա աչքերով Վասիլիին:— Աղա, այ աղա, վախճում ես, հո՞:

— Ոչինչ,— պատասխանեց դժուարութեամբ շարժւող լեզուն:

— Դէ, էլ ոչինչը որն է: Չէ, մի ամաչիր, էստեղ ամաչելու բան չկայ: Էդ շունն է, երբ տանում են կախելու պոչը խաղացնում է և ատամները բաց է անում, իսկ դու հօ մարդ ես: Իսկ է՞ն ով է, լողականը: Չերոնցից չի՞:

Նա շարունակ աչքը թոցնում էր մէկի վրայից միւսին և չպապանելով թքում էր ու թքում վազող, քաղցր լորձոնքը: Եանսոնը, որ անշարժ գնալի պէս կձկուել էր անկիւնում, փոքր ինչ շարժեց բուրդը թափած գլխարկի տակնջները, բայց ոչինչ չպատասխանեց: Նրա տեղ սպասասխանեց Վերները:

— Տիրոջն է մորթել:

— Յիսուս Գրիստոս,— գարմացաւ Յիգանը:— ախար սնց են թողնում, որ էդպիսիները մարդ մորթեն:

— Վազուց արդէն աչքի տակով Յիգանը նայում էր Մուսիային. և այժմ, յանկարծ շուռ գալով, ուղղակի սևեռեց աչքերը նրա վրայ:

— Օրիորդ, այ օրիորդ: Դու էդ ի՞նչ: Թշերը կարմիր, ինքն էլ ծիծաղում է: Մի տես է, դրուստ որ ծիծաղում է,— ամուր բռնեց նա Վերներին ծունկը իր երկաթէ մատներով:— Մի տես, տես:

Մուսիան կարմրելով ու մի քիչ շփոթուած ժպտալով դէմքին, նայեց նոյնպէս ուղիղ նրա սուր, մի քիչ խենդ, ծանր ու վայրենի հարց արտայայտող աչքերին:

Բոլորը լուռ էին:

Ընդհատ-ընդհատ աղմկում էին անիւները, կարծես մեծ գործի վրայ էին, փոքրիկ վագոնները թուշկոտում էին նեղ երկաթների վրայով և աշխոյժով առաջ էին վազում: Ահա ոլորապտոյտի, թէ բնակութեան մօտ թոյլ, բայց եռանդով սուլեց փոքրիկ շոգեմեքենան— մեքենավարը վախենում էր չլինի թէ մէկը գնացքի տակն ընկնի: Եւ զարհուրում էիր մտածելով, որ նոյնիսկ մարդկանց կախելը կատարում է նոյն սովորական ճշտապահութեամբ, եռանդով ու ջանասիրութեամբ և որ երկրի վրայ կատարող ամենախելագար գործն անգամ արւում է այդպիսի պարզ ու խելացի կերպով: Վազում էին վագոնները, նըրանց մէջ նստել էին մարդիկ, ինչպէս միշտ նստում են, և գնում էին, ինչպէս սովորաբար գնում են. յետոյ գընացքը կանգ կ'առնի, ինչպէս միշտ— «գնացքը կանգնում է հինգ րոպէ»:

Եւ ապա վրայ կը հասնի մահը— յաւիտենականութիւնը— մեծ զաղտնիքը:

12. ՆՐԱՆՑ ԲԵՐԻՆ.

Եռանդով վազում էին փոքրիկ վագոնները:

Մի քանի տարի շարունակ Սերգէյ Գոլովինն իր ծընոդներին հետ ապրել էր այդ ճանապարհի վրայ ընկած ամառանոցներից մէկում, յաճախ գնացել, եկել էր թէ գիշերը, թէ ցերեկը և լաւ ծանօթ էր ճանապարհին: Եւ եթէ աչքերը փակէր, նրան այնպէս կը թուար, որ և այժմ նա տուն է վերադառնում— ուշացել է քաղաքում ծանօթների մօտ և վերադառնում է վերջին գնացքով:

— Այժմ արդէն մօտ ենք,— ասաց նա, աչքերը բաց

անելով և նայելով մութ, վանդակածածկ լուսամտին, որը մի ուրիշին ոչինչ չէր ասի:

Ոչ ոք չչարժուեց ու չպատասխանեց. միայն Յիզանը արագ-արագ, իրար յետևից թքեց քաղցր լորձուկներ և սկսեց շտապ-շտապ աչքերն այս ու այն կողմ գարձնել— զննել պատուհանը, տունը, զինւորին:

— Յուրա է, — ասաց Վասիլիյ Կաշիրինը պինդ, կարծես իսկ որ սառած շրթունքներով. այնպէս արտասանեց այդ բառը, որ դուրս եկաւ՝ ցօօ-զէ:

Տանիա Կովալչուկն անհանգստացաւ:

— Առ էս թաշկինակը, վիզդ կապիր: Տաք թաշկինակ է:

— Վիզը, — անսպասելի կերպով հարցրեց Սերգէյը և ինքն էլ վախեցաւ իր հարցից: Բայց որովհետև ամենքը մտածեցին այդ մասին, ուստի ոչ ոք չլսեց, — կարծես ոչ ոք ոչինչ չասաց կամ բոլորը միասին արտասանեցին միևնոյն խօսքը:

— Վնաս չունի, Վասիա, կապիր, կապիր, տաք կը լինի, — խորհուրդ տուեց Վերները: Ապա դարձաւ Յանսոնին ու քնքշութեամբ հարցրեց.

— Սիրելիս, իսկ դու չե՞ս մըսում:

— Վերներ, գուցէ ծխել է ուզում: Ընկեր, գուցէ գուք ուզում էք ծխել, — հարցրեց Մուսիան: — Մենք ունենք:

— Ուզում եմ:

— Մի ծխախոտ տուր նրան, Սերեօժա, — ուրախացաւ Վերները: Բայց Սերգէյն արդէն հանում էր ծխախոտը: Եւ ամենքը սիրով նայում էին, թէ ինչպէս Յանսոնի մտները բռնեցին ծխախոտը, ինչպէս լուցկին վառուեց, և նրա բերանից դուրս եկաւ կապտաւուն ծուխը:

— Է՛, շնորհակալ եմ, — ասաց Յանսոնը: — Լաւ է:

— Ի՞նչ տարօրինակ է, — ասաց Սերգէյը:

— Ի՞նչն է տարօրինակ, — յետ դարձաւ Վերները: — Ի՞նչն է տարօրինակ:

— Այո, ծխախոտը:

Բռնել էր ծխախոտը, սովորական ծխախոտը, սովորական կենդանի մատների մէջ և գոյնը քցած, զարմանքով, նոյնիսկ կարծես սարսափով նայում էր նրա վրայ: Եւ ամենքը աչքերը յառած, նայում էին, թէ ինչպէս բարակ ծխամորձի ծայրից դուրս էր գալիս կապտաւուն ժպտաւէնի պէս՝ ոլորուն ծուխը, ապա մի կողմ էր թեքուում շնչառութիւնից, և թէ ինչպէս մոխիրը հաւաքուում ու մթազնում էր: Հանգաւ:

— Հանգաւ, — ասաց Տանիան:

— Այո, հանգաւ:

— Է՛հ, ինչ անենք, ասաց Վերները, դէմքը կնճոնց, անհանգստութեամբ նայեց Յանսոնին, որի անկենդան ձեռքը ծխախոտի հետ միասին կախ էր ընկել: Յանկարծ Յիզանն արագ յետ դարձաւ, կռացաւ, երեսը մօտեցրեց Վերների երեսին և, ձիու պէս աչքերի սպիտակուցները շուռ ու մուռ տալով, շնչաց.

— Աղա, ի՞նչ ես ասում, էդ պս հապան զինւորներին... հ՞ը... փորձենք:

— Հարկաւոր չէ, — նոյնպէս շնչալով պատասխանեց Վերները: — Խմիր մինչև տակը:

— Ինչո՞ւ որ: Կոխ-դալմադալով աւելի լաւ չի՞ լինի, հ՞ը: Ես նրան, նա ինձ, և հոգոյն հանգուցելոց: Իսկի չես էլ իմանայ, թէ ոնց մեռար:

— Չէ, հարկաւոր չէ, — ասաց Վերները և շուռ եկաւ դէպի Յանսոնը. — սիրելիս, ինչո՞ւ չես ծխում:

Յանկարծ Յանսոնի թարշամած դէմքը խղճալի կերպով կնճուռեց. կարծես մէկը յանկարծ քաշեց այն թելից, որից կախուած էին կնճիոնների շարժումները, և նրանք բոլորը ծուռեցին: Եւ կարծես քնի միջից Յանսոնը մրթմրթաց առանց բառերի չոր, համարեա կեղծ ձայնով.

— Ես չեմ ուզում ծխել: Ը-հ՞ը, ըհ՞ը, ըհ՞ը: Ինձ չպէտք է կախել: Ըհ՞ը, ըհ՞ը ըհ՞ը:

Շրջապատողներն անհանգստացան: Տանիա կովալչուկն առատ արտասուքներ թափելով, նրա թեն էր շոյում և բրդահան եղած գլխարկի ականջներն ուղղում:

—Անուշիկ, աչքիս լոյս, լաց մի լինիր, լաց մի լինիր, անուշիկս: Խեղճ տղայ:

Մուսիան մի կողմն էր նայում: Յիգանը բռնեց նրա հայեացքը և ատամները բաց արեց:

—Այ քեզ մարդ: Չայը խմել է, համա փորը չի տաքացել,—ասաց նա մի կարճ ծիծաղով: Բայց և իւր դէմքը կապտեց, սեացաւ պողպատի պէս, և սկսեց կրճտացնել խոշոր ու դեղին ատամները:

Յանկարծ վագոնները ցնցուեցին ու նկատելի կերպով դանդաղեցրին իրենց ընթացքը: Ամենքը, բացի Եանսոնից ու Կաշիրինից, փոքր ինչ բարձրացան տեղերից, բայց իսկոյն նորից նստեցին:

—Կայարանն է,—ասաց Սերգէյը:

Կարծես մի անգամից բոլոր օդը դուրս քաշեցին վագոնից՝ այնքան դժուար էր շնչել: Մեծացած սիրտը հրում էր կուրծքը, կանգնում կոկորդի առաջ, խենդօրէն շուռ ու մուռ գալիս, սարսափահար ճչում էր լի արիւնոտ ձայնով: Իսկ աչքերը նայում էին ներքև օրօրուդ յատակին, իսկ ականջները լսում էին, թէ ինչպէս քանի գնում՝ աւելի դանդաղ էին պտտւում անիւները—սահում, նորից պտտւում և յանկարծ դադարեցին:

Գնացքը կանգ առաւ:

Քունը համակեց ամենքին: Չէ, սարսափելի չէր, այլ ստուերային, ցնորական ու խորթ. ինքը երազողը մնացել էր մի կողմ, միայն նրա անմարմին ստուերն էր շարժւում, խօսում էր անշուկ, քայլում էր անձայն, տանջւում առանց տանջանքի: Քնի մէջ դուրս էին գալիս վագոնից, հոտհոտում էին անտառից փչող թարմ, գարնանային օդը: Քնի մէջ մի բուրբ ու անուժ զիմաղբութիւն ցոյց տուեց

Յանսոնը, և նրան լուռ քաշ տուին վագոնից գուրս:

Յած իջան աստիճաններից:

—Միթէ ոտով,—հարցրեց մէկը, համարեա ուրախաձայն:

—Մի երկու քայլ է,—պատասխանեց մի ուրիշը, նոյնպէս ուրախ:

Ապա մի մեծ, մռայլ ու լուռ խմբով սկսեցին անցնել անտառի միջից գարնանային անհարթ, թաց ու կակող ճանապարհով: Ձիւնածածկ անտառից բուրում էր թարմ, առողջարար օդ. մէկ էլ յանկարծ ոտքը սահում էր, երբեմն ձիւնի մէջ խրւում և ձեռքերն ակամայ տաքածւում էին դէպի ընկերները. ամուր շնչելով, գժուարութեամբ քայլում էին պահապան զինւորները: Մէկը քարկացած ձայնով ասաց.

—Չէին կարող ճանապարհը մաքրել: Արի ու թաւալ գալով անցիր ձեան միջից:

Մէկը մեղապարտի պէս սկսեց արդարանալ:

—Մաքրել են, ձերդ մեծապատուութիւն: Միայն թէ հալնոց է, ինչ կարող ես անել:

Գիտակցութիւնը յետ էր դառնում, բայց ոչ ամբողջովին, այլ տարօրինակ մասերով: Մերթ յանկարծ միաբը գործնականօրէն պնդում էր.

—Իրօք, չէին կարող մաքրել ճանապարհը:

Մերթ նորից մարում էր ամեն ինչ և մնում միայն հոտոտելիքը.—օդի, անտառի, հալչող ձիւնի անտանելի—պարզ բուրմուռքը. մերթ ամեն ինչ չափազանց օրոշ էր դառնում՝ և՛ անտառը, և՛ զիշերը, և՛ ճանապարհը, և այն, որ նրանց շուտով, այս րոպէիս պիտի կախեն: Մէկ-մէկ լսւում էր ընդհատ ու զսպուած շշուկ:

—Շուտով չորսը կլինի:

—Ասում էի՝ շուտ ենք դուրս գալիս:

—Հինգին է լուսանում:

— Ի հարկէ, հինգին: Դրա համար էլ պէտք էր...
 Մթութեան մէջ հարթավայրի վրայ կանգ առան: Մի
 փոքր հեռու ձմերային նոսր ու թափանցիկ ծառերի մի-
 ջից երևում էր լուռ շարժւող երկու փոքրիկ լապտեր—
 այնտեղ կախադաններն էին:

- Կրկնակոշիկս կորցրի,—ասաց Սերգէյ Գոլովինը:
- Է՞, — չհասկացաւ Վերները:
- Կրկնակոշիկս կորցրի: Ցուրտ է:
- Իսկ ո՞ւր է Վասիլին:
- Չգիտեմ: Այ կանգնած է:
- Մտայլ ու անշարժ կանգնած էր Վասիլին:
- Իսկ ո՞ւր է Մուսիան:
- Ես այստեղ եմ: Այդ դ՞ու ես, Վերներ:

Սկսեցին աչքերը դէս ու դէն դարձնել, խուսափելով
 սակայն նայել այն կողմ, ուր լուռ ու ամենքի համար
 սարսափելի պարզ շարունակում էին շարժուել փոքրիկ
 լապտերները: Մերկացած անտառը դէպի ձախ կարծես
 աւելի նոսրանում էր և ծառերի միջից հեռում երևում
 էր մի ինչ որ մեծ, սպիտակ ու հարթ բան: Եւ այնտե-
 ղից փչում էր մի խոնաւ քամի:

- Ծոփն է, — ասաց Սերգէյ Գոլովինը, հոտնոտելով և
 աշխատելով բերանով օդը որսալ: — Այնտեղ ծոփն է:
 Մուսիան բացականչեց.
- Ախ իմ սէրը, ազատ, անհուն, ինչպէս ծով:
- Դու այդ ի՞նչ ես ասում, Մուսիա:
- Ախ իմ սէրը, ազատ, անհուն, ինչպէս ծով, չի
 ամփոփի կեանքն իր նեղլիկ ափերով:
- Ախ իմ սէրը, ազատ, անհուն, ինչպէս ծով, — Են-
 թարկուելով այդ ձայնի ու խօսքերի ազդեցութեանը, մտա-
 խոն կրկնեց Սերգէյը:
- Ախ իմ սէրը, ազատ, անհուն, ինչպէս ծով... —
 կրկնեց Վերները և յանկարծ մի գուարթագին դարման-

քով բացականչեց՝ Մուսկա, դու դեռ ինչքան երիտա-
 սարդ ես:

Յանկարծ Վերների հէնց ականջի մօտ լսուեց Յիգա-
 նի տաք ու խեղդւող շնչոցը:

- Ադա, այ ադա, էն անտառ է, հա՛: Տէր Աստուած,
 էն ի՞նչ բան է: Իսկ էնտեղ, էն Փօնարների մօտինն ի՞նչ
 է, կախարան է, ի՞նչ է:
- Վերները նայեց նրո՛ւն— հողեվարքի տառապանքն էր,
 որ մաշում էր Յիգանին:

— Պէտք է մնաս բարով ասել... — ասաց Տանիա Կո-
 վալչուկը:

— Սպասիր, սպասիր, դեռ դատավճիռը պիտի կար-
 դան, — պատասխանեց Վերները: — Իսկ ո՞ւր է Եանսոնը:

Եանսոնը պարկել էր ձիւնի վրայ, իսկ նրա շուրջն
 իրարանցում կար: Յանկարծ փչեց անուշատրի սպիւրաի
 սուր հոտը:

- Իէ, պարոն՝ բժիշկ, շո՛ւտ կը վերջանայ, — հարցրեց
 մէկն անհամբերութեամբ:
- Բան չկայ, հասարակ ուշագնացութիւն է: Սկանջ-
 ները շփեցէք ձիւնով: Նա արդէն հողեվարքի մէջ է, կա-
 րելի է կարգալ:

Լապտերի լոյսն ընկաւ թղթի և առանց ձեռնոցների,
 սպիտակ ձեռքերի վրայ: Թէ ձեռքերը և թէ թուղթը փոքր
 ինչ զոզոզում էին. զոզում էր և ձայնը:

- Պարոնայք, գուցէ դատավճիռը պէտք չէ կարգալ,
 ձեզ արդէն յայտնի է: Ի՞նչ կասէք:
- Պէտք չէ, — ամենքի փոխարէն պատասխանեց Վեր-
 ները, և փոքրիկ լապտերը իսկոյն հանգաւ:

Քահանային նոյնպէս մերժեցին: Եւ լայն ու մռայլ
 սիլուէտը լուռ շտապով յետ քաշուեց ու անհետացաւ:
 Ըստ երևոյթին լուսաբացը մօտ էր. ձիւնը սպիտակեց,
 մթադնեցին մարդկանց կերպարանքները, և անտառը դար-

ձաւ աւելի նոսր, թախծոտ ու պարզ:

— Պարոնայք, պէտքէ գնալ երկու-երկու: Զոյգեր կազմեցէք ինչպէս կուզէք, միայն խնդրում եմ շտապեցէք:

Վերները մատնացոյց արաւ Յանսոնին, որ երկու ժանգարմաների օգնութեամբ արդէն ոտի էր կանգնել:

— Ես նրա հետ, իսկ դու, Սերեօժա, վերցրու վասիլին: Առաջ անցէք:

— Լաւ:

— Իսկ մենք միասին, Մուսեչկա, — հարցրեց Կովալչուկը: — Դէ, համբուրուենք:

Ամենքը շտապով համբուրուեցին միմեանց հետ: Յիգանը համբուրում էր ամուր՝ համարեա ատամներով: Եանսոնը՝ մեղմ ու թոյլ-թոյլ, կիսաբաց բերանով. — սսենք նա երևի չէր էլ հասկանում, թէ ի՞նչ է անում: Երբ Սերգէյ Գոլովինն ու Կաչիրինն արդէն մի քանի քայլ հեռացան, Կաչիրինը յանկարծ կանգ առաւ, գոռաց բարձր ու որոշակի, բայց բոլորովին օտարոտի անձանօթ ձայնով.

— Մնաք բարձով, ընկերներ:

— Երթաս բարով, ընկեր, — պատասխանեցին նրան:

Ու գնացին: Լոց: Ծառերի յետևում փոքրիկ լապտերներն անշարժ կանգ առան: Սպասում էին, թէ անա կը լսուի մի ճիչ, մի ձայն, մի որևէ աղմուկ, բայց այնտեղ լուռ էր և խաղաղ, ինչպէս և այստեղ: Եւ անշարժ էր փոքրիկ լապտերների դեղնաւուն լոյսը:

— Ա՛խ, Տէր Աստուած, — խենդօրէն խոխոսց մէկը: Յետ նայեցին — Յիգանն էր, որ հոգեվարքի տառապանքով մարում էր: — Կախում են:

Շուռ եկան և էլի ամեն ինչ լոց: Յիգանը տանջւում էր և ձեռքերով աշխատում էր օդը բռնել:

— Ախար, էդպէս, սնց կը լինի: Հ՞ը: Բա ես մենակ մնամ: Չէ, միասին աւելի լաւ է: Ախար, էդ սնց կը լինի:

Եւ դողդողացող մատները բաց ու խուփ անելով,

կարծես խաղ անելով բռնեց վերների ձեռքը:

— Ադա, հոգիս, գոնէ դու ինձ հետ, հմ: Աստուած սիրես մի թողնիր ինձ:

Վերները, ցաւելով, պատասխանեց.

— Չեմ կարող, սիրելիս: Ես սրա հետ եմ:

— Ա՛խ, Տէր Աստուած: Դէ ասան մենակ: Ո՞նց կը լինի:

Մուսիան առաջ անցաւ և մեղմ ձայնով ասաց.

— Գնանք ինձ հետ:

— Յիգանը յետ-յետ քաշուեց և աչքերի սպիտակուցը վայրենու պէս շուռ ու մուռ տուեց.

— Քեզ հետ:

— Այո:

— Տեսար: Ի՞նչ պտտիկն է: Բա չէս վախենում: Թէ չէ բան չկայ, ես մենակ էլ կ'երթամ:

— Ո՛չ, չեմ վախենում:

Յիգանն ատամները բաց արեց:

— Տեսար: Ախար ես աւազակ եմ: Չէս զգու՞մ: Թէ չէ, չի ուզի: Ես քեզնից չեմ նեղանայ:

Մուսիան լուռ էր, և լուսաբացի աղօտ շողքի մէջ նրա երեսը թւում էր գունատ ու հանելուկային: Յետոյ յանկարծ, արագ մօտեցաւ Յիգանին և, ձեռքը ձգելով նրա պարանոցը, ամուր համբուրեց շրթունքները: Յիգանը մատներով բռնեց նրա ուսերից, մի քիչ հեռացրեց իրենից, և դողդողալով ու ամուր չրմփացնելով համբուրեց Մուսիայի շրթունքները, քիթն ու աչքերը:

— Գնանք:

Յանկարծ մօտիկ կանգնած զինուորն օրօրուեց, ձեռքերը բաց արեց ու հրացանը վայր ձգեց, բայց չկուսցաւ վերցնելու, այլ կանգնեց մի ըոպէ անշարժ, արագ շուռ եկաւ և, կարծես կուրացած, սկսեց ձիւնի միջով քայլել դէպի անտառ:

— Ո՞ւր, — վախեցած արտասանեց միւսը: — Կանգնիր:

Բայց նա էլի լուռ ու դժուարութեամբ գնում էր խոր ձիւնի միջով. երևի կալաւ մի բանի, ձեռքերը տարածեց և ընկաւ երեսի վրայ: Այդպէս էլ մնաց պարկած:

— Հրացանդ վերցրու, իշու գլուխ: Թէ չէ ես կը վերցնեմ, — խրոխտ ձայնով ասաց Յիզանը: — Մտառութեանդ կարգը չես իմանում:

Նորից շտապ-շտապ սկսեցին վազվզել փոքրիկ լապտերները: Հերթը Վերներին ու Եանսոնին էր հասնում:

— Երթաս բարով, աղա, — գոռաց Յիզանը, — էն աշխարհում ծափ կը լինենք, որ տեսնես, երեսդ շուռ չըտաս հա: Մէկ-մէկ էլ խմելու ջուր բեր — համա էնտեղ պիտի խաշուեմ հա:

— Մնաս բարով:

— Ես չեմ ուզում, — ասաց Եանսոնը հեղգօրէն: Բայց Վերները բռնեց ձեռքից և էստոնցին մի քանի քայլ ինքը կարողացաւ գնալ. յետոյ ըստ երևոյթին նա կանգ առաւ և ընկաւ ձեան վրայ: Կոացան, բարձրացրին ու տարան, իսկ նա ուժասպառ թրպրտում էր տանողների ձեռքերի մէջ: Ինչո՞ւ չէր գոռում: Երևի մոռացել էր, որ ձայն ունի:

Ու նորից անշարժ մնացին դեղնաուուն լապտերները:

— Իսկ ես, Մուսեչկա, ուրեմն մենակ մնացի, — վշտացած ասաց Տանիա Կովալչուկը: — Միասին ապրեցինք և ահա...

— Տանեչկա, հոգիս...

Բայց Յիզանը տաք-տաք միջամտեց: Մուսիայի ձեռքից բռնած, կարծես վախենալով, որ զեռ կարող են խլել իրանից, նա արագ-արագ ու լրջօրէն վրայ բերեց.

— Ախ, օրիորդ: Դու մենակ էլ կարող ես: Քո հոգին մաքուր է, ուր էլ ուզես, մենակ կարող ես: Հասկացար: Համա ես չեմ կարող: Իբրև աւազակ... հասկանում ես: — Չէ, մենակ չի լինի: Դու ո՞ւր ես քշում, կասեն, մարդասպան: Ախար ես ձիեր էլ եմ գողացել, Աստուած վկայ:

Իսկ սրա հետ, ես ո՞նց որ... ոնց որ մանկան հետ, հասկանում ես: Չհասկացար:

— Հասկացայ: Ի՞նչ արած, գնացէք: Արի քեզ մէկ էլ համբուրեմ, Մուսեչկա:

— Համբուրուեցէք, համբուրուեցէք, — խրախուսեց նրանց Յիզանը: — Չերն էգպէս է, դուք պիտի լաւ բաժանուէք:

Մուսիան ու Յիզանը գնացին: Կինը գնում էր զգուշութեամբ, սայթաքելով և ըստ սովորութեան շրջազգեստը բռնելով. ու թին ամուր բռնած, զգուշացնելով և ոտքով ճանապարհը շօշափելով, գէպի մահ էր առաջնորդում նրան տղամարդը:

Կրակները կանգ առան: Տանիա Կովալչուկի շուրջը լուռ էր ու գատարկ: Լուռ էին զինւորները, ամենքը գորշ՝ ծագող օրուայ անգոյն ու խաղաղ լոյսի մէջ:


— Մենակ մնացի, — յանկարծ ասաց Տանիան ու հառաչեց: — Մեռաւ Սերեօթան, մեռաւ և Վերները, և Վասիան: Մենակ մնացի: Ձինւորներ, այ զինւորներ, մենակ մնացի: Մենակ...

Ծովից ծագում էր արևը:

Իրակները գնում էին արկղների մէջ: Ու տարան: Չգուած պարանոցներ. խենդօրէն շուած աչքերով, ուռած — կապտած լեզուներով, որ անծանօթ ու սարսափելի ծաղիկների պէս, դուրս էին ընկել արիւնոտ փրփուրով ցօղուած շրթունքների միջից — լողում էին զիակները գէպի յետ, նոյն ճանապարհով, որով նրանք կենդանի եկել էին այստեղ. Եւ էլի այնպէս փափուկ էր ու բուրափ գարնանային ձիւնը. և էլի այնպէս քնքոյշ էր ու առողջարար գարնանային օդը: Եւ սկին էր տալիս ձիւնի մէջ Սերգէյի կուրցրած թաց, տրորուած կրկնակոշիկը:

Այդպէս էին ողջունում մարդիկ ծագող արևին:





«Ազգային գրադարան»



NL0310533

9877

891.71
U-57